# ԲԱՆԱԼԻ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ


ՅՕՐԻՆԵԱԼ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԷ


*Գին 2 Ֆրանք*




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1870

30

~~100~~

491.99-5
Գ-34

# ԲԱՆԱԼԻ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՅՕՐԻՆԵԱԼ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԷ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1870

A $\frac{T}{1995}$

# ԲԱՆԱԼԻ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

### 1. *Հրահանգ*

*Մթին է բանտ. Աղօտ է լուսին. Թանձր է ձիւն. Լոյծ է անձրեւ. Հաւատարիմ է շուն. Արագ է ձի. Գնդաձեւ է երկիր. Ընդարձակ է ծով. Մահկանացու է մարդ. Զով է ջուր. Թեթեւ է օդ. Սիրելի է առաքինութիւն. Լուսատու է արեգակն. Բարի է Աստուած. Անմահ է հոգի. Նիւթեղէն է մարմին. Կարծր է քար. Պինդ է ցամաք. Սեւ է թանաք. Սպիտակ է ձիւն. Կանաչ է խոտ. Կարմիր է յակինթ. Կապոյտ են երկինք. Բոլորակ է անիւ. Քաղցր է խաղող. Թթու է ազոխ. Թեւաւոր է թռչուն. Թեփամորթ է ձուկն. Չորքոտանի է ոչխար. Երկոտանի է հաւ. Հպարտ է առիւծ. Անագորոյն է վագր. Զազիր է որդն. Արագոտն է նապաստակ. Դիւրաբեկ է եղէգն. Թրծուն է աղիւս. Պարգեւատու է Աստուած. Ձրի են շնորհք։*

## 2. Հրահանգ

Բարձր են երկինք. Լուսաւոր են աստեղք. Բաց էին դրունքն. Նեղ են ճանապարհքն. Հարթ են փողոցքն. Ջինջ է ապակի. Յստակ է ջուր. Առատ է աղբիւրն. Սաստիկ է սովն. Ծանր է ախտն. Կիզիչ է հուր. Անաչառ է դատաւորն. Խիստ է իշխանն. Շքեղ են ապարանքն. Հոյակապ են շինուածքն. Գեղեցիկ է պարտէզն. Բազում է ժողովուրդն. Սակաւ են զինուորքն. Մեծատուն է այրն. Արարիչ է Աստուած. Հոգի են հրեշտակք. Չար են դեւք. Երանաւէտ է դրախտ. Անմեղ են մանկունք. Պատուական է իմաստութիւն. Օգտակար են գիտութիւնք. Պիտանի են եզն, ձի եւ էշ. Ժառանգ են որդիքն. Հնազանդ եղիցին ծառայք. Յաղթող է թագաւորն. Քաջ է զօրավարն. Հաւատարիմ են զինուորքն. Հզօր է առիւծ. Խոնաւ է գետինն. Չոր է փայտն. Մահացու է հիւանդութիւնն. Ծանր է բեռնն. Զգոյշ լերուք. Վստահ լեր. Աղքատ է ժողովուրդն. Մեծատուն են իշխանքն. Ո՞ւր իցէ այրն. Ո՞վ են նոքա. Ո՞վ իցէ մանուկն. Օգտակար է ուսումն. Ատելի է յուլութիւն. Մեծատուն եղեն աղքատք. Ճշմարիտ է պատմութիւնն. Սուտ են վկայութիւնքն. Երկայն է ճանապարհն. Կարճ է ժամանակն։

## 3. Հրահանգ

Արագագիր է դպիրն. Եղջերաւոր են եզն, ոչխար եւ այծ. Ծիրանի է պատմուճանն. Սեաւ են բնակիչքն. Քաջ լերուք. Հնազանդ լեր. Մի լինիր չռայլ. Հաւատարիմ եղիցի. Բարձր է եղեւին. Խոնարհ է

տօսախ. Սպիտակ են ձիւն եւ եղեամն. Լպիրծ է գետինն. Եղուկ եմ. Ողորմելի է. Երանելի ես. Մի լինիր երախտամոռաց կամ ապաշնորհ. Երախտաւոր է այրն. Մեծ էր երամակն. Վկայ եմ ես. Երաշխաւոր ես դու. Դատախազ է նա. Դատաւոր են նոքա. Դահիճ է նա. Վրէժխնդիր է տէր. Ձրի է պարգեւն. Ձիր է այս. Պարգեւ է մատեանն. Ընծայ են պտուղքն.

## 4. Հրահանգ

Խորշելի է այր խաբեբայ. Սիրելի է որդի հնազանդ. Խոտան է գինուոր վատ. Օգտակար է աշխատութիւն համեստ. Վտանգաւոր է մեծութիւն բազում. Վնասակար է ցասումն սաստիկ. Պատկառելի է այր ալեւոր. Մեծարոյ են օրէնք արդարք. Պատժելի է աշակերտ անսաստ. Խոտան է այր քսու. Ահագին է ծովն համատարած. Կատաղի է առիւծ մատակ. Յափշտակիչ են թռչունք գիշակերք. Աստ է դուստր իմ միամօր. Հիւանդ է մայր քո երկիւղած. Վնասակար է գինուոր երկչոտ. Հանճարեղ է որդին երէց. Սիրելի է մանուկ մտավարժ. Զգօն է եղբայր իմ կրտսեր. Պատառատուն է վերարկուն ասուի. Մութ է սենեակն վերին. Ընդարձակ է սրահն ներքին. Վտանգաւոր են տեղիք ամայիք. Անդորր է յոյժ տուն մեր նոր. Յառաջադէմ է մանուկ հլու. Զի՞նչ իցեն բանք սնոտիք. Ապաւէն մեր են լերինք ամուրք. Հովասուն է երկիր ծովեզերեայ. Ախորժելի են պտուղք հասունք. անախորժ են խակքն. Դժուարին է ճանապարհն երկայն ։

## 5. Հրահանգ

Մեծ է տուն իմ. Ընդարձակ է քաղաք ձեր. Լայն

է փողոց մեր. Ուղիղ է ճանապարհ քո. Պտղաբեր է երկիր նոցա. Գիտուն են եղբարք իմ. Յիմար են որդիք ձեր. Անմիտ են ծառայք քո. Տգէտ են բարեկամք քո. Բարձր են տունք մեր. Անուշահոտ է որդի իմ. Տգեղ է դուստր քո. Երկիւղած է մայր իմ. Երկչոտ է եղբայր քո. Ծոյլ է աշակերտ իմ. Կարճ են կեանք մեր. Երկայն են բանք ձեր. Գեղեցիկ է տուն մեր նոր. Պատառատուն են հանդերձք ձեր հինք. Մտավարժ եւ զգօն է որդի քո երէց. Զուարթ է եղբայր իմ կրտսեր. Լուսաւոր է սրահ մեր վերին. Խաւարին է սենեակ նորա ներքին։

## 6. Հրահանգ

Բարձր է տունս այս կամ տունս. Թշնամի են արքս այսոքիկ կամ արքս. Ամայի է երկիրն այն կամ երկիրն. Անդորր է տեղիս. Գեղեցիկ է պարտէզդ այդ կամ պարտէզդ. Հլու են մանկունքն. Հնազանդ են գինուորքս. Սնոտի են բանքդ այդոքիկ կամ բանքդ. Ամուր են պարիսպքն. Յորդ են ջուրքս. Պղտոր է գետն. Հովասուն է տեղիդ. Հասուն են պտուղքս. Լեռնային են կողմանքն. Դաշտային է երկիրս. Դժուարին են ճանապարհքս. Հանճարեղ են բանքդ. Պանդուխտ են արքն։

## 7. Հրահանգ

Նոր է տունն. Հին է եկեղեցին. Թեթեւ են շոգի եւ ծուխ. Ծանր են անձրեւ եւ կարկուտ. Զգայուն, իմաստուն եւ գործօն է հոգի. Տրտում էր կինն. Վշտագին էր մայրն. Զուարթ է քոյրն. Գնայուն են մարդիկ եւ անասունք. Խոնաւ է հողն. Բերրի է եր-

կիրն. Յուռթի է դաշտն. Պտղաբեր են արտն եւ պարտէզ. Հոգի են հրեշտակք. Ջերմ է ձի. Հաւատարիմ է շուն. Հմուտ եւ փորձ է վարդապետն. Կիրթ են աշակերտքն. Վարժ է կառավարն. Դանդաղ է էշ. Արագ է նապաստակ. Բարկ եւ կծու է քացախ. Լոյծ է իւղ. Թանձր է կոգի. Պինդ է փայտ. Կարծր են քար եւ երկաթ. Գնդակերպ է նարինջ. Բոլորշի են սկաւառակ եւ անիւ. Կակուղ է թաթ. Կարծր են սմբակ եւ կճղակ. Թթու է կիտրոն. Շարժուն են բազուկք եւ սրունք. Յեղյեղուկ են լեզու եւ աչք. Հաստ են ատամունք. Հաստուն է պատանին. Խակ է մանուկն. Թռչուն են հաւք. Գնայուն են չորքոտանիք. Արագընթաց են եղջերու եւ նապաստակ. Հզօր է առիւծ. Գիշատիչ եւ անագորոյն է վագր. Հեզ է ոչխար. Հանդարտ է ուղտ. Համբերող է էշ. Հովիւ էր Դաւիթ, եւ եղեւ թագաւոր. Դիւցազն էր Հայկ. Քաջ էր Արամ. Կարող է Աստուած. Հաւատարիմ է պաշտօնեայն. Դժուարին է լեառնն։

Մխամոր է դուստր նորա. Ազնիւ է մատեան ձեր. Պարկեշտ է քոյր քո. Մտավարժ կամ զգօն է մանուկ մեր. Անառակ է որդի նոցա. Օգտակար են մատեանք մեր. Աղքատ է բարեկամ իմ. Հաւատարիմ է շուն մեր. Բարձր են լերինք նորա. Դժուարին է ուսումն քո. Հիւանդ է ծառայ մեր. Տրտում է անձն իմ. Կարճ են կեանք մեր. Բազում է արծաթ քո. Ազնիւ է գինի նոցա. Անչափ է մեծութիւն իմ. Քաջ եւ ժիր է որդի իմ. Պատուական են ակունք քո։ Ապաշնորհ է կին քո. Թոյլ են հանդերձք նոցա. Ճշմարիտ են բանքս. Արդար է ցասումնդ. Մեր է արծաթն. Իմ են մանկունքս. Քո են մատեանքս.

Ո՞վ իցեն կանայքդ. Լի է մառանս. Փոքր է քաղաքս. Չէ ինչ մեծ պարտէզդ. Բարձր են լերինքս. Եղբայր իմ է մանուկդ. Դուստր միամօր է աղջիկդ. Որդիք ձեր են մանկտիս կամ մանկունքս։

## 8. Հրահանգ

Զօրութիւն, *հզօր*, *զօրեղ*, *զօրաւոր*.
Գիտութիւն, *գիտուն*, *գիտակ*, *տգէտ*.
Լոյս, *լուսաւոր*.
Մութ, *մթին*.
Ինչք, *ընչեղ*, *ընչաւէտ*.
Խաւար, *խաւարին*.
Մեծութիւն, *մեծ*.
Մեծութիւն (հարստութիւն), *մեծատուն*.
Խորութիւն, *խոր*, *խորին*.
Եռանդն, *եռանդուն*.
Ջերմութիւն, *ջերմ*, *ջեր*, *ջերին*.
Ջերմն (սրթմն), *ջերմնոտ*.
Ոսկի, *ոսկեղէն*.
Արծաթ, *արծաթի*.
Պղինձ, *պղնձի*.
Կապար, *կապարեայ*.
Ջնջութն, *ջինջ*.
Ջիղ, *ջղուտ*, *ջղեայ* [*եայ*.
Որկոր, *որկորոտ*, *որկոր-*
Հիւսուած, *հիւսուածոյ*, *հիւսկէն*.
Քաղց, *քաղցեալ*.
Ծարաւ, *ծարաւի*.
Նկար, *նկարէն*.
Պատրանք, *պատիր*.
Երգ, *երգեցիկ*.
Գեղ, *գեղեցիկ*, *տգեղ*.
Բազմութիւն, *բազում*.
Աչք, *աչեայ*, *աչեղ*, *աչացու*.
Ակն, *ականի*.
Հաստատութիւն, *հաստատուն*, *հաստ*.
Շէն, *շինական*.
Գիւղ, *գեղջուկ*, *գեղջեայ*.
Պատիւ, *պատուական*, *պատուաւոր*.
Քաղաք, *քաղաքական*, *քաղաքային*, *քաղաքացի*.
Ադամանդ, *ադամանդեայ*.
Ցաւ, *ցաւած*, *ցաւոտ*, *ցաւագին*.
Ոյժ, *ուժեղ*, *ուժգին*, *հուժկու*.

Չիք, չքոյի, չքաւոր.
Խնամք, խնամոտ.
Ճանաչումն, ճանօթ.
Սին, սնոտի.
Սուր, սուրի, սուրեղ, սուրեայ.
Մահ, մահացու, մահկանացու.
Ամօթ, ամօթոյած կամ ամօթխած.
Ջուր, ջրի, ջրեղէն.
Շինութիւն, շէն, անշէն.
Մարտ, մարտիկ.
Գմբէթ, գմբէթեայ, գմբէթարդ.
Ահ, ահեղ, ահաւոր, ահագին.
Ժրութիւն, ժիր. [կան.
Հայր, հայրենի, հայրա-
Մայր, մայրենի, մայրա-
կան.
Քոյր, քուրական.
Կին, կանացի. [առնացի.
Այր, այրական, առնի,
Շունչ, շնչաւոր, անշունչ.
Հոգի, հոգեւոր, հոգեղէն,
հոգեկան.
Մարմին, մարմնաւոր,
մարմնեղէն, մարմնա-
կան, անմարմին.

Միս, մսեղի, մսեղէն,
մսոտ.
Մազ, մազեղէն, մազեայ,
մազեղ.
Շուք, շքեղ, անշուք.
Փառք, փառաւոր.
Իմաստութիւն, իմաստուն
անիմաստ.
Հանճար, հանճարեղ, ան-
հանճար.
Պահպանութիւն, պահա-
պան, պահակ, պահա-
նորդ.
Հուր, հրեղէն.
Մարդ, մարդկեղէն,
մարդկային, տմարդի
Մոր, մորուս.
Ճախին, ճախճախուտ.
Երկինք, երկնաւոր.
Կեղծիք, կեղծաւոր, ան-
կեղծ.
Շուտութիւն, շոյտ.
Ապառաժ, ապառաժուտ.
Քար, քարեղէն, քարուտ.
քարեայ
Ուշ, ուշեղ, ուշիմ.
Սպաս, սպասաւոր, սպա-
սեակ, սպասիկ.
Բախտ, բախտաւոր.
Մթեր, մթերածոյ.

Սէր, սիրելի, սիրուն·
Կարիք, կարեւոր·
Պէտք, պիտանի, անպիտան·
Անուն, անուանի·
Ժողով, ժողովածոյ·
Ուղղութիւն, ուղիղ, ուղղորդ, անուղղայ.
Շահ, շահաւոր, շահաւէտ, շահեկան, անշահ·

Վայր, վայրի, վայրենի·
Տէր, տէրունի, անտէր·
Տիկին, տիկնունի·
Արքայ, արքունի·
Խոցուած, խոց, անխոց·
Վէրք, վիրաւոր, անվէր·
Տաղտկութիւն, տաղտուկ, տաղտկոտ·
Ձանձրութիւն, ձանձիր.
Կորով, կորովի·

## 9. Հրահանգ

Տրտում, տրտմական·
Սեպուհ, սեպհական·
Օրէնք, օրինական·
Ազնիւ, ազնուական·
Բարք, բարոյական·
Լեառն, լեռնական·
Կայսր, կայսերական·
Փախուստ, փախստական·
Հովիւ, հովուական·
Մեհեան, մեհենական·
Եկեղեցի, եկեղեցական·

Երէց, երիցական·
Քուրմ, քրմական·
Էգ, իգական·
Խուժ, խժական·
Հալածումն, հալածական.
Ձմեռն, ձմեռական
Մարմին, մարմնական·
Յաղթութիւն, յաղթական·
Շէն, շինական·
Շահ, շահեկան·

---

Քննական, քնին·
Վանական, վանք·
Պատմական, պատմութիւն·
Լուսնական, լուսին·
Կորստական, կորուստ·
Շնական, շուն·

Կուսական, կոյս·
Պատուական, պատիւ·
Սրբական, սուրբ·
Տեւական, տեւել·
Մշտնջենական, մշտնջենաւ, միշտ·

Տիրական, տէր· Մարմնական, մարմին·
Արքունական, արքունիք·

## 10. Հրահանգ

Ձիք, ձիաւոր· Բուռն, բռնաւոր·
Հովանի, հովանաւոր· Գէս, գիսաւոր·
Թոյն, թունաւոր· Կարիք, կարեւոր·
Հեռի, հեռաւոր· Հոգի, հոգեւոր·
Կնիք, կնքաւոր Ծամուկ, ծամկաւոր·
Անցք, անցաւոր· Գօտի, գօտեւոր·
Լոյս, լուսաւոր· Գոյք, գոյաւոր·
Աղեղն, աղեղնաւոր· Գոյն, գունաւոր·
Գլուխ, գլխաւոր· Երախտիք, երախտաւոր·
Երկիր, երկրաւոր· Այլք, այլեւոր·
Երկինք, երկնաւոր· Տիգաւոր, տէգ·

---

Եղջերաւոր, եղջիւր· Սուինաւոր, սուին·
Դաշնաւոր, դաշն· Քինաւոր, քէն·
Մտաւոր, միտք· Սակաւաւոր, սակաւ·
Պարսպաւոր, պարիսպ· Փառաւոր, փառք·
Պարտաւոր, պարտք· Քուաւոր, քիւ·
Ցխնաւոր, ցխուն· Տտնաւոր, տտուն·
Պատժաւոր, պատիժ· Սգաւոր, սուգ·
Ծգնաւոր, ծիգն· Ոտնաւոր, ոտն·
Մկնդաւոր, մկունդ· Մանեկաւոր, մանեակ·
Վիրաւոր, վէրք· Հաւատաւոր, հաւատք.

## 11. Հրահանգ

Տիղմ· տղմուտ· Ջիղ, ջղուտ·
Օձ, օձուտ· Ոսկր, ոսկրուտ.
Յորձանք, յորձանուտ· Աւազ, աւազուտ·

Վէմ, վիմուս.
Լպիրծ, լպրծուս.
Հաց, հացուս.
Թուփ, թփուս.
Թաւ, թաւուս.
Մացառ, մացառուս.
Ճախին, ճախճախուս.
Ժանտ, ժանտաժուս.
Շէջ, շիջանուս.
Ծարաւ, ծարաւուս.
Թօն, թօնուս.
Շամբ, շամբուս.
Ապառաժ, ապառաժուս.
Աւազակ. աւազակուս.

---

Երկիւղ, երկչոս.
Բոր, բորոս.
Դեղ, դեղոս.
Ցասումն, ցասկոս.
Ծակ, ծակոս.
Կասկած, կասկածոս.
Մոռացումն, մոռացկոս.
Յաչաղումն, յաչաղկոս.
Նենգ, նենգոս, նենգաժոս.
Նախանձ, նախանձոս.
Ժանգ, ժանգոս.
Արիւն, արիւնոս.
Խնամք, խնամոս.
Ցեխ, ցեխոս.
Քոս, քոսոս.
Դանդաղանք, դանդաղկոս.
Վաղվաղումն, վաղվաղկոս.
Ցաւ, ցաւոս.
Եռանդն, եռանդնոս.
Վերին, վերնոս.
Լուսին, լուսնոս.
Հիւանդ, հիւանդոս.

## 12. Հրահանգ

Ահ, ահեղ.
Ասր, ասրեղ.
Ոյժ, ուժեղ.
Զօրութիւն, զօրեղ.
Շուք, շքեղ.
Ինչք, ընչեղ.
Թեկն, թիկնեղ.
Համ, համեղ.
Հիւթ, հիւթեղ.
Մազ, մազեղ.
Ուշ, ուշեղ.
Գոյն, գունեղ.
Ձայն, ձայնեղ.
Անձն, անձնեղ.
Մարմին, մարմնեղ.
Կարշն, կարշնեղ.

Ազգ, ազգաս ·
Ձեռն, ձեռնաս ·
Ականջ, ականջաս ·
Լեզու, լեզուաս ·
Ռունչ, ռնչաս ·
Գոյն, գունաս ·
Կարճ, կարճաս ·
Մէջ, միջաս ·
Պինչ, պնչաս ·
Կառափն, կառափնաս ·
Ծայր, ծայրաս ·
Շուրթն, շրթնաս ·

## 13. Հրահանգ

Ծաղիկ, ծաղկաւէտ ·
Երանելի, երանաւէտ ·
Այգի, այգաւէտ ·
Թեկն, թիկնաւէտ ·
Ինչք, ընչաւէտ ·
Միրգ, մրգաւէտ
Պտուղ, պտղաւէտ ·
Շահ, շահաւէտ ·
Քրքում, քրքմաւէտ ·
Խոտ, խոտաւէտ ·
Խաշն, խաշնաւէտ ·

---

Աղիւս, աղիւսեայ ·
Սիրտ, սրտեայ ·
Կիճ, կուճ, կճեայ ·
Կաճ, կաճեայ ·
Մաշկ, մաշկեայ ·
Որկոր, որկորեայ ·
Մետաքս, մետաքսեայ ·
Փղոսկր, փղոսկրեայ ·
Բեհեզ, բեհեզեայ ·
Ադամանդ, ադամանդեայ
Գմբէթ, գմբեթեայ ·
Եղէգն, եղեգնեայ ·
Մագաղաթ, մագաղաթեայ ·
Ծաղիկ, ծաղկեայ ·
Կաշի, կաշեայ ·
Նեարդ, նեարդեայ ·
Պրտու, պրտուեայ ·
Փուշ, փշեայ ·
Փախուստ, փախստեայ ·
Յախճապակի, յախճապակեայ ·

---

Ոգի, ոգեղէն ·
Վէմ, վիմեղէն ·
Տարր, տարրեղէն ·
Փուշ, փշեղէն ·
Քար, քարեղէն ·
Լոյս, լուսեղէն ·

Հուր, հրեղէն.
Գարի, գարեղէն.
Մարդ, մարդկեղէն.
Միս, մսեղէն.
Բոց, բոցեղէն.
Մազ, մազեղէն.
Աստուած, աստուածեղէն.
Ոսկի, ոսկեղէն.
Արծաթ, արծաթեղէն.
Նիւթ, նիւթեղէն.
Մետաքս, մետաքսեղէն.
Կերպաս, կերպասեղէն.
Ասր, ասուեղէն, ասրեղէն.
Ապակի, ապակեղէն.

## 14. Հրահանգ

Ցած, ցածուն.
Պատառոտում, պատառոտուն.
Գնացք, գնայուն.
Զգայութիւն, զգայուն.
Զեղում, զեղուն.
Հաստատութիւն, հաստատուն.
Սահում, սահուն.
Թաթախում, թաթաղուն.
Շարժում, շարժուն.
Տոկում, տոկուն.
Փայլում, փայլուն.
Եռանդն, եռանդուն.
Կանգնում, կանգուն.
Կայ, կայուն.
Սէր, սիրուն.
Հասում, հասուն.
Կարկատում, կարկատուն.
Թաքուստ, թաքուն.
Թռիչ, թռչուն.
Զեռում, զեռուն.
Սողում, սողուն.
Զուարթ, զուարթուն.

---

Երկաթ, երկաթի.
Ասր, ասուի.
Արծաթ, արծաթի.
Ջուր, ջրի.
Կորով, կորովի.
Պղինձ, պղնձի.
Ծարաւ, ծարաւի.
Նքթում, նօթի.
Ճար, ճարի.
Բուռն, բռնի.
Դալար, դալարի.
Յայտ, յայտնի.
Մօրուք, մօրուանի.
Պէտք, պիտանի.

Լեզու, լեզուանի․
Լիրբ, լրբենի․
Հայր, հայրենի․
Մայր, մայրենի․
Մսեղ, մսեղի․
Նախ, նախնի․
Նման, նմանի․
Վայր, վայրի, վայրենի․
Այր, առնի․

## 15. Հրահանգ

Տուն, տնիկ, տնակ․
Խուց, խցիկ․
Ձուկն, ձկնիկ․
Անասուն, անասնիկ․
Մասն, մասնիկ․
Միրգ, մրգիկ․
Նաւ, նաւակ․
Հաց, հացիկ․
Լիճ, լճակ․
Գունդ, գնդակ․
Պատանի, պատանեակ․
Պատանեակ, պատանեկիկ.
Մանուկ, մանկիկ․
Խուղ, խղիկ․
Հայր, հայրիկ․
Որդի, որդեակ․
Վայր, վայրիկ․
Ձորձ, ձորձիկ․
Մեկնոց, մեկնոցակ․
Գետ, գետակ․
Ծով, ծովակ․
Աղիճ, աղջիկ․
Աչք, աչուկ, յք․ աչկունք․
Թիզ, թզուկ․
Շուն, շնիկ․
Քաղաք, քաղաքիկ.
Թի, թիակ․
Լեզու, լեզուակ․
Դուռն, դռնակ․

---

Ձմեռն, ձմեռոց, ձմեռանոց.
Ամառն, ամառանոց․
Հովանի, հովանոց․
Մարտիկ, մարտկոց․
Մեղու, մեղուանոց․
Ուրուկ, ուրկանոց․
Որբ, որբանոց․
Վարժ, վարժոց․
Մրջիւն, մրջիւնոց․
Մթեր, մթերանոց․
Վաճառք, վաճառանոց․
Հիւր, հիւրանոց․
Արուեստ, արուեստանոց.

Վարդապետ, վարդապետանց·
Դպիր, դպրոց·
Օտար, օտարանոց·
Հիւանդ, հիւանդանոց·
Աղքատ, աղքատանոց·
Այրի, այրենոց·
Ծաղիկ, ծաղկոց·
Գլուխ, գլխանոց·
Հալումն, հալոց·
Հանգիստ, հանգստոց·
Ուս, ուսանոց·
Ամուր, ամրոց·

## 16. Հրահանգ

Այգի, այգորդ·
Անցք, անցորդ·
Ճանապարհ, ճանապարհորդ·
Նաւ, նաւորդ·
Փոխանակ, փոխանորդ·
Ժառանգութիւն, ժառանգորդ·
Բաժին, բաժանորդ·
Որս, որսորդ·
Պահապան, պահանորդ·
Նախանձ, նախանձորդ·
Սեղան, սեղանորդ·
Պարապ, պարապորդ·
Ուղիղ, ուղղորդ·
Յետին, յետնորդ·
Լուծ, լծորդ·
Լիւղ, լուղորդ·
Ցանց, ցանցորդ·
Միջին, միջնորդ·
Կից, կցորդ·
Ձախ, ձախորդ·
Աջ, յաջորդ·

---

Ջուր, ջրային·
Ծով, ծովային·
Լեառն, լեռնային·
Երկիր, երկրային·
Աստուած, աստուածային·
Հուր, հրային·
Ցամաք, ցամաքային·
Դաշտ, դաշտային·
Մարդ, մարդկային·
Երկինք, երկնային·
Մաղձ, մաղձային·
Քաղաք, քաղաքային·
Նաւ, նաւային·
Դեւ, դիւային·
Հող, հողային·
Ազգ, ազգային·

Տոհմ, տոհմային.
Աստղ, աստղային.
Տիղմ, տղմային.
Օդ, օդային.
Տունկ, տնկային.
Բոյս, բուսային.

## 17. Հրահանգ

Գայլ, գայլենի.
Ոչխար, ոչխարենի.
Այծ, այծենի.
Առիւծ, առիւծենի.
Կուզ, կզենի.
Սամոյր, սամուրենի.
Գառն, գառնենի.
Աղուէս, աղուեսենի.
Խնձոր, խնձորենի, խընձորի.
Տանձ, տանձի.
Վարդ, վարդենի.
Կաղին, կաղնի.
Ընկոյզ, ընկուզի.
Դեղձ, դեղձի.
Ծիրան, ծիրանի.
Նուշ, նշենի.
Նուռն, նռնենի.
Մուրտ, մրտենի.
Սերկեւիլ, սերկեւլի.
Թութ, թթենի.
Թուզ, թզենի.
Ձէթ, ձիթենի.

## 18. Հրահանգ

Գէտ, անգետ, տգետ.
Գործ, անգործ.
Շունչ, անշունչ.
Բան, անբան.
Բարբառ, անբարբառ.
Ձայն, անձայն.
Ողոք, անողոք.
Յոյս, անյոյս.
Յայտ, անյայտ.
Տէր, անտէր.
Սուրբ, անսուրբ.
Օրէնք, անօրէն.
Կար, անկար, տկար.
Համ, տհամ.
Փուն, անփուն, (տփուն).
Մարդ, անմարդի, տմարդի
Գեղ, տգեղ.
Գոյն, տժգոյն, անգոյն.
Գին, անգին, տժգին.
Գոհ, դժգոհ.
Կամք, դժկամակ.
Գոյ, անգոյ, չգոյ.

Լուր, անլուր.
Կայ, անկայ, չկայ.
Համազգի, չհամազգի.
Պէտ, անպէտ, անպիտան, չպիտոյ.
Ուշ, անյուշ, ապուշ.
Շնորհ, անշնորհ, ապաշնորհ.
Կար, ապիկար.
Երախտիք, ապերախտ.
Տոհմ, անտոհմ, ապատոհմ.
Երասան, ապերասան.

## 19. Հրահանգ

Զօրքի գլուխ, զօրագլուխ.
Դրան փակ, դռնափակ.
Գազանի (հետ) կռիւ. գազանամարտ.
Գանձի գլուխ, գանձապետ.
Գետի եզր, գետեզր, գետափն.
Ծովի եզր, ծովեզր, ծովափն.
Գիրքերու պահարան, մատենադարան.
Դայեկի որդի, դայեկորդի.
Դիւանի գլուխ, դիւանապետ.
Դիւանի գրագիր, դիւանադպիր.
Եղնիկի ձագ, եղնորթ.
Բանակի տեղ, բանակատեղ.
Եղեւինի փայտ, եղեւնափայտ.
Աղբիւրի ակ, աղբերակն.
Լուսոյ մտնելու տեղ, լուսամուտ.
Խաչի փայտ, խաչափայտ.
Խունկի աման, խնկաման.
Ծերոց խումբ, ծերակոյտ.
Հարսի եղբայր, հարսնեղբայր.
Հողի բլուր, կոյտ. հողաբլուր, հողակոյտ
Ոտքի կապ, ոտնակապ.
Ձիւնի ծաղիկ, ձիւնածաղիկ.
Ձորի գաւառ, ձորագաւառ.
Ճաշու ժամ, ճաշաժամ.
Մաղձի դեղ, մաղձադեղ.
Մարդոց մահ, մարդամահ.
Մարդու պատկեր, մարդապատկեր, առնապատկեր.
Մաքսի տուն, մաքսատուն.

Մեհեանի տեղ, մեհենա-
տեղի.
Մոխրի կոյտ, մոխրակոյտ.
Նաւի խումբ, նաւատոր-
միղ.
Քաղքի մէջտեղ, քաղա-
քամէջ.
Ծունչի փող, ծնչափող.
Ոտքի տեղ, ոտնկոխ, ոտ-
նատեղի. [գլուխ.
Հորթու գլուխ, որթա-
Գետի ձի, գետաձի.
Պատի ծակ, որմածակ.
Ջուրի հեղեղ, ջրհեղեղ.
Սանդղի ոտք, սանդղա-
մատն.
Վանքի երէց, վանէրէց.
Վարագի ջիղ, վարագա-
ջիղ.
Որթի տունկ, որթատունկ.
Քաղաքի պատ, քաղա-
քորմ.

---

Տունը մեծ, մեծատուն.
Զօրութիւնը մեծ, մեծա-
զօր.
Ձայնը մեծ, մեծաձայն.
Թեւը երկայն, երկայնա-
բազուկ. [շուրթն.
Պռկունքը լայն, լայնա-
Ոտքը կարճ, կարճոտն.
Զգեստը կարճ, կարճա-
հանդերձ, կարճազգեստ.
Ջուրը խորունկ, խորա-
ջուր.
Վիզը բարձր, բարձրավիզ.
Ձայնը բարձր, բարձրա-
ձայն.
Մարդը շատ, մարդաշատ.
Բարքը աղէկ, բարեբարոյ.
լաւաբարոյ.
Հոտը գէշ, չարահոտ,
ժանտահոտ.
Համն անոյշ, քաղցրահամ
Դէմքը գեղեցիկ, գեղեց-
կադէմ.
Գեղեցկութիւնը հազուա-
գիւտ, չքնաղագեղ.
Ոտքը շուտ, արագոտն.
Միտքը երկու, երկմիտ.
Լեզուն թանձր, թանձ-
րալեզու.
Բեռը ծանր, ծանրաբեռն.
Քալուածքը թեթեւ, թե-
թեւագնաց.
Հաւատքը թերի, թերա-
հաւատ.
Մորթը թոյլ, թուլամորթ.
Սիրտը վատ, վատասիրտ.

Բերանը լեցուն, լիաբերան.

Պարանոցը խիտ, խստապարանոց.

Սիրտը հիւանդ, խօրասիրտ.

Խորհուրդը լաւ, լաւախորհուրդ.

Այտերը կարմիր, կարմրայտ.

Գլուխը ծուռ, կորագլուխ.

Թելերը ոսկի, ոսկեթել.

Պարիսպը կրկին, կրկնապարիսպ.

Պատիւը հաւասար, հաւասարապատիւ, զուգապատիւ.

Թեւերը հաստատ, հաստաբազուկ.

Կաշին հաստ, հաստամորթ, հաստակաշի.

Զօրութիւնը հսկայական, հսկայազօր.

Ջուրը շատ, շատաջուր.

Ծարակը շատ, ծարակաշատ.

Հանդերձը մաշկ, մաշկահանդերձ.

Սիրտը նեղ, նեղասիրտ.

Փետուրը նոր, նորափետուր.

Ձայնը բարակ, նրբաձայն.

Պարիսպն ամուր, ամրապարիսպ.

Անդամները ողջ, ողջանդամ.

Միտքը պակաս, պակասամիտ.

Նիստը քիչ, սակաւանիստ

Աչքը սուր, սրակն.

Ականջը սուր, սրունկն.

Անունը վատ, վատանուն.

Ձայնը քաղցր, քաղցրաձայն, քաղցրաբարբառ.

Սիրտը քաջ, քաջասիրտ

Սանձը ոսկի, ոսկեսանձ.

Ձեռքը պարապ, ունայնաձեռն.

Միտքը թեթեւ, թեթեւամիտ.

Հաւատքը շիտակ, ուղղահաւատ.

Աչքը չար, չարակն.

Բեռը թեթեւ, թեթեւաբեռն.

Մեղքը մեծ, մեծամեղ.

Մեղքը քիչ, սակաւամեղ.

Անունը մեծ, մեծանուն.

Միտքը մեծ, մեծամիտ.

Հասակը բարձր, բարձրահասակ.

Ականջը երկայն, երկայնականջ.
Թեւը մաշկէ, մաշկաթեւ.
Միտքը թանձր, թանձրամիտ.
Սիրտը խիստ, խստասիրտ.
Դէմքը երկայն, երկդիմի.
Բերանը երկու, երկայրի.
Մորթը լերկ, լերկամորթ.
Միտքը երկայն, երկայնամիտ.
Ջուրը յորդ, յորդաջուր.
Մարմինը խոշոր, յաղթամարմին.
Միտքը ցած, խոնարհամիտ.
Լեզուն ծանր, ծանրալեզու.

## 20. Հրահանգ

| | Եզ. սեռ. | Յգ. ուղղ. | Յգ. սեռ. |
|---|---|---|---|
| Ընծայ, | ընծայի. | Ընծայք, | ընծայից. |
| Ժամանակ, | ժամանակի. | Ժամանակք, | ժամանակաց. |
| Նշան, | նշանի. | Նշանք, | նշանաց. |
| Գործ, | գործոյ. | Գործք, | գործոց. |
| Հողմ, | հողմոյ. | Հողմք, | հողմոց. |
| Թուղթ, | թղթոյ. | Թուղթք, | թղթոց. |
| Մարդ, | մարդոյ. | Մարդք, | մարդոց. |
| Երկիր, | երկրի. | Երկիրք, | երկրաց. |
| Սէր, | սիրոյ. | Սէրք, | սիրոց. |
| Պատիւ, | պատուոյ. | Պատիւք, | պատուոց. |
| Թիւ, | թուոյ. | Թիւք, | թուոց. |
| Անիւ, | անուոյ. | Անիւք, | անուոց. |
| Գրիչ, | գրչի. | Գրիչք, | գրչաց. |
| Հուր, | հրոյ. | Հուրք, | հրոց. |
| Կարգ, | կարգի. | Կարգք, | կարգաց. |
| Մատուռն, | մատրան. | Մատրունք, | մատրանց. |
| Գօտի, | գօտւոյ. | Գօտիք, գօտւոց, գօտեաց. | |
| Թթենի, | թթենւոյ. | Թթենիք, | թթենեաց. |

| | | | |
|---|---|---|---|
| Ձիթենի , | ձիթենւոյ · | Ձիթենիք , | ձիթենեաց · |
| Ձագ , | ձագու · | Ձագք , | ձագուց · |
| Թռչուն , | թռչնոյ · | Թռչունք , | թռչնոց · |
| Մատեան , | մատենի · | Մատեանք , | մատենից · |
| Ատեան , | ատենի · | Ատեանք , | ատենից · |
| Շունչ , | շնչոյ · | Շունչք , | շնչոց · |
| Մարմին , | մարմնոյ · | Մարմինք , | մարմնոց · |
| Պատանի , | պատանւոյ · | Պատանիք , | պատանեաց · |
| Մուկն , | մկան · | Մկունք , | մկանց · |
| Շուրթն , | շրթան · | Շրթունք , | շրթանց · |
| Հովիւ , | հովուի · | Հովիւք , | հովուաց · |
| Հովանի , | հովանւոյ · | Հովանիք , | հովանեաց · |
| Հող , | հողոյ · | Հողք , | հողոց · |
| Ջուր , | ջրոյ · | Ջուրք , | ջրոց · |
| Հաց , | հացի · | Հացք , | հացից · |
| Պանիր , | պանրոյ · | Պանիրք , | պանրոց · |
| Հոգի , | հոգւոյ · | Հոգիք , | հոգւոց · |
| Հոտ , | հոտոյ · | Հոտք , | հոտոց · |
| Հօտ , | հօտի · | Հօտք , | հօտից · |
| Ոչխար , | ոչխարի · | Ոչխարք , | ոչխարաց · |
| Արջառ , | արջառոյ · | Արջառք , | արջառոց · |
| Այծ , | այծի · | Այծք , | այծից · |
| Հունձ , | հնձոյ · | Հունձք , | հնձոց · |
| Պտուղ , | պտղոյ · | Պտուղք , | պտղոց · |
| Հրաման , | հրամանի · | Հրամանք , | հրամանաց · |
| Հրապարակ , | հրապարակի · | Հրապարակք , | հրապարակաց |
| Ամբոխ , | ամբոխի · | Ամբոխք , | ամբոխից · |
| Աղի , | աղւոյ · | Աղիք , | աղեաց · |
| Աղտ , | աղտոյ · | Աղտք , | աղտոց · |
| Երէց , | երիցու · | Երիցունք , | երիցանց · |

| | | | |
|---|---|---|---|
| Երկաթ , | երկաթոյ · | Երկաթք , | երկաթոց · |
| Արծաթ , | արծաթոյ · | Արծաթք , | արծաթոց · |
| Ոսկի , | ոսկւոյ · | Ոսկիք , | ոսկեաց · |
| Պղինձ , | պղնձոյ · | Պղինձք , | պղնձոց · |
| Զգեստ , | զգեստու · | Զգեստք , | զգեստուց · |
| Զարդ , | զարդու · | Զարդք , | զարդուց · |
| Ատամն , | ատաման · | Ատամունք , | ատամանց · |
| Բեռն , | բեռին · | Բեռինք , | բեռանց · |
| Գնէլ , | Գնէլոյ · | Գնէլք , | Գնէլոց · |
| Տիրան , | Տիրանայ · | Տիրանք , | Տիրանաց · |
| Միհրան , | Միհրանայ · | Միհրանք , | Միհրանաց · |
| Զէն , | զինու · | Զէնք , | զինուց · |
| Զոհ , | զոհի · | Զոհք , | զոհից · |
| Կողմն , | կողման · | Կողմանք , | կողմանց · |
| Կոճղ , | կոճեղ · | Կոճեղք , | կոճեղաց · |
| Կոչումն , | կոչման · | Կոչմունք , | կոչմանց · |
| Մեծատուն , | մեծատան · | Մեծատունք , | մեծատանց · |
| Վերնատուն , | վերնատան · | Վերնատունք , | վերնատանց · |
| Գալուստ , | գալստեան · | Գալուստք , | գալստեանց · |
| Կրօն , | կրօնի · | Կրօնք , | կրօնից · |
| Յօդ , | յօդի · | Յօդք , | յօդից · |
| Շէն , | շինի · | Շէնք , | շինից · |
| Ազգ , | ազգի · | Ազգք , | ազգաց · |
| Լոյս , | լուսոյ · | Լոյսք , | լուսոց · |
| Յոյս , | յուսոյ · | Յոյսք , | յուսոց · |
| Ճշմարտու-թիւն , | ճշմարտու-թեան · | Ճշմարտու-թիւնք , | ճշմարտու-թեանց · |
| Տարի , | տարւոյ · | Տարիք , | տարեաց · |
| Ամիս , | ամսոյ · | Ամիսք , | ամսոց · |
| Ժամ , | ժամու · | Ժամք , | ժամուց · |

| | | | |
|---|---|---|---|
| Վարկեան , | վարկենի · | Վարկեանք , | վարկենից · |
| Ծառ , | ծառոյ · | Ծառք , | ծառոց · |
| Սուրբ , | սրբոյ · | Սուրբք , | սրբոց · |
| Անձն , | անձին · | Անձինք , | անձանց · |
| Տարր , | տարեր · | Տարերք , | տարերաց , տարերց · |
| Արկղ , | արկեղ · | Արկեղք , | արկեղաց · |
| Մեհեան , | մեհենի · | Մեհեանք , | մեհենից · |
| Ցեղ , | ցեղի · | Ցեղք , | ցեղից · |
| Քահանայ , | քահանայի · | Քահանայք , | քահանայից · |
| Մահ , | մահու , մահուան · | Մահք , | մահունք , մահուանց · |
| Խաշն , | խաշին · | Խաշինք , | խաշանց · |
| Դաշն , | դաշին · | Դաշինք , | դաշանց · |
| Հանդէս , | հանդիսի · | Հանդէսք , | հանդիսից · |
| Ողջոյն , | ողջունի · | Ողջոյնք , | ողջունից · |
| Էշ , | իշոյ · | Էշք , | իշոց · |
| Ծով , | ծովու · | Ծովք , | ծովուց · |
| Մանուկ , | մանկան · | Մանկունք , | մանկանց · |
| Ծեր , | ծերոյ · | Ծերք , | ծերոց · |
| Աղջիկ , | աղջկան · | Աղջկունք , | աղջկանց · |
| Ուստր , | ուստեր · | Ուստերք , | ուստերաց · |
| Դուստր , | դստեր · | Դստերք , | դստերաց · |
| Որդեակ , | որդեկի · | Որդեակք , | որդեկաց · |
| Լեզու , | լեզուի · | Լեզուք , | լեզուաց · |
| Ծիր , | ծրոյ · | Ծիրք , | ծրոց · |
| Խունկ , | խնկոյ · | Խունկք , | խնկոց · |
| Քաղց , | քաղցու · | Քաղցք , | քաղցուց · |
| Ինձ , | ընձու · | Ինձք , | ընձուց · |
| Իժ , | իժի · | Իժք , | իժից · |
| Աւազան , | աւազանի · | Աւազանք , | աւազանաց · |

| | | | |
|---|---|---|---|
| Խրատ , | խրատու · | Խրատք , | խրատուց · |
| Արամ , | Արամայ · | Արամք , | Արամաց · |
| Վահան , | Վահանայ · | Վահանք , | Վահանաց · |
| Վարդան , | Վարդանայ · | Վարդանք , | Վարդանաց · |
| Գայիանէ , | Գայիանեայ · | Գայիանէք , | Գայիանեաց · |
| Լուկրետիա , | Լուկրետեայ · | Լուկրետիայք , | Լուկրետեաց · |
| Հայկ , | Հայկայ · | Հայկք , | Հայկաց · |
| Կղզի , | կղզւոյ · | Կղզիք , | կղզեաց · |
| Փարիսեցի , | փարիսեցւոյ · | Փարիսեցիք , | փարիսեցւոց · |
| Սադուկեցի , | սադուկեցւոյ · | Սադուկեցիք , | սադուկեցւոց · |
| Անեցի , | անեցւոյ · | Անեցիք , | անեցւոց · |
| Աւր , | աւրոյ , աւուր · | | |
| Մեղր , | մեղու , մեղեր · | | |
| Խոստումն , | խոստման · | Խոստմունք , | խոստմանց · |
| Ուսումն , | ուսման · | Ուսմունք , | ուսմանց · |
| Սկիզբն , | սկզբան · | Սկզբունք , | սկզբանց · |
| Եզր , | եզեր · | Եզերք , | եզերաց , եզերց · |
| Ծայր , | ծայրի · | Ծայրք , | ծայրից · |
| Ափն , | ափին · | Ափունք , | ափանց · |
| Քիրտն , | քրտան · | Քրտունք , | քրտանց · |
| Աշուն , | աշնան · | Աշունք , | աշնանց · |
| Գարուն , | գարնան · | Գարունք , | գարնանց · |
| Ձմեռն , | ձմերան · | Ձմերունք , | ձմերանց · |
| Ամառն , | ամարան · | Ամարունք , | ամարանց · |
| (Մարդ) , | (մարդոյ) , | Մարդիկ , | մարդկան · |
| Պաշտօն , | պաշտաման · | Պաշտամունք , | պաշտամանց · |
| Ձեղուն , | ձեղուան · | Ձեղունք , | ձեղուանց · |
| Կորեակ , | կորեկան · | Կորեկունք , | կորեկանց · |
| Սենեակ , | սենեկի · | Սենեակք , | սենեկաց · |

| | | | |
|---|---|---|---|
| Տուն , | տանոյ . | Տունք , | տանոց . |
| Ագի , | ագւոյ . | Ագիք , | ագեաց . |
| Գլուխ , | գլխոյ . | Գլուխք , | գլխոց . |
| Փոքրիկ , | փոքրկան . | Փոքրկունք , | փոքրկանց . |
| Տնիկ , | տնկան . | Տնկունք , | տնկանց . |
| Մատն , | մատին . | Մատունք , | մատանց . |
| Մրջիւն , | մրջեան . | Մրջիւնք , | մրջեանց . |
| Սիւն , | սեան . | Սիւնք , | սեանց . |
| Կորիւն , | կորեան . | Կորիւնք , | կորեանց . |
| Թոռն , | թոռին . | Թոռունք , | թոռանց . |
| Հանգիստ , | հանգստեան . | Հանգիստք , | հանգստեանց |
| Փախուստ , | փախստեան . | Փախուստք , | փախստեանց . |
| Թաքուստ , | թաքստեան . | Թաքուստք , | թաքստեանց . |
| Համր , | համեր . | Համերք , | համերց . |
| Երր , | երեր . | Երերք , | երերց . |
| Իր , | իրի . | Իրք , | իրաց . |
| Իղձ , | ըղձի . | Իղձք , | ըղձից . |
| Ունչ , | ընչի . | Ունչք , | ընչաց . |
| Ունդ , | ընդոյ . | Ունդք , | ընդոց . |
| Ուս , | ուսոյ . | Ուսք , | ուսոց . |
| Ուխտ , | ուխտի . | Ուխտք , | ուխտից . |
| Քրիստոն-եայ , | քրիստոնէի . | Քրիստոն-եայք , | քրիստոնէից . |
| Փախստեայ , | փախստէի . | Փախստեայք , | փախստէից . |
| Աշտեայ , | աշտէի . | Աշտեայք , | աշտէից . |
| Գանձ , | գանձու . | Գանձք , | գանձուց . |
| Ձոր , | ձորու . | Ձորք , | ձորաց . |
| Ժողովուրդ , | ժողովրդեան . | Ժողովուրդք , | ժողովրդոց . |
| Ծնունդ , | ծննդեան . | Ծնունդք , | ծննդոց . |
| Խորհուրդ , | խորհրդեան . | Խորհուրդք , | խորհրդոց . |

| | | | |
|---|---|---|---|
| Կոչ , | կոչոյ · | Կոչունք , | կոչնոց · |
| Ճրագ , | ճրագի · | Ճրագունք , | ճրագաց · |
| Մահ , մահու , | մահուան · | Մահք , մահունք , | մահուց · |
| Պատերազմ , | պատերազմի · | Պատերազմունք , | պատերազմաց |
| Պառաւ , | պառաւոյ · | Պառաւունք , | պառաւանց · |
| Քար , | քարի · | Քարինք , | քարանց · |
| Այր , | այրի · | Այրք , | այրից · |
| Գայլ , | գայլի · | Գայլք , | գայլից · |
| Գայլ , | գայլոյ · | Գայլք , | գայլոց · |
| Գեղ , | գեղոյ · | Գեղք , | գեղոց · |
| Մայր , | մայրի · | Մայրք ; | մայրից · |
| Որթ , | որթոյ · | Որթք , | որթոց · |
| Որթ , | որթու · | Որթք , | որթուց · |
| Սան , | սանի · | Սանք , | սանից · |
| Սան , | սանու · | Սանք , | սանուց · |
| Փող , | փողոյ · | Փողք , | փողոց · |
| Փող , | փողի · | Փողք , | փողից · |
| Օդ , | օդոյ · | Օդք , | օդոց · |
| Օդ , | օդի · | Օդք , | օդից · |
| — | — | Խօսք , | խօսից · |
| — | — | Աղօթք , | աղօթից · |
| — | — | Միտք , | մտաց · |
| — | — | Պարտք , | պարտուց · |
| — | — | Կամք , | կամաց · |
| — | — | Դժոխք , | դժոխոց · |
| — | — | Մեղք , | մեղաց · |
| (Մանուկ) , | (մանկան) | Մանկտի , | մանկտւոյ · |
| Լաւութիւն , | լաւութեան · | Լաւութիւնք , | լաւութեանց · |
| (Ոսկր) , | (ոսկեր) · | Ոսկրոտի , | ոսկրոտւոյ · |

| | | | |
|---|---|---|---|
| (Բան), | (բանի)· | Բանեար, | բաներոյ· |
| (Աւագ), | (աւագի)· | Աւագանի, | աւագանւոյ· |
| (Խոզ), | (խոզի)· | Խոզեան, | խոզենոյ· |
| (Գիր), | (գրոյ)· | Գրեան, | գրենոյ· |
| (Որ), | (որոյ)· | Որեար, | որերոյ· |
| (Խուժ), | (խժոյ)· | Խուժան, | խուժանի· |
| (Կին), | (կնոջ· | Կանանի, | կանանւոյ· |

## 21. Հրահանգ

Բաց է դուռն պարտիզին· Փակեալ են պատուհանք տանն· Վայրենի էին բնակիչք երկրին· Գեղեցիկ էր պտուղ ծառոյն· Պայծառ է լոյս արեգական· Աղօտ է լոյս լուսնի· Տէր է հայր մանկանն· Հաւատարիմ են զօրք թագաւորին· Այս են կամք տեառն· Մերձ է տուն քեռն· Ստահակ են որդիք կնոջն· Խիստ էին բանք առնն· Սաստիկ էր բարկութիւն հօրն· Մեծ էր հանդէս աւուրն· Կարճ են ժամք տունջեան· Երկայն են ժամք գիշերոյ· Առաւել է տապ միջօրէին· Զով են աւուրք գարնան կամ գարնայնոյ· Ջերմ են աւուրք ամարան կամ ամարայնոյ· Մարդասէր են բնակիչք գեղջն· Բուռն է հրաման թագաւորին· Պղնձի են դրունք քաղաքին· Քաղցր են ջուրք գետոյն· Հանճարեղ են բանք ծերունւոյն կամ ծերոյն· Սուրբ են իշխանք քաղաքացն· Ազգի ազգի են ձկունք ծովու· Ծակ է կարաս գինւոյն· Լի է սրուակ իւղոյն· Թափուր են ամանք կաթին· Բարձր են դիրք տեղւոյն· Պարծանք են հարք որդւոց· Պաշտպան են մարք դստերաց· Երանելի են հոգիք արդարոց· Ահագին էր պետութիւնն Հռոմայեցւոց կամ Հռոմոց· Ընտրեալ էր ազգն Իսրայե-

լացւոց կամ Իսրայէլի․ Ազդու էին բանք խրատուն․ Քաջ էին որդիք եւ թոռունք Հայկայ․ Զարմանալի է պատմութիւն Տրդատայ․ Կուսանք էին ընկերքն Հռիփսիմեայ․ Հինգ հինգ են մատունք ձեռաց եւ ոտից․ Տօն ուրախութեան է այսօր․ Նշան հաշտութեան է ձիթենի․ Յիշատակ քաջութեան է արձան․ Որ հանգստեան էր շաբաթն Հրէից․ Փրկութիւն եղեւ հեղումն արեան Նորա․ Անհամար է թիւ աստեղաց․ Աւելի էր իշխանութիւն կայսեր․ Դառն էր ջուր աղբերն․ Վէմ անկեան եղեւ Նա․ Բազում էր թիւ արանց եւ կանանց ։

## 22․ Հրահանգ

Նոր են հանդերձք եղբօր իմոյ․ Հին են կօշիկք մանկանց ձերոց․ Պտղաբեր է հող երկրի մերոյ․ Բազում են ծառք պարտիզի ձերոյ․ Բազում է ողորմութիւն Աստուծոյ մերոյ․ Մեծ է զօրութիւն աղօթից ձերոց․ Տկար են բանք ծառայից քոց․ Բարձր է յարկ տանս այսորիկ կամ տանս․ Բազում են բնակիչք քաղաքիս․ Սակաւ է արծաթ արանցն այնոցիկ կամ արանցն․ Խիստ է տէր ծառայիցն․ Ամուր են պարիսպք քաղաքին․ Յորդ են ջուրք գետոյն․ Հանճարեղ է որդի կնոջդ այդորիկ կամ կնոջդ․ Պղտոր է ակն աղբերս․ Զով է ջուր աղբերն․ Քաղցր են բանք բարեկամացդ․ Հասուն են պտուղք ծառոցս․ Առողջ է օդ երկրին․ Կարի է երկայնութիւն ճանապարհին․ Տարաժամ էր մահ մանկանն․ Անհնարին է չարութիւն առնս․ Հռչակեալ են լաւութիւնք կնոջս։

Որդի է առն քաջի․ Տէր է ծառայի իմաստնոյ․ Կին է առն բարւոյ․ Քոյր եմ եղբօր հարազատի․ Բնա-

կիչք եմք քաղաքի մեծի․ Այր է կնոջ բարեբարոյի․ Բարեկամ եմ թագաւորի հզօրի․ Զօրավար է բանակաց մեծամեծաց․ Աշակերտ է վարդապետի իմաստնոյ․ Որդի է հօր ազնուի․ Դուստր է մօր բարեպաշտի․ Ծառայք եմք թագաւորին երկնաւորի․ Տէր էր Աբրահամ ծառայից բազմաց․ Այս են բարք որդւոց հնազանդից․ Բնակութիւն է անտառս գազանաց վայրենեաց․ Կին եմ առն ժանտի․ Բնակութիւն է հոգւոց արդարոց։

## 23 · Հրահանգ

Իմաստուն է եղբայրն Յովհաննու․ Չար է որդին Արշակայ․ Հիւանդ էր զօքանչն Պետրոսի․ Ծեր է աներն Յովսէփու․ Կաղ էր որդին Սամուէլի․ Քաջ եւ հաւատարիմ էին զօրավարք Դաւթի․ Կարճ եղեն կեանք Դեկոսի․ Նախանձոտ էին որդիքն Յակոբայ․ Ամուր էին պարիսպքն Երուսաղեմի․ Պտղաբեր է երկիրն Հայոց․ Բարձր են լերինք Հնդկաց․ Երկար եղեւ թագաւորութիւնն Տրդատայ․ Յորդ են ջուրք Եփրատայ․ Անզգամ էին բնակիչք Սոդոմայ․ Հաւատարիմ էին ծառայք Աբրահամու․ Կիզիչ են ճառագայթք արեգական․ Աղօտ է լոյս լուսնի․ Արդար են դատաստանք Աստուծոյ․ Բուռն է զօրութիւն հողմոյ․ Ահագին են ալիք ծովու․ Նուրբ է բնութիւն լուսոյ․ Ուղիղ են ճանապարհք արդարոց․ Ահեղ է մռնչիւն առիւծու․ Ճշմարիտ է բանն Աստուծոյ․ Չորք են կողմանք երկրի արեւելք, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ․ Աղի է ջուր ծովու․ Բարձր են գլուխք լերանց․ Խոր են անդունդք երկրի․ Անբաւ է հեռաւորութիւն աստեղաց․ Անհուն է ընդարձա-

կութիւն տիեզերաց. Մեծ է օգուտ անձրեւոյ, ձեան եւ հողմոց. Կարեւոր են յոյժ լոյս եւ ջերմութիւն արեգական։

## 24. Հրահանգ

Բարեկամ քո եմ ես. Ծառայ իմ ես դու. Եղբայր իմ է նա. Ընկեր ձեր եմք մեք. Օգնական մեր էք դուք. Մանկունք իմ են նոքա. Ձեր է երկիրս այս կամ երկիրս. Մեր է գետդ. Որդիք իմ են սոքա. Գեղեցիկ է որդի իմ. Տգեղ է քոյն. Արդար են բանք ձեր. Անիրաւ է նոցայն. Ո՞վ են կամ իցեն դոքա Դստերք իմ են սոքա. Սոքա են աշակերտք դպրոցիս. Այս է անուն իմ. Այսոքիկ են բանք նորա. Ես եմ վարդապետ որդւոյ ձերոյ. Սա է շինիչ եկեղեցւոյս. Մարգարէ ոմն ես դու. Մեղաւոր է դա. Արդար եմք մեք. Իմ է ամարանոցս գեղեցիկ. Նորա է ամենայն կարասի տանս. Քո է մանուկդ. Եղբօրորդի իմ է նա. Սիրելիք մեր էք դուք. Խեռ են որդիք քո. Հլու են իմքն. Սպիտակ է այդ. Թուխ է իմն։

## 25. Հրահանգ

Սիրեմ զբարեկամ իմ. Հայրն խրատէր զորդի իւր. Ընկերք իմ ատեն զիս. Մայրն խնամէ զդուստր իւր. Առաքեցաք զսպասաւորս մեր. Եղբայր քո կոչէ զքեզ. Աղաչեմ զձեզ. Հայր իմ գրեաց զթուղթս. Փակեաց զդուռն սենեկին. Սիրեսցուք զընկերս մեր. Հրաւիրեաց զբարեկամս իւր. Կերակրեցին զնոսա. Մերժեցին զօրէնս իմ. Խաբեցեր զիս. Պաշտեա զնոսա. Պահպանեա զմեզ. Քաղեցաք զպտուղս ծառոյն. Շինեաց զտուն իւր. Կործանեցին զաշտարակն. Կազմեցին զուռկանս իւրեանց. Թափեցաք զքուրձն.

Արձակեցից զնոսա. Վարդապետն պատժէ զաշակերտ իւր ստահակ. Փրկեսցէ զմեզ Աստուած. Արձակեցին զգերիս իւրեանց. Ոստիկանքն խնդրեն զգողն. Վաճառեցի զձին. Գնեցաք զմատեանն. Հայր մեր գնեաց զպարտէզս. Կոչեաց զամենայն բարեկամս իւր. Կոչէ կինն զդրացիս իւր. Հովիւք արածեն զխաշինս. Ես մատնեցից զնա. Պատառեաց քահանայապետն զհանդերձ իւր. Կինս այս սիրէ զմանկունս իւր. Սիրեմ զեղբարս իմ եւ զքորս. Ոռոգեցէ՞ր զծաղիկս քո. Ոռոգեցի զիմն եւ զքոյս. Քոյր իմ ոռոգեաց զիւրսն. Մշակք գործեն զերկիր. Կատարեաց զգործ իւր. Ժողովեսցուք զցորեանն. Այրեցին զյարդն. Ցրուեցին զամբոխն. Նուաճեաց զքաղաքն. Սրբեաց զպատուս իւր. Մի աղտեղեր զձորձս քո. Յարդարեցին զփողոցն. Զարդարեաց զտուն իւր. Կապեցին զձեռս եւ զոտս նորա. Թաղեսցուք զմեռեալս մեր. Խորտակեցին զբարձս նորա։ Եփեաց զուլն. Բաղխէր զդուռն տանն. Մկրտեցին զմանուկն. Վատնեաց զամենայն ինչս իւր. Օրհնեաց Աստուած զԱբրահամ.

## 26. Հրահանգ

Տեսե՞ր զայրն. Տեսի զնա. Գտաք զմարգարիտն գեղեցիկ. Հան զսուր իւր. Տեսաք զծառայս եւ զաղախնայս ձեր. Ճանապարհորդք մեր հասին. Սպասաւորն հան ի վեր զբանն. Անէծ հայրն զորդի իւր. Ածէք զմանկունս ձեր. Արկ զձորձս քո. Գտի զոչխար իմ զկորուսեալ. Ած զսուր քո. Կլցուք զնոսա. Եմուծ զմեզ. Անցանեն աւուրք մեր. Հատին զպարան մակուկին. Լուծին զկապանս նորա. Եցոյց զի-

տատութիւն իւր. Իջին անձրեւք. Ելանէ արեգակն. Լուսին եւ աստեղք մտանեն. Գտի զեղբարս քո. Տեսից զնոսա. Հարին զնա սպասաւորքն. Սպան զդուստր կնոջն այրւոյ. Լուցին զճրագն. Հարցուք զնոսա. Ելցեն արտաքս. Մտցուք ի ներքս. Հատ զգա. Մի լուծաներ զյաւանակդ. Ցոյց ինձ զերեսս քո. Սպանէք զնոսա:

## 27. Հրահանգ

Շահեցաւ արծաթ բազում. Կամիմ երթալ. Մարդիկ խօսին. Զօրքստանիք շրջին. Գայթակղեցաւ այրըն. Եղբարք ձեր մեկնեցան. Խօսեցան բազում ինչ. Գայթակղեցի ժողովուրդն. Խօսեաց, ընդէր լռես. Երեւեցաւ նմա հրեշտակ տեառն. Հայր քո աշխատի եւ շահի բազում ինչ. Վաստակեցան սպասաւորք ձեր. Բարուոք թուեցաւ ինձ. Եթէ մեկնեսցի մայր նոցա. Ցամաքեցաւ աղբիւրն. Ծնաւ զորդի իւր. Ողորմեցարուք մեզ. Ողորմեցաւ նմա Աստուած. Շարժեցան հիմունք երկրի. Արեգակն խաւարեսցի. Շիջաւ ճրագն. Խորհեցայ զայս ամենայն. Հնազանդեցարուք վարդապետաց ձերոց. Ուսաւ զարուեստ դրչութեան. Երեւեցան լեզուք. Ագաւ զհանդերձս իւր. Մեռաւ հայր քո. Մանկունքն կամ մանկտին սկսան աղաղակել. Անկաւ Բէլ. Շիջանին լապտերք մեր:

## 28. Հրահանգ

Նոքա բնակեն ի քաղաքի, մեք՝ ի գեղջ. Եղբարք քո շրջին ի լերինս, իմքն ի դաշտս. Ածին զնա առ դատաւորն. Խորհի երթալ ի Յոյնս. Կամեցաւ գալ առ մեզ. Եղբայր քո եմուտ ի պարտէզն. Առաքեաց

առ իս զբարեկամս իմ· Արկ զնա ի բանտ· Սպասաւորքն նստէին ի սրահին· Իբրեւ կատարեաց զբանս իւր, ել ի լեառնն· Եհան զնոսա ի լեառն մի բարձր· Որդիք քո անկան ի պատերազմի· Մուտ ի սենեակ քո· Տեսի զնա յեկեղեցւոջ· Յղեաց զնոսա յայգի իւր Բնակեցաւ ի Հայս· Ածաք զնոսա առ քեզ· Հայեցաւ ի նա· Գրեցէք զբանս զայսոսիկ ի մատեանս ձեր· Որդի նորա երէց էր յագարակի· Հատին զգլուխ նորա եւ բերին առ թագաւորն· Բազումք ելին յերուսաղէմ· Եմուտ ի մահիճս իւր· Ունէր գինի բազում ի մառանի իւրում· Բազումք տրտմեցին ի ծննդեան նորա· Սուգ մեծ եղեւ ի մահուան նորա· Աչք Իսահակայ վատեցին ի ծերութեան նորա· Ոչ ոք մխիթարէր զնա ի տրտմութեան· Ել Սողոմոն յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ· Հրաւիրեցին զմեզ ի տունս իւրեանց· Զիարդ մներ այսր, պատմեա ինձ· Դիմէր բազմութիւնն յեկեղեցին· Տեսին զնա ի տաճարին· Բազումք խնդասցեն ի ծննդեան նորա· Սուգ առ քաղաքն ամենայն ի մահուան նորա· Թռչունք ճախրեն յօդս· Էաք ժողովեալ ի տան ուրուք մեծատան· Օտարի ումեք ոչ տացէ· Եթէ ոք հակառակեսցի· Առաքեցէք զոք անդր· Մի մտանիցես ի տուն այլոյ ուրուք· Որպիսի ոք իցէ դա· Մե՞ծ ինչ ոք իցես դու· Եթէ ոք կամիցի գալ առիս ։

## 29. Հրահանգ

Խաղային մանկունքն ի հրապարակի անդ· Եղբարք իմ անսան միշտ վարդապետաց իւրեանց· ուսանին յաճախ եւ խաղան դուն ուրեք· Ընդէր լայ մանուկդ· Եբաց Նոյ զպատուհան տապանին· Կացաք առ

նոսա. Լուացի զձորձս իմ. Փութայր երթալ յերուսաղէմ. Զի՞ հեղգաս. աճապարեա, ել արտաքս. Ի բաց կացին զինուորքն. Իբրեւ տեսին զայս, խնդացին յոյժ. Թանայր զոտս նորա. Նոքա լացցեն, եւ դուք խնդասջիք. Իբրեւ զգաստացաւ, յայնժամ զղաց. Մոռացան առնուլ հաց. Խոստանայք եւ ոչ կատարէք. Իմացա՞յք զայս ամենայն. Ընթացաւ ի գերեզման անդր. Հան զպատմուճան իւր. Հիւանդացաւ այրն. Մերկացարուք զհանդերձս ձեր, եւ զգեցարուք քուրձս. Զօրացաւ յանկողնի իւրում. Սուգ առէք եւ ողբացարուք. Աշակերտք նորա գողացան զնա. Վերացաւ ամպն. Զի՞ զարմանայք. Մերձեցաւ ի նա. Մի մերձենար յիս. Դարձան ի տեղիս իւրեանց. Ստացաւ ագարակ. Եթէ վշտանայցէ ոք. Բարձէք զբեռինս ձեր. Ո՞վ եբաց զաչս քո. Լուաց զձեռս իւր.

## 30. Հրահանգ

Կամէր երթալ, այլ արգելին զնա. Թողէք զայրդ. Մի հեղուր զարիւն անպարտ. Եթող զնա եւ գնաց. Զենում ոչխարս եւ արջառս. Ընկեցին զկարասի նաւին ի ծով անդր. Լցէք զբաժակսդ. Ընթերցա՞ք զմատեանն կամ զգիրսն. Դպիրքն ընթերցան զհրովարտակն. Լցին զտեղի նոցա. Մի թողուր զիս. Զգեցաւ զհանդերձս իւր. Յենու ի ցուպ իւր. Զբօսնուին մանկունքն ի պարտիզի անդ. Առ զամփոր ջրոյն. Առի զարծաթն. Ածին զբերանս առիւծուց. Մի յաւելուր զցաւս նորա. Հեղձան ի ջուրսն. Մերկացարուք զձորձս ձեր հինս, եւ զգեցարուք նորս. Ժողովուրդն զբօսնոյր ի դաշտի անդ. Ընկեսցուք զլուծ

Նորա. Եզեն հայր քո զեզնն պարարակ. Լցէք զթակոյկսդ ջրով. Ընկեսցուք զնոսա աստի ի վայր. Ընդէր թողեր զիս. Թողից զքեզ որբ. Հեղցես զարիւն նորա ի գետին. Առ զիմն, եւ տուր ինձ զքոյն. Մատո զբաժակ քո զի լցից. Լցէք զտեղի անկելոցն. Խցաք զամենայն ծակ. Զո՞րն առցուք, եւ զո՞րն թողցուք. Եհերձ զվարագոյր տաճարին. Ի՞ւ խիք զբօսցուք. Զիարդ հեղից զարիւն եղբօր իմոյ. Ուստի՞ առից զարծաթն.

## 31. Հրահանգ

Ի լսել եկեալ է իմ. Նստան դատաւորքն ի դատել կամ ի դատաստան. Աչս ունիմ ի տեսանել, ականջս՝ ի լսել, ունգունս՝ ի ծծել զօդ, ձեռս կամ մատունս առ ի շօշափել. Եկեալ էին ի զնին տեսլեանն. Պիւթագորաս եդ օրէնս աշակերտաց իւրոց լռել եւ հրաժարել ի մսոյ. Ձիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ. Բերին ջուր լուանալ զոտս նոցա. Հան նոցա հաց եւ արմաւ ի կերակուր. Ունիք ջուր առատ ըմպել կամ յարբումն. Եւ նա ի դաշտ անդր ընդ երեկս առ ի զբօսնուլ. Արարին ջրադարձս (դանալ) եւ ջրմուղս (ջրոյ ճանբայ) ոռոգել զանդս որ անջրդի էին. Առաքեաց զօրս պահպանել զբերդն կամ ի պահ բերդին. Ապականեցին զերկիրն ի սուր եւ ի հուր. Անցուցին զօրն ողջոյն յուրախութիւն եւ յերգ. Ի ձայն փողոյ յառաջ մատուցանէր զզօրսն. Ասէր զայս ի ձայն ողորմ. Ապաշխարեցին ի խորգ եւ ի մոխիր. Խօսեցաւ զայս ամենայն ի մխիթարել զնա, կամ, ի մխիթարութիւն նորա. Երթամք այց առնել կամ յայցելութիւն հիւանդաց. Զայս արարին

ի ցուցանել զհաստատմութիւն իւրեանց, կամ, ի հանդէս հաստատմութեան իւրեանց։ Այս ածէին փախչելոյ անտի։ Կազմեցին գունդս հանել զթշնամին յաշխարհէն։ Եբաց զդուռն տանն հայել ի ներքս։ Էջ առ նոսա ի սիւն ամպոյ։ Թռեաւ ի թեւս հողմոց։ Գրեցի զայսոսիկ ի յիշատակ ազգաց եկելոց առյապա։ Եկեալ էին լսել զբանս նորա, կամ, յունկնդրութիւն բանից նորա։ Աշխատէր ի բան եւ ի գիր, կամ, գրով եւ բանիւ։ Արարի զգիրս զայս ի պէտս մանկանց։ Ետ նմա տուն ի բնակութիւն կամ ի բնակել, եւ անդս ի մշակել կամ ի մշակութիւն։ Երեր ոսկի եւ արծաթ նուիրել ի տաճար անդր, կամ, ի նուէր տաճարին։ Առաքեաց արս ի սպաս։ Ետու ձեզ զցորեանդ եւ զանասունսդ յուտեստ, կամ, ի պաշար, եւ զկտաւն ի հանդերձ։

## 32. Հրահանգ

Պատժիմք յԱստուծոյ։ Գողն եւ սպանող պատժին։ Բազումք տանջեցան ի բռնաւորաց։ Թշնամին հեռացաւ ի քաղաքէն։ Մարմինք նոցա հանան ի գերեզմանաց։ Դարձ յինէն։ Ելին ի մէնջ։ Իջանէին ի լեռնէ անտի։ Իբրեւ ել ի ջրոյ անտի։ Մեկնեցաւ ի տեղւոջէ անտի։ Լուաք զայս ի ձէնջ։ Բժշկեցան վէրք նորա։ Ծառայ հարիւրապետին ապաքինեցաւ ի չարաչար հիւանդութենէ անտի։ Ապրեսցի ի տանջանաց իւրոց։ Խնդրեցաւ վրէժ մահուանն Աբելի ի Կայենէ։ Լուծան կապանք լեզուի նորա։ Առաքեցաւ հրեշտակ յԱստուծոյ առ Յովսէփ։ Հայր իմ սպանաւ յաւազակաց։ Սահմանք երկնից բացան։ Փակեցին դրունք քաղաքին։ Եղբայր քո ընկեցաւ ի յորձանս

գետոյն· Հեղցի արիւն նորա· Ահա յուղարկիմք ի ձէնջ· Երկիրս պատի յօդոյ· Պաշարեալ է ցամաք ի ջրոյ· Պաշարեցաւ քաղաքն ի թշնամւոյն· Դղրդեցաւ երկիրն ամենայն· Հատաւ վէմ ի լեռնէ անտի· Բժշկեսցի մանուկն· Լուաք յինէն· Ի մէնջ են· Անիծաւ ի մօրէն· Աբէլ սպանաւ յեղբօրէ իւրմէ· Պարտիմք ելանել ի ճանապարհ· Ժողովեցաւ արծաթ բազում· Վրէժ մահու նորա խնդրեսցի ի նմանէ· Լցան ամանք նոցա· Առցի քաղաքն· Թօթափեսցին աստեղք· Երկիր սասանեսցի· Ել ի տանէ իմմէ· Երկիր յայնմանէ որ սպանանէ զհօգի· Ուսարուք յինէն· Զինչ խնդրէ ի քէն· Ոսկի, արծաթ եւ այլքն ամենայն ի քրէական նիւթոց հանին ի բովուց· Ամենայն ինչ ի հողոյ է, եւ ի հող դառնայ· Ի մէ՞նջ իցես թէ ի նոցանէ· Այդ ամենայն ի չարէն է· Խախտեցաւ ի հիմանէ։

## 33. Հրահանգ

| Ուղ· | Սեռ· | Բց· | Յփ. ուղ· | Սեռ(*)· |
|---|---|---|---|---|
| Ագարակ | ագարակի | յագարակէ· | Ագարակք | ագարակաց |
| Զանգակ | զանգակի | ի զանգակէ· | Զանգակք | զանգակաց· |
| Դաշտ, | դաշտի, | ի դաշտէ· | Դաշտք, | դաշտաց· |
| Գաւառ, | գաւառի, | ի գաւառէ· | Գաւառք, | գաւառաց· |
| Եղն, | եղին, | յեղանէ· | Եղինք, | եղանց· |
| Ձի, | ձիոյ, | ի ձիոյ· | Ձիք, | ձիոց· |
| Հսկայ, | հսկայի, | ի հսկայէ· | Հսկայք, | հսկայից· |
| Հռիփսիմէ, | Հռիփսիմեայ, | ի Հռիփսիմեայ· | | |
| Աստղ, | աստեղ, | յաստեղէ· | Աստեղք, | աստեղաց· |

(*) Յոգնակի բացառական առհասարակ յոք. սեռականէն առաջ ի, եւ եթէ անունը ձայնաւորով կը սկսի, յ նախդիրը դնելով կը շինուի։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արիւն, | արեան, | յարենէ. | Արիւնք, | արեանց. |
| Տեսիլ, | տեսլեան, | ի տեսլենէ. | Տեսիլք, | տեսլեանց. |
| Ագի, | ագւոյ, | յագւոյ. | Ագիք, | ագեաց. |
| Բերան, | բերանոյ, | ի բերանոյ. | Բերանք, | բերանոց. |
| Աթոռ, | աթոռոյ, | յաթոռոյ. | Աթոռք, | աթոռոց. |
| Ալի, | ալւոյ, | յալւոյ. | Ալիք, | ալեաց. |
| Բարի, | բարւոյ, | ի բարւոյ. | Բարիք, | բարեաց. |
| — | — | — | Բարք, | բարուց. |
| — | — | — | Փառք, | փառաց. |
| — | — | — | Վարք, | վարուց. |
| Դուռն, | դրան, | ի դրանէ. | Դրունք, | դրանց. |
| Դեղ, | դեղոյ, | ի դեղոյ. | Դեղք, | դեղոց. |
| — | — | — | Հարսանիք, | հարսանեաց. |
| — | — | — | Աչք, | աչաց. |
| Ակն, |ական, | յականէ. | Ակունք, Ականք | ականց. |
| Հարսն, | հարսին, | ի հարսնէ. | Հարսունք, | հարսանց. |
| Մանուկ, | մանկան, | ի մանկանէ. | Մանկունք, | մանկանց. |
| Սենեակ, | սենեկի, | ի սենեկէ. | Սենեակք, | սենեկաց. |
| Ատեան, | ատենի, | յատենէ. | Ատեանք, | ատենից. |
| Աղբիւր, | աղբեր, | յաղբերէ. | Աղբերք, | աղբերաց. |
| Երկիւղ, | երկիւղի, | յերկիւղէ. | Երկիւղք, | երկիւղից. |
| Յոյս, | յուսոյ, | ի յուսոյ. | Յոյսք, | յուսոց. |
| Ձայն, | ձայնի, | ի ձայնէ. | Ձայնք, | ձայնից. |
| Յիմար, | յիմարի, | ի յիմարէ. | Յիմարք, | յիմարաց. |
| Իմաստուն, | իմաստնոյ, | յիմաստնոյ, | Իմաստունք, | իմաստնոց. |
| Տուն, | տան, | ի տանէ. | Տունք, | տանց. |
| Մեծատուն, | մեծատան, | ի մեծատանէ. | Մեծատունք, | մեծատանց |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աղքատ, | աղքատի, | յաղքատէ· | Աղքատք, | աղքատաց· |
| Թագաւոր, | թագաւորի, | ի թագաւորէ· | Թագաւորք, | թագաւորաց· |
| Ծով, | ծովու, | ի ծովէ· | Ծովք, | ծովուց· |
| Սով, | սովու, | ի սովէ· | Սովք, | սովուց· |
| Զարդ, | զարդու, | ի զարդուէ· | Զարդք, | զարդուց· |
| Ագռաւ, | ագռաւու, | յագռաւէ· | Ագռաւք, | ագռաւուց· |
| Զօր, | զօրու, | ի զօրուէ· | Զօրք, | զօրաց· |
| Զգեստ, | զգեստու, | ի զգեստէ· | Զգեստք, | զգեստուց· |
| Բարձր, | բարձու, | ի բարձուէ. | Բարձունք, | բարձանց· |
| Թանձր, | թանձու, | ի թանձուէ. | Թանձունք. | թանձունց |
| Մանր, | մանու, | ի մանուէ· | Մանունք, | մանունց· |
| Փոքր, | փոքու, | ի փոքուէ· | Փոքունք, | փոքունց· |
| Մեղր, | մեղու, | ի մեղուէ· | — | — |
| Ասր, | ասու, | յասուէ· | — | — |
| Լեառն, | լերին, | ի լեռնէ· | Լերինք, | լերանց· |
| Ամառն, | ամարան, | յամարանէ. | Ամարունք, | ամարանց· |
| Ձմեռն, | ձմերան, | ի ձմերանէ. | Ձմերունք, | ձմերանց· |
| Գարուն, | գարնան, | ի գարնանէ. | Գարունք, | գարնանց· |
| Աշուն, | աշնան, | յաշնանէ· | Աշունք, | աշնանց· |
| Պտուղ, | պտղոյ, | ի պտղոյ· | Պտուղք, | պտղոց· |
| Տեղի, | տեղւոյ, | ի տեղւոջէ, ի տեղւոյ· | Տեղիք, | տեղեաց· |
| Գօտի, | գօտւոյ, | ի գօտւոյ· | Գօտիք, | գօտեաց· |
| Մորի, | մորւոյ, | ի մորւոյ· | Մորիք, | մորեաց· |
| Քուն, | քնոյ, | ի քնոյ· | Քունք, | քնոց· |
| Հայկ, | Հայկայ, | ի Հայկայ· | — | — |
| Արամ, | Արամայ, | յԱրամայ· | — | — |
| Դաւիթ, | Դաւթի, | ի Դաւթէ· | — | — |
| Սողոմէ, | Սողոմեայ, | ի Սողոմեայ· | — | — |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եւգինէ, | Եւգինեայ, | յԵւգինեայ. | — | — |
| Տիւ, | տուընջեան, | ի տուէ. | Տիւք, | տուոց. |
| | | ի տուընջենէ. | | |
| Մայր, | մօր, | ի մօրէ. | Մարք, | մարց. |
| Մայր, | մայրի, | ի մայրէ. | Մայրք, | մայրից. |
| Երկին, | երկնի, | յերկնէ. | Երկինք, | երկնից. |
| Երկիր, | երկրի, | յերկրէ. | Երկիրք, | երկրաց. |
| Գիւղ, | գեղջ, | ի գեղջէ. | Գիւղք, | գիւղից. |
| Կին, | կնոջ, | ի կնոջէ. | Կանայք, | կանանց. |
| Տիկին, | տիկնոջ, | ի տիկնոջէ. | Տիկնայք, | տիկնանց. |
| Տէր, | տեառն, | ի տեառնէ. | Տեարք, | տերանց. |
| — | — | — | Միտք, | մտաց. |
| — | — | — | Կամք, | կամաց. |
| Մուկն, | մկան, | ի մկանէ | Մկունք, | մկանց. |
| Գալուստ | գալստեան | ի գալստենէ. | Գալուստք, | տեանց. |
| Կորուստ | կորստեան | ի կորստենէ. | Կորուստք, | տեանց. |
| Փախուստ, | տեան, | ի փախստենէ. | Փախուստք, | տեանց. |
| Երգումն | երգման, | յերգմանէ. | Երգմունք, | երգմանց. |
| Դառնութիւն, | թեան, | ի դառնութենէ. | Թիւնք | թեանց |
| Բարութիւն, | թեան, | ի բարութենէ. | » | » |
| Անկիւն, | անկեան, | յանկենէ. | Անկիւնք, | անկեանց. |
| Շուն, | շան, | ի շանէ. | Շունք, | շանց. |
| Ձիւն, | ձեան, | ի ձեանէ. | Ձիւնք, | ձեանց. |
| Կարկուտ | կարկտի, | ի կարկտէ. | Կարկուտք, | կարկտից. |
| Անձրեւ, | անձրեւի, | յանձրեւէ. | Անձրեւք, | անձրեւաց. |
| Պատճառ, | ճառի, | ի պատճառէ. | Պատճառք | պատճառաց |
| Պատկեր, | կերի, | ի պատկերէ. | Պատկերք | պատկերաց. |
| Պատիժ, | պատժոյ, | ի պատժոյ. | Պատիժք, | պատժոց. |
| Արարած, | րածոյ, | յարարածոյ. | Արարածք, | արարածոց |
| Գործուած, | ուածոյ, | ի գործուածոյ. | Գործուածք, | ծոց. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դարձուած, | ուածոյ, | ի դարձուածոյ. | Դարձուածք, | ծոց |
| Աղի, | աղւոյ, | յաղւոյ. | Աղիք, | աղեաց. |
| Կերակուր | կերակրոյ | ի կերակրոյ. | Կերակուրք | կերակրոց. |
| Հովիւ, | հովուի, | ի հովուէ. | Հովիւք, | հովուաց. |
| Անիւ, | անուոյ, | յանուոյ. | Անիւք, | անուոց. |
| Պատիւ, | պատուոյ, | ի պատուոյ. | Պատիւք, | պատուոց. |
| Թիւ, | թուոյ, | ի թուոյ. | Թիւք, | թուոց. |
| Ազդր, | ազդեր, | յազդերէ. | Ազդերք, | ազդերաց. |
| Դուստր, | դստեր, | ի դստերէ. | Դստերք, | դստերաց. |
| Ուստր, | ուստեր, | յուստերէ. | Ուստերք, | ուստերաց. |
| Ոսկի, | ոսկւոյ, | յոսկւոյ. | Ոսկիք, | ոսկւոց. |
| Ուղի, | ուղւոյ, | յուղւոյ. | Ուղիք | ուղեաց ուղւոց |
| Հեղի, | Հեղեայ, | ի Հեղեայ. | — | — |
| Քար, | քարի, | ի քարէ. | Քարինք, | քարանց. |
| Ձեռն, | ձեռին, | ի ձեռանէ. | Ձեռք, | ձեռաց. |
| Ոտն, | ոտին, | յոտանէ. | Ոտք, | ոտից. |
| Պատե- | պատե- | ի պատե- | Պատերազմք, | պատե- |
| րազմ, | րազմի, | րազմէ. | Պատերազմունք, | րազմաց. |
| Փրկիչ, | փրկչի, | ի փրկչէ. | Փրկիչք, | փրկչաց. |
| Մկրտիչ, | մկրտչի, | ի մկրտչէ. | Մկրտիչք, | մկրտչաց. |
| Արարիչ, | արարչի, | յարարչէ. | Արարիչք, | արարչաց. |
| Գլուխ, | գլխոյ, | ի գլխոյ. | Գլուխք, | գլխոց. |
| Որդի, | որդւոյ, | յորդւոյ | Որդիք, | որդւոց. |
| Հոգի, | հոգւոյ, | ի հոգւոյ. | Հոգիք, | հոգւոց. |
| Ջուր, | ջրոյ, | ի ջրոյ. | Ջուրք, | ջրոց, ջուրց. |
| Հուր, | հրոյ, | ի հրոյ. | Հուրք, | հրոց. |
| Համբոյր | համբուրի | ի համբուրէ | Համբոյրք | համբուրից. |
| Ողջոյն, | ողջունի, | յողջունէ. | Ողջոյնք, | ողջունից. |
| Սաստ, | սաստի, | ի սաստէ. | Սաստք, | սաստից. |
| Խրատ, | խրատու, | ի խրատուէ. | Խրատք, | խրատուց. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գոյն, | գունոյ, | ի գունոյ· | Գոյնք, | գունոց· |
| Գող, | գողոյ, | ի գողոյ· | Գողք, | գողոց· |
| Քօղ, | քօղոյ, | ի քօղոյ· | Քօղք, | քօղոց· |
| Ամպ, | ամպոյ, | յամպոյ· | Ամպք, | ամպոց· |
| Շունչ, | շնչոյ, | ի շնչոյ· | Շունչք, | շնչոց· |
| Հողմ, | հողմոյ, | ի հողմոյ· | Հողմք, | հողմոց· |
| Կոգի, | կոգւոյ, | ի կոգւոյ· | — | — |
| Հող, | հողոյ, | ի հողոյ· | Հողք, | հողոց· |
| Մրրիկ, | մրկի, | ի մրկէ· | Մրրիկք, | մրկաց· |
| Գետին, | գետնոյ, | ի գետնոյ· | Գետինք, | գետնոց· |
| Օդ, | օդոյ, | յօդոյ· | Օդք, | օդոց· |
| Լոյս, | լուսոյ, | ի լուսոյ· | Լոյսք, | լուսոց· |
| Իմաստութիւն, | իմաստութեան, | յիմաստութենէ· | Իմաստութիւնք, | իմաստութեանց· |
| Գիտութիւն, | գիտութեան, | ի գիտութենէ· | Գիտութիւնք, | գիտութեանց· |
| Հանճար, | հանճարոյ, | ի հանճարոյ· | Հանճարք | հանճարոց· |
| — | — | — | Խելք, | խելաց· |
| Ուղեղ<br>Ուղիղ | ուղղոյ, | յուղղոյ· | Ուղեղք<br>Ուղիղք | ուղղոց· |
| Որդն, | որդան, | յորդանէ· | Որդունք, | որդանց· |
| Որթ, | որթոյ, | յորթոյ· | Որթք, | որթոց· |
| Որթ, | որթու, | յորթէ· | Որթք, | որթուց· |
| Խաշն, | խաշին, | ի խաշանէ· | Խաշինք, | խաշանց· |
| Աշխար, | աշխարի, | յաշխարէ· | Աշխարք, | աշխարաց· |
| Առիւծ, | առիւծու, | յառիւծէ· | Առիւծք, | առիւծուց· |
| Արծուի, | արծուոյ, | յարծուէ· | Արծուիք, | արծուեաց· |
| Թռչուն, | թռչնոյ, | ի թռչնոյ· | Թռչունք, | թռչնոց· |
| Հաւ, | հաւու, | ի հաւէ· | Հաւք, | հաւուց· |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Չորքո- | չորքո- | ի չորքո- | Չորքո- | չորքոտան- |
| տանի, | տանւոյ, | տանւոյ. | տանիք, | եաց. |
| Ծաղիկ, | ծաղկի, | ի ծաղկէ. | Ծաղիկք, | ծաղկաց. |
| | ծաղկան, | | ծաղկունք | ծաղկանց. |
| Ծառ, | ծառոյ, | ի ծառոյ. | Ծառք, | ծառոց. |
| Բանջար, | բանջարոյ | ի բանջարոյ. | Բանջարք, | բանջարոց. |
| Խոտ, | խոտոյ, | ի խոտոյ. | Խոտք, | խոտոց. |
| Սերմն, | սերման, | ի սերմանէ. | Սերմանք, | սերմանց. |
| Տերեւ, | տերեւոյ, | ի տերեւոյ. | Տերեւք, | տերեւոց. |
| Բուն, | բնոյ, | ի բնոյ. | Բունք, | բնոց. |
| Փայտ, | փայտի, | ի փայտէ. | Փայտք, | փայտից. |
| Բողբոջ, | բողբոջոյ, | ի բողբոջոյ. | Բողբոջք, | բողբոջոց. |
| Արմատ, | արմատոյ, | յարմատոյ. | Արմատք, | արմատոց. |
| Ողկոյզ, | ողկուզոյ, | յողկուզոյ. | Ողկոյզք, | ողկուզոց. |
| Խաղող, | խաղողոյ, | ի խաղողոյ. | Խաղողք, | խաղողոց. |
| Ծուխ, | ծխոյ, | ի ծխոյ. | Ծուխք, | ծխոց. |
| Բոց, | բոցոյ, | ի բոցոյ. | Բոցք, | բոցից. |
| Ժամանակ, | նակի, | ի ժամանակէ. | Ժամանակք, | նակաց. |
| Օր, | աւուր, | յօրէ. | Աւուրք, | աւուրց. |
| Ամ, | ամի, | յամէ. | Ամք, | ամաց. |
| Տարի, | տարւոյ, | ի տարւոյ. | Տարիք, | տարեաց. |
| Դար, | դարու, | ի դարէ. | Դարք, | դարուց. |
| Բան, | բանի, | ի բանէ. | Բանք, | բանից. |
| Գիր, | գրոյ, | ի գրոյ. | Գիրք, | գրոց. |
| Մատեան, | մատենի, | ի մատենէ. | Մատեանք, | մատենից. |
| Գրիչ, | գրչի, | ի գրչէ. | Գրիչք, | գրչաց. |
| Սուր, | սրոյ, | ի սրոյ. | Սուրք. | սրոց. |
| Աղեղն, | աղեղան, | յաղեղանէ. | Աղեղունք, | աղեղանց |
| — | — | — | կառք, | կառաց. |
| Սայլ, | սայլի, | ի սայլէ. | Սայլք, | սայլից. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| (Ինչ, | ընչի, | յընչէ)· | Ինչք, | ընչից· |
| (Ունչ, | ընչի, | յընչէ·) | Ունչք, | ընչաց· |
| Իժ, | իժի, | յիժէ· | Իժք, | իժից· |
| Իլ, | իլոյ, | յիլոյ· | Իլք, | իլոց· |
| Իր, | իրի, | յիրէ· | Իրք, | իրաց· |
| Իմ, | իմոյ, | յիմմէ· | Իմք, | իմոց· |
| Ձեր, | ձերոյ, | ի ձերմէ· | Ձերք, | ձերոց· |
| Քո, | քոյ, | ի քումմէ· | Քոյք, | քոց· |
| Իւր, | իւրոյ, | յիւրմէ· | Իւրք, | իւրոց· |

Այն այնորիկ յայնմանէ· Այնոքիկ այնոցիկ յայնցանէ
Այդ այդորիկ յայդմանէ· Այդոքիկ այդոցիկ յայդցանէ
Այս այսորիկ յայսմանէ· Այսոքիկ այսոցիկ յայսցանէ
Սա, սորա, ի սմանէ· Սոքա, սոցա, ի սոցանէ.
Դա, դորա, ի դմանէ· Դոքա, դոցա, ի դոցանէ.
Դու, քո, ի քէն· Դուք, ձեր, ի ձէնջ.
Ես, իմ, յինէն· Մեք, մեր, ի մէնջ·
Նա, նորա, ի նմանէ· Նոքա, նոցա, ի նոցանէ·

## 34. Հրահանգ

Բարեկամ իմ եկն առ իս· Առաքեցի զնոսա առ ձեզ· Գնացաք առ տանուտէրն· Պատգամաւորքն եկին առ սպաշտօնեայն· Գրեցաք առ դատաւորն· Բնակի առ եղբօր իւրում· Արքդ այդոքիկ հիւր են առ մեզ· Բողոքեմ առ կայսր· Զայս գիշեր առ մեզ ագիր· Լուծաւ առ նմա· Առաքեաց առ նոսա զորդի իւր սիրելի· Ընդէ՞ր գրեցէք առ մեզ· Եմուտ առ դրացին· Մահապարտ է այրն առ որում գտցի արծաթն· Ճչէր առ ցաւոցն· Գոչէին առ խնդութեան· Հաչէր ի ցանկութենէն· Մեռանիմ ի կարօտոյ· Հայ-

հոյէր առ ցասման. Ածէք զնա առ իս. Եկին առ դատաւորն. Երթայց առ հայր իմ. Առէք առ իս կուժ նոր. Եկայք, եկցուք առ նա. Մատուցաւ առ նա պարտապան մի. Առ աչին ոչ ընդդիմացաւ նմա. Հիւծեալ էր առ անսուաղութեան. Դարձ առ այր քո. Ցուցի զնա առ բարեկամն իւր. Ած զնա առ իւր. Տարայք զմանուկդ առ մայր իւր. Նստէր առ պատուհանին. Կարդացին առ Աստուած, եւ նա փրկեաց զնոսա. Եկաց առ վշտին. Առ չժուժել նախատանացն մեկնեցաւ անտի. Մօրու ոչ բնակէ առ ուրջուին. Ո՞ւր իցէ եղբայր քո. Առ յօրային կամ առ հօրուին իւրում է. Ընդէր եկիր առ իս. Էի առ քեռւոյն իմում. Ցո՞ առաքելոց ես զիս. Առ աներ իմ, տալ նմա աւետիս եթէ ուստր մի եղեւ ինձ. Եղբայր քո հիւր է առ իս. Մի մերձենայք առ նոսա: էջ առ մեզ ի լեռնէ անտի. Տուր զայս աղքատին որ առ դրան կայ. Ոչ ոք համարձակէր մատչել առ նա. Ոչ ոք էր առ նմա բաց ի դստերէ իւրմէ միամօրոյ. Մեք բնակէաք առ ծովակին, նոքա՝ ի վերայ բլրոյն. Գիտէր եթէ առ ատելութեան չարախօսէին զնմանէ. Ամբաստան եղեն զնմանէ առ թագաւորն.

## 35. Հրահանգ

| Բայանուն. | | Բայանուն. | |
|---|---|---|---|
| Սիրեմ, | Սէր. | Ատեմ. | Ատեաց. |
| Կապեմ, | Կապ. | Պատեմ, | Պատ. |
| Կոծեմ, | Կոծ. | Գիտեմ, | Գէտ. |
| Տեսանեմ, | Տես. | Բեկանեմ, | Բեկ. |
| Կորանամ, | Կոր. | Արկանեմ, | Արկու. |
| Զգեմ, | Զիգ. | Կիզում, | Կէզ. |

Ծնանիմ, Ծին· Գործեմ, Գործ·
Կլանեմ, Կուլ· Հարկանեմ, Հար·
Պաշեմ, Պաշ·

---

Հայրենիքը սիրող, Հայրենասէր· Ակունքով կապուած, Ականակապ· Ալիքներէ, հովէ կոծուած· Ալէկոծ, հողմակոծ· Երազ տեսնող, Երազատես· Աչուըները կորացած, Ակնկոր· Ակօս ձգող, Ակօսաձիգ· Նետ, քար ձգող, Նետաձիգ, քարաձիգ· Կրակ ձգող, Հրձիգ· Ահիւ բեկած, Ահաբեկ· Ծանրութենէն բեկած, Ծանրաբեկ· Գազաններէ բեկած, Գազանաբեկ· Ահ արկանող, Ահարկու· Խունկ արկանող, Խնկարկու· Տաքէն, ցուրտէն կիզեալ, Տօթակէզ, ցրտակէզ· Իր տէրն ատող, Տիրատեաց· Ինչք ատող, Ընչատեաց· Արծաթով, սառոյցով, մութով պատած· Արծաթապատ, սառնապատ, մթապատ· Ծածուկ գիտցող, Ծածկագէտ· Ձեռքի գործ գիտցող, Ձեռագէտ· Անձրեւ ծնանող, Անձրեւածին· Երկրէ, ծովէ, ջուրէ, հողէ ծնած· Երկրածին, ծովածին, ջրածին, հողածին· Ծովէն կլլուած· Ծովակուլ· Ոգին պահող, Ոգեպահ· Ուխտ, պատուիրանք, ոխ պահող, Ուխտապահ, պատուիրանապահ, ոխապահ· Այգի, երկիր, հող գործող· Այգեգործ, երկրագործ, հողագործ· Նաւ, հաց, իւղ գործող· Նաւագործ, հացագործ, իւղագործ· Պղինձ գործող· Պղնձագործ· Չար, բարի, ժանտ, զազիր, եղեռն, ոճիր գործող· Չարագործ, բարեգործ, ժանտագործ, զազրագործ, եղեռնագործ, ոճրագործ· Մազէ գործուած, Մազագործ· Ասեղով, ձեռքով գործուած, Ասեղնագործ, ձեռագործ·

Սրինգ , քնար , փող հարկանող , Սրնգահար , քնարահար , փողահար · Դիւէ , նետէ , շանթէ , սուրէ , ցուրտէ , խորշակէ հարեալ · Դիւահար , նետահար , շանթահար , սուսերահար , ցրտահար , խորշակահար ։

---

| | | | |
|---|---|---|---|
| Խնդրեմ, | Խնդիր · | Արգելում, | Արգել · |
| Խանձիմ, | Խանձ · | Խօսիմ, | Խօս · |
| Հեղում , | Հեղ · | Ասեմ, | Ասաց · |
| Գնեմ, | Գին · | Քարշեմ , | Քարշ · |
| Օծանեմ , | Օծ · | Վարեմ, | Վար · |
| Ձուլեմ, | Ձոյլ · | Վաճառեմ , | Վաճառ · |
| Խլեմ , | Խիլ · | Մխեմ , | Մուխ · |
| Մեծարեմ , | Մեծար · | Շնչեմ , | Շունչ · |
| Առնում , | Առու · | Պարտուորեմ, | Պարտ · |
| Կռուիմ, | Կռիւ · | Սնանիմ, | Սուն · |
| Քաղեմ, | Քաղ · | Հասեմ, | Հաս · |
| | | Գտանեմ , | Գիւտ · |

---

Վրէժ , քէն խնդրող · Վրէժխնդիր , քինախնդիր · Նախանձով խնդրող , Նախանձախնդիր · Արեան , գէշի խանձած , Արիւնախանձ , գիշախանձ · Արիւն թափող , Արիւնահեղ · Արծաթով գնուած , Արծաթագին · Մարդ գնող , Մարդագին · Ոսկւով , արծաթով օծուած , Ոսկեզօծ , արծաթազօծ · Արծաթէ , պղնձէ , ոսկիէ ձուլուած , Արծաթաձոյլ , պղնձաձոյլ , ոսկեձոյլ · Արմատէն խլուած , Արմատախիլ · Աւագները , հիւրերը մեծարող , Աւագամեծար , հիւրամեծար · Փոխ , աւանդ , կաշառ , պարգեւ , համար , վրէժ առնող , Փոխառու , աւանդառու , կաշառառու , պարգեւառու , համարառու , վրիժառու · Ե-

րախտիք առնող, Երախտառու. Բանիւ կռուող, Բանակռիւ. Ծաղիկ, պտուղ, հասկ, կրկուտ քաղող. Ծաղկաքաղ, պտղաքաղ, հասկաքաղ, կրկտաքաղ. Մայրերէն քաղուած, Մայրաքաղ. Բանտի, պատերու, քարերու մէջ արգիլուած, Բանտարգել, որմարգել, վիմարգել. Բարի խօսող, Բարեխօս. Չար խօսող, Չարախօս. Բարի, չար ըսող, Բարեասաց, չարասաց. Գետինը քսուող, Գետնաքարշ. Կառք, նաւ վարող, Կառավար, նաւավար. Գերի, մարդ վարող. Գերեվար, մարդավար. Հողմէն վարուած, Հողմավար. Գինի, ցորեն, մարդ վաճառող, Գինեվաճառ, ցորենավաճառ, մարդավաճառ. Ժամանակը վաճառող, Ժամավաճառ. Խորը, մէջը մխուող, Խորամուխ, միջամուխ. Մուխ, բոց, հուր, մահ շնչող, Մխաշունչ, բոցաշունչ, հրաշունչ, մահաշունչ. Աստուծմէ, հոգիէն շնչուած, Աստուածաշունչ, հոգեշունչ. Մահու, պատժոյ պարտաւորուած, Մահապարտ, պատժապարտ. Դատաստանով պարտաւորուած, Դատապարտ. Ջրոյ մէջ, կաթով սնած, Ջրասուն, Կաթնասուն. Տունը, մէկուն ձեռքը սընած, Տնասուն, ձեռնասուն. Զով տեղեր սնած, Հովասուն. Հուր, ջուր վազցնող, Հրահոս, ջրահոս. Դարէ վար նետուած, Դարահոս. Հնարք գտնող, Հնարագէտ։

## 36. Հրահանգ

| | | | |
|---|---|---|---|
| Այրիմ, | Այրեաց. | Կամիմ, | Կամ. |
| Գովեմ, | Գով. | Մոռանամ, | Մոռաց. |
| Ապլքիմ, | Ապուր. | Ուրանամ, | Ուրաց. |
| Գրեմ, | Գիր. | Պաշտեմ, | Պաշտ. |
| Զգենում, | Զգեաց. | Գնամ, | Գնաց. |

| | | | |
|---|---|---|---|
| Իմանամ, | Իմաց. | Շինեմ, | Շէն. |
| Սպանանեմ, | Սպան. | Պատմեմ, | Պատում. |
| Բերեմ, | Բեր. | Տարածեմ, | Տարած. |
| Ցուցեմ, | Ցոյց. | Խօսիմ, | Խօս. |
| Կրեմ, | Կիր. | Բխեմ, | Բուխ. |
| Կեամ, | Կեաց. | Զարդարեմ, | Զարդար. |
| Մտանեմ, | Մուտ. | | |

---

Անձկով այրող, Անձկայրեաց. Կէս այրած, կիսայրեաց. Ինքզինք գովող, Անձնագով. Ինքզինք ապրեցնող, Անձնապուր. Մատեան, պատմութիւն գրող, Մատենագիր, պատմագիր. Ձեռքով գրուած, Ձեռագիր. Խարազն, ծիրանի զգեցող, Խարազնազգեաց, ծիրանազգեաց. Բարի, չար կամեցող, Բարեկամ, չարակամ. Երախտիք մոռցող, Երախտամոռաց. Աստուած ուրացող, Աստուածուրաց. Աստուած, կուռք, դիք պաշտող, Աստուածապաշտ, կռապաշտ, դիցապաշտ. Ճամբայ քալող, Ուղեգնաց. Ծովով, նաւով գացող, Ծովագնաց, նաւագնաց. Հնարք իմացող, Հնարիմաց. Չար բաներ իմացող, Չարիմաց Տէրը, եղբայրը սպաննող, Տիրասպան, եղբայրասպան. Պտուղ, փուշ, անձրեւ, բուք բերող. Պտղաբեր, փշաբեր, անձրեւաբեր, բքաբեր. Խորերը, ջուրերուն մէջ յուզող, Խորայոյզ, Ջրայոյզ. Խռովութիւն, անձրեւ յուզող, Խռովայոյզ, անձրեւայոյզ. Նախանձէ յուզեալ, Նախանձայոյզ. Բեռ, ջուր կրող, Բեռնակիր, Ջրկիր. Վիշտ կրող, Վշտակիր. Լեռը, չինի մէջ ապրող, Լեռնակեաց, չինակեաց. Վիշտով ապրող, Վշտակեաց. Որջ, ծակ, խորը, մէջը մտնող. Որջամուտ, Ծա-

կամուտ, խորամուտ, միջամուտ. Պատ, խորան շինող, Որմաշէն, խորանաշէն. Տուն, աշխարհք շինող, Տնաշէն, աշխարհաշէն. Մարդով շէնցած, Մարդաշէն. Սուտ բաներ պատմող, Ստապատում. Դիւրին, դժուարին (ոճով) պատմուած, Դիւրապատում, դժուարապատում. Բազուկները տարածելով, Բազկատարած. Գետնի վրայ տարածուած, Գետնատարած. Առակ խօսող, Առակախօս. Որովայնէն խօսող, Որովայնախօս. Ատեանի մէջ խօսող, Ատենախօս. Հնութեանց վրայ խօսող, Հնախօս. Երկրէ բխած, Երկրաբուխ. Հուր, ջուր բխող, Հրաբուխ, Ջրաբուխ. Աստղերով, ծաղիկներով զարդարուած, Աստեղազարդ, ծաղկազարդ։

## 37. Հրահանգ

| | | | |
|---|---|---|---|
| Քաղցնում, | Քաղց. | Եփեմ, | Եփեաց. |
| Մածնում, | Մած. | Ամոքեմ, | Ամոք. |
| Կատարեմ, | Կատար. | Դարմանեմ, | Դարման. |
| Վարժեմ, | Վարժ. | Արածեմ, | Արած. |
| Մահանամ, | Մահ. | Զգենում, | Զգեստ. |
| Զուեմ, | Զու. | Ածեմ, | Ածու. |
| Պշնում, | Պիշ. | Կապեմ, | Կապ. |
| Կոխեմ, | Կոխ. | Կոտորեմ, | Կոտոր. |
| Առաքեմ, | Առաք. | Կտրեմ, | Կտուր. |
| Չափեմ, | Չափ. | Ցնորիմ, | Ցնոր. |
| Հոտիմ, | Հոտ, | Աղամ, | Աղաց. |
| Զգածնում, | Զգած. | Կերտեմ, | Կերտ. |
| Խորշիմ, | Խորշ. | Ճարակիմ, | Ճարակ. |
| Ընտրեմ, | Ընտիր. | | |

Ինչքի քաղցած, Ընչաքաղց· Տախտակով մած-
ուած, Տախտակամած. Կամք, հրաման կատարող,
Կամակատար, հրամանակատար· Ձի, մանուկ վար-
ժող, Ձիավարժ, մանկավարժ· Մտօք վարժուած,
մտավարժ. Սրով, սովով, թոյնելով մահացած. Սրա-
մահ, սովամահ, թունամահ· Խեղդուելով, հեղձ-
նլով մահացած, Խեղդամահ, հեղձամահ· Երկինք
չուող, Երկնաչու· Երկինք պշնող, Երկնապիշ· Մարմ-
նոյ, երկրի պշնող, Մարմնապիշ, երկրապիշ· Ոտ-
քով կոխուած, Ոտնակոխ· Երկինքէն առաքուած,
Երկնառաք· Երկիր չափող, Երկրաչափ· Ժանտ, չար
հոտող· Ժանտահոտ, չարահոտ· Սեւերով, մթով,
քուրձով զգածեալ, Սեւազգած, մթազգած, քրձա-
զգած· Իրը զգացող, Իրազգած· Մտքին մէջ խոր-
հող, Մտախորհ· Իրաւունքը խորհող, Իրաւախոհ·
Իրաւունքն ընտրող, Իրաւընտիր· Իւղ, հաց եփող,
Իւղեփեաց, հացեփեաց· Կերակուր ամոքող, Խա-
համոք· Խաշինք դարմանող, արածող, Խաշնադար-
ման, խաշնարած· Խարազն, ծիրանի, քուրձ, տե-
րեւ զգեցող· Խարազնազգեստ, ծիրանազգեստ,
քրձազգեստ, տերեւազգեստ· Բուն, պտուղ բե-
րող, Բնածու, պտղածու· Կամար (գօտի) կապող·
Կամարածու· Հոգ, խնամ տանող· Հոգածու, խնա-
մածու· Նուագ հանող, Նուագածու· Խունկ ծխող,
Խնկածու· Տղաք, մարդիկ, փայտ, սանձ, չերտեր
կոտրող· Տղայակոտոր, մարդակոտոր, փայտակո-
տոր, սանձակոտոր, չերտակոտոր· Ծայրերէն, կէ-
սէն, մէջտեղէն, մօտէն, տակէն կտրուած· Ծայրա-
կտուր, կիսակտուր, միջակտուր, մօտակտուր, տա-
կակտուր· Բարէ կտրուած, Բարակտուր· Խելքը

ցնորեցնող կամ ցնորած, Խելացնոր. Խունկ աղացող, Խնկաղաց. Մլոյ մէջ աղացող, Մլաղաց. Կաւէ, փայտէ, քարէ, կրկտէ կերտուած. Կաւակերտ, փայտակերտ, քարակերտ, կրկտակերտ. Հրաշքով կերտուած, Հրաշակերտ. Ձեռքով, Նկարով կերտուած, Ձեռակերտ, Նկարակերտ. Խոտ ճարակող, Խոտաճարակ։

## 38. Հրահանգ

Կապտեմ, Կապոյտ.
Դալեմ, Դալ.
Ծախեմ, Ծախ.
Շարժեմ, Շարժ.
Բառնամ, Բարձ.
Ծեծեմ, Ծեծ.
Խողխողեմ, Խողխող.
Վիժեմ, Վէժ.
Լնում, Լից, լի.
Սուզեմ, Սոյզ.
Ընկենում, Ընկէց.
Փորեմ, Փոր.
Խարեմ, Խար.

Հասանեմ, Հաս.
Հանեմ, Հան, հանու.
Ցուցանեմ, Ցոյց.
Կորուսանեմ, Կորոյս.
Հաստուցանեմ, Հաստոյց.
Հատանեմ, Հատ.
Յարդարեմ, Յարդար.
Բտիմ, Բուտ.
Քննեմ, Քնին.
Ջանգանեմ, Ջանգ.
Հեղձնում, Հեղձ.
Թափեմ, Թափ.

Դի, տաճար, սեղան կապող, Դիակապուտ, տաճարակապուտ. Մարդ դաւող, Մարդադաւ. Մարդ ծախող, Մարդածախ. Հովէն շարժած, Հողմաշարժ. Բեռ վերցնող, Բեռնաբարձ. Կական վերցնող, Կականաբարձ. Բրով, ազորով ծեծուած. Բրածեծ, ազորածեծ. Սրով խողխողուած, Սրախողխող. Գաճէ, քարէ նետուած. Գաճավէժ, քարավէժ. Գետի մէջ նետուած, Գետավէժ. Ծաղկով, հացով, պտղով,

որդերով, խնդութեամբ լեցուած, Ծաղկալից, հացալից, պտղալից, որդնալից, խնդալից. Գանիւ լեցուած, Գանալից. Գետի, ձեան, ջրոյ մէջ, խորը սուզած. Գետասոյզ, ձիւնասոյզ, ջրասոյզ: խորասոյզ. Տերեւը թափած, Տերեւաթափ. Նետ, շանթ, քար, կրակ նետող. Նետընկէց, շանթընկէց, քարընկէց, հրընկէց. Զէնքը, լուծը նետող, Զէնընկէց, լծընկէց. Գետը նետուած, Գետընկէց. Գետնի, քարի մէջ փորուած. Գետնափոր, քարափոր կամ վիմափոր. Եղեմէն խարած, Եղեմնախար. Ձեռքը հասցնող, Ձեռնհաս. Ձուկ, ջուր հանող, Ձկնահան, ջրհան. Միս հանող, Մսահան. Կինը հանող, Կնահան. Պատկեր հանող, Պատկերահան. Խաչ հանող, Խաչահանու. Հարկ հանող, Հարկահան. Ծուխ հանող, Ծխահան (ծխան). Բէն հանող, Բինահան. Երազ հանող, Երազահան. Ճամբայ, երազ, ժամեր, տօներ ցուցնող, Ուղեցոյց, երազացոյց, ժամացոյց, տօնացոյց. Պտուղը, յոյսը կորսնցնող, Պտղակորոյս, յուսակորոյս. Հետքը կորսուած, Հետակորոյս. Երախտիքը կորսնցնող, Երախտակորոյս. Վարձքը, երախտիքը, քէնը հատուցանող, Վարձահատոյց, երախտահատոյց, քինահատոյց. Քար, երկաթ կտրող, Քարահատ, երկաթահատ. Փայտ կտրող, Փայտահատ. Յոյսը, քունը հատած, Յուսահատ, քնահատ. Թաթերը կտրած, Թաթահատ. Երակը կտրող, Երակահատ. Մսէ կտրուած, Մսահատ. Տաճար, սեղան յարդարող, Տաճարայարդար, սեղանայարդար. Խոտով, ընդով բուող, Խոտաբուտ, ընդաբուտ. Խորունկ բաներ քննող, Խորաքննին. Երգումը, ախտը, պատուիրանքը, օրէնքը զանց ընող.

Երդմնազանց , ուխտազանց , պատուիրանազանց , օրինազանց · Ծովը խղդուած , Ծովահեղձ · Տերեւնե-րը թափած , Տերեւաթափ · Մարդէ , յիշողութենէ թափուր , Մարդաթափ , ուշաթափ · Ոխը թափող , Ոխաթափ · Նետ թափող , Նետաթափ ·

## 39 . Հրահանգ

| | |
|---|---|
| Ներկեմ , Ներկ · | Մանեմ , Մուն · |
| Ծփամ , Ծուփ · | Քանդակեմ , Քանդակ · |
| Խառնեմ , Խառն · | Պարարեմ , Պարար · |
| Կռեմ , Կուռ · | Դրժեմ , Դրուժ · |
| Կոփեմ , Կոփ · | Նենգեմ , Նենգ · |
| Հայիմ , Հայեաց · | Բարձրանամ , Բերձ · |
| Ամամ , Ամաց · | Լլկեմ , Լլուկ · |
| Կարեմ , Կար · | Ցրչեմ , Ցուչ · |
| Համբերեմ , Համբեր · | Նիւթեմ , Նիւթ · |
| Պատճառեմ , Պատճառ · | Կծանեմ , Կիծ · |
| Կրծեմ , Կուրծ · | Ցօղեմ , Ցօղ · |
| Ուտեմ , Կեր · | Երդնում , Երդումն · |
| Բնակիմ , Բնակ · | Դիեմ , Դիաց · |
| Ապաստանիմ, Ապաստան · | Վիրամ , Վիրայ · |

Ծիրանի ներկող , Ծիրանաներկ · Նարօտ ներկող , Նարօտաներկ · Ծովին մէջ ծփացող , Ծովածուփ · Ծծմբով , ծխով խառնուած , Ծծմբախառն , ծխախառն · Կռանով կռուած , Կռանակուռ · Բարէ կռուած , Բարակուռ · Բար կոփող , Բարակոփ · Ծովու վրայ նայող , Ծովահայեաց · Երկինք նայող , Երկնահայեաց · Ծովը թափող , Ծովամաց · Կօշիկ , խորան , կարող , Կօշկակար (կարուակ) , Խորանակար · Ուզածը կրցող , Կամակար · Խատութեան , փչ-

տերու համբերող, Խստամբեր, վշտամբեր. Հիւանդութիւն պատճառող (կեղծող), Խօթապատճառ. Կաշառք ուտող, Կաշառակուրծ. Գազաններէ բնակուած, Գազանաբնակ. Անտառներու մէջ բնակող, Անտառաբնակ. Իր անձին ապաւինող, Յանձնապաստան. Ոսկւով մանուած, Ոսկեման. Ոսկւով քանդակուած, Ոսկեքանդակ. Որովայնը պաշտող, Որովայնապաշտ. Ուխտին դրժող, Ուխտադրուժ. Տէրոջը դրժող, Տիրադրուժ. Ուխտը, տէրը նենգող, Ուխտանենգ, տիրանենգ. Մինչեւ երկինք բարձրացած, Երկնաբերձ. Սովէ լլկուած, Սովալլուկ. Չարիքը յիշող, Չարայուշ. Չարիք նիւթող, Չարանիւթ. Ջերմութեամբ կծանող, Ջերմակիծ. Սուտ բաներ յօդող, կամ, սուտութեամբ յօդուած, Ստայօդ. Սուտ երդուող, Ստերդումն. Ստինք դիեցող, Ստնդիաց. Վարս վիրող, Վարսավիրայ. Ճամբայ վիրող, Ռահվիրայ.

## 40. Հրահանգ

Ոչ գիտեն զօրէնս. Կարե՞ս ըմպել զբաժակն. Ասա ցիս. Ծառայի իմում ասեմ. Արա զայս եւ առնէ. Աբարի խրատունս եւ արդարութիւն. Արար Աստուած զերկինս եւ զերկիր. Արասցուք զկամս Աստուծոյ. Մի ասեր թէ չեմ կարող. Գիտէ զկամս նորա. Յարեաւ եւ կամէր երթալ. Մեղաւ ժողովուրդն. Մեղայ, զի հեղի զարիւն արդար. Ծառ որ ոչ առնէ պտուղ. Ասա ասացից քեզ Ասէ ցնա. Ասա ցիս. Ասաց ցիս յունկանէ. Դուք ոչ կարէք գալ անդր. Այժմ ոչ կարես գալ. Ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ. Դու գիտես զամենայն. Ոչ ոք կարէ մտանել ի ներ-

քըս. Ոչ գիտէի թէ աստ իցէ. Նա ասաց ցիս զամենայն. Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, յանդիմանեա զնա. Արի, եւ գնա. Ոչ մեղանչէին նմա գազանքն. Զինչ արար քեզ. Կամէր հարկանել զիս, այլ ոչ կարաց. Գիտեմ զի բարկասիրտ է այրն. Եթէ դու իցես, աստ մեզ համարձակ. Ասացի ձեզ, եւ ոչ հաւատայք. Խորհուրդ արարին զի սպանցեն զնա. Արար նմա ընթրիս. Եղեւ սով մեծ առ Նովաւ. Առ Տրդատաւ եւ առ Գրիգորիւ եղեւ դարձն Հայոց. Առ Դիոկղետիանոսիւ բազումք ի քրիստոնէից սպանան. Երթայաք առ ստորոտով լերինն. Բանակեցաւ զօրն առ դաշտիւն. Նաւէին առ ծովեզերբն մօտ ի ցամաքն. Ես ոչինչ եմ առ Նովաւ. Իմաստութիւն մեր փոքր ինչ է առ քոյովն. Որպէս մանուկ առ հսկայիւ, այնպէս ես դու առ Նովաւ. Երկիրս այս իբրեւ զգնդակ մի է առ արեգակամբ. Քրիստոս ծնաւ առ Հերովդիւ, եւ առ Պիղատոսիւ խաչեցաւ.

## 41. Հրահանգ

Լուայ զձայն նորա. Հայր քո ծանեաւ զիս. Տարաւ զնա առ թագաւորն. Տարան զնոսա ի տունս իւրեանց. Գազան չար եկեր զորդի իմ. Խուլք լսեն, եւ համերք խօսին. Լուր աղաչանաց իմոց. Լուարուք ինձ. Ոչ ճանաչեմ զքեզ. Ծանեան զնոսա արք տեղւոյն. Տար զմանուկդ առ մայր իւր. Տարայց զքեզ ի տուն իմ. Մի տանիք զնոսա յերկիր օտար. Ծանիր զքեզ. Եկեր մորախ զամենայն բանջար երկրին. Եղբայր քո շրջի ընդ նմա. Նստէր ընդ ծառովն. Շրջեցոյց զնա ընդ ամենայն քաղաքն. Սփռեցան ընդ երեսս դաշտին կամ ընդ դաշտն. Ել համբաւ ի քա-

ղաքին եթէ մեռաւ արքայ. Մի խօսիր ընդ իս. Անցեալ ընդ կիրճն պնդեցան զհետ նորա, այլ ոչ կարացին հասանել. Երթիցուք ընդ ծով. չիք մեզ ճանապարհ ընդ ցամաք. Մի ելանիցես ընդ դուռն որ ընդ արեւելս. Մտին ընդ յարկաւ իմով. Մտէք ընդ դուռն նեղ. Մի մտանէր ընդ նոսա ի պայքար. Երկոքին եղբարքն կագեցան ընդ միմեանս. Անց զօրն ըստ կամուրջն. Անցին նոքա ըստ հրաման տեառն իւրեանց. Ըստ մեզ՝ չէ ինչ դժուարին. Ջանասցուք ըստ կարի մերում. Ոչ ելին ըստ դաւիթն.

---

## ՔԵՐ. ԷՋ 125, ԲԱՑԵՐՈՒՆ ԲԱՑԱՆՈՒՆՆԵՐԸ

Բոյս. Հաւան. Բեկ. Շարժ. Թռիչ. Հաս. Յած. Կայ. կաց. կացու. Մահ. Վան. Մեռ. Հայեաց. Եփ. Ծաւալ. Ջինջ. Ծագ. Արթուն. Ցասումն. Ասաց. Գուշակ. Գէտ. Մուտ. Կէզ. Կեաց. Տարած. Խօս. Դատ. Բուղխ. Մարտ. Խամուր. Ընթաց. Կշիռ. Կորով. Շունչ. Սուն. Հաւատ. Գիւտ. Վէր. Ընծայ. Հեղյս. Հիմն. Մաղ. Ստեղծ. Կնիք. Դէմ. Կարգ. Բերձ. Պարծ. Գան. Լլուկ. Ձէն. Կազմ. Աւեր. Փուլ. Ցարոյց. Փուտ. Ամբարձ. Նուագ. Ցնոր. Պահ.

Նոյն էջին բարդերը, աշխարհաբարները. տես հոն.

Դիւրաբոյս, ինքնաբոյս. Դիւրահաւան, դիւրաբեկ. Ծանրաշարժ, արագաշարժ, մշտաշարժ. Բարձրաթռիչ. Երագահաս, վաղահաս. Ընդվայրայած. Առընթերակաց, շրջակայ, առաջիկայ. Ինքնակաց. Վերակացու. Խայտառակամահ. Ջրաջան, ժրաջան. Կիսամեռ, վաղամեռ. Քաղցրահայեաց, յառաջա-

Հայեաց. Կիսեփեաց. Լայնածաւալ. Համաջինջ. Ցանկարծածաղ. Ծանրարթուն, ծանրացասումն. Կանխասաց, կանխագուշակ, կանխագէտ, կանխահաս, կանխամուտ. Ողջակէզ. Երկայնակեաց, միայնակեաց. Մշտատարած, լայնատարած, համատարած. Ունայնախօս, արդարախօս, ուղղախօս. Արդարադատ, ուղղադատ. Ցանկարծաբուղխ, առատաբուղխ, յորդաբուղխ. Հակառակամարտ, ընդդիմամարտ. Արագախամուր. Արագընթաց, թեթեւընթաց, խուռնընթաց, զուգընթաց. Արդարակշիռ, Արդարակորով. Դառնաշունչ, քաղցրաշունչ, սաստկաշունչ. Դատարկասուն, անասուն, ընդվայրասուն, ընդարձակասուն, փափկասուն. Թերահաւատ, ուղղահաւատ, նորահաւատ. Զքնաղագիւտ, դիւրագիւտ, դժուարագիւտ. Ցանկարծագիւտ, յառաջագիւտ. Կարեվէր. Նորընծայ. Հաստահեղոյս, հաստահիմն. Մանրամաղ. Նախաստեղծ, նորաստեղծ. Նորակնիք. Յառաջադէմ, տարադէմ. Յառաջակարգ. Ուղղաբերձ. Ունայնապարծ, սնապարծ. Զարագան, չարալլուկ. Սպառազէն. Գնդակաղմ. Վաղաւեր, վաղափուլ, վաղափուտ, վաղայարոյց. Վերամբարձ. Քաղցրանուագ. Ցայգացնոր. Գիշերագնաց:

## 42. Հրահանգ

Լուաք զձայն նորա. Ցովսէփ ծանեաւ զեղբարս իւր. Առիւծ մտակ պաշտպանէ զկորիւնս իւր. Այր հողագործ մշակէ զերկիր. Քրիստափոր Կոլոմպոս եգիտ զԱմերիկա. Լուաք զնմանէ եթէ առ եղբօր իւրում է. Զինչ՝ խնդրէ խօսի կամ ճառէ մատեանդ. Ճառէ զքրէական նիւթոց. Ո՞ գրեաց զպատերազմէն

Վարդանանց. Զպատերազմն Վարդանանց գրեն Եղիշէ վարդապետ եւ Ղազար փարպեցի որ ժամանակակիցք են պատերազմին այնորիկ. Զումն՞ էին բանք ձեր. Բանք մեր զարքայորդւոյն էին. Սոքա ամբաստան լինին զնմանէ թէ զաղտ ձեռնտու է ի թշնամիս անդր. Զո՞ ասէք զինէն թէ իցեմ. Լսեմք զձէնջ թէ մեծատուն էք. Զոքան զիրոյ. Խնդրէին ինչ զի չարախօսեսցեն զնմանէ. Ածին պարիսպ զքաղաքաւն. Թշնամիք պատեցան զինեւ. Արկին զնովաւ քղամիդ կարմիր. Արկաւ զանձամբ զշանդերձ իւր. Կալեալ զձեռանէ նորա եմուծ ի ներքս. Կալեալ զհերաց նորա քարշէին. Ետես անօթ ինչ կախեալ զորմոցունց տանոյն. Խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ յեղջերացն. Կախեալ էր զմիոյ ոտանէն. Կախեցին զմանկունսն զպարանոցաց մարց իւրեանց. Ընդ ակամբ հայի ի քեզ, թուի թէ ունի ինչ խէթ զքէն Ծառայք նորա կային շուրջ զնովաւ. Կալաւ զշանգերձէ նորա Արկեալ էր զիւրեւ կտաւ, զի մերկ էր. Ցայտեցաւ յարենէ նորա զորմովն. Ոմանք յազգաց կռապաշտից սովոր էին ածել զմանկունս իւրեանց զբոցով. Պատմի զթագաւորէն մերմէ Վարազդատայ եթէ վազեաց նա զընթրատ գետով. Ի հնումն սովորութիւն էր քուրձ զգենուլ եւ հող զգլխով արկանել ի նշան սգոյ եւ ապաշխարութեան.

## 43. Հրահանգ

Եգի զմատեանն ի վերայ սեղանոյն. Եկին զկնի մեր. Երթայք ի տունս ձեր. Ի տուն օտարի մի երթիցես. Տուր ինձ զբաժին իմ. Հայր քո ոչ տայ պատասխանի. Ետու նմա զմատեանսն. Կալան ձկունս

բաղուամս․ Սպասաւորքն արբին զգինին․ Չոքաւ առ եղբայր իւր․ Ո՞ւր եդիր զնա․ Ետուն նմա պաշար ըստ բաւականին․ Երթիցուք գնել հաց․ Եդին զմարմին նորա ի գերեզմանի․ Եկայք առ իս․ Ունի արծաթ բազում․ Ոչինչ ունիմք․ Ընկալաւ զնա ի տուն իւր․ Եղբայր քո եկն առ իս․ Եկ ընդ իս, ցուցից քեզ զտեղին․ Տուք մեզ յիւղոյդ ձերմէ․ Զամենայն պէտս ձեր տաց ձեզ․ Չոքան ընդ իս ի դաշտ անդր․ Տուաք նոցա կերակուր փոխանակ արծաթոյ․ Եդից զպատկեր քո ի սենեկի իմում․ Վասն պարտուց եդաւ ի բանտի, կամ, արկաւ ի բանտ, այլ յետ ժամու միոյ հանաւ անտի․ Ընդէր տաս փոխ արծաթ առնդ այդմիկ․ Տամ նմա փոխ զի պէտս ունի արծաթոյ․ Ոչ ըմպեմ ջուր, զի չեմ ծարաւի․ Արբաք զինի, զի ոչ գտաք ջուր․ Ո՞ւր եդիր զմատանին․ Եդի զնա յարկեղ քում․ Յո՞ չոքաւ եղբայր քո․ Չոքաւ յորս․ Եկին զինուորքն եւ կամէին ունել զմեզ․ Եկն ընդ եղբօր իւրում․ Եղբայր նորա եկն ընդ նմա․ Եկայք ընդ մեզ․ Ունիմ ընդ ձեռամբ իմով․ Ունիք զինուորս ընդ իշխանութեամբ ձերով․ Յարձակեցան ի վերայ նոցա․ Մի լայք ի վերայ իմ․ Մի ածէք առաջի իմ․ Հանին զնա արտաքոյ քաղաքին․ Պատահեցաք նմա զճանապարհայն մերձ ի գիւղն․ Այս ամենայն գործեցաւ առաջի մեր․ Կայր նա արտաքոյ սենեկին, եւ ես՝ ի ներքոյ․ Շինեաց աղբիւր ի մէջ հրապարակին, եւ ի վերայ աղբերն կանգնեաց զիւր պատկեր․ Իբրեւ եկաք մօտ ի քաղաքն որ է յանդիման լերինն․ Այգեստանն չէ ինչ կարի հեռի ի շինէն․ Ի պարտէզ շուրջ զքաղաքաւն, եւ առ պարտիզաւն անցանէ գետ․ Կամէաք ելանել մինչեւ ի

գլուխ լերինն, այլ հազիւ կարացաք հասանել մինչեւ ցկէսն. Շուրջ եղեն զինեւ, եւ խնդրէին յինէն տալ զնա ի ձեռս նոցա. Յարեան ի վերայ նոցա. Նոքա որ առաջի մեր երթային՝ սկսան գալ զկնի մեր. Ոչ կամեցաք կալ յետոյ նոցա. Իբրեւ մտաք ընդ կամարակապ սրահիւն. Նաւն ընկէց խարիսխ հանդէպ աշտարակին. Չիք վտանգ ի ներքոյ նաւահանգստին, արտաքոյ նորա է վտանգն. Եկ մինչեւ յանկիւն փողոյին, եւ անտի դարձ յետս.

## 44. Հրահանգ

Հայր քո զարթեաւ եւ կոչէ զքեզ. Զարագործք երկնչին յիշխանութենէ. Ցասեաւ յանիրաւի. Հանդեայց ի տան իմում. Թռչունք հանգչին յոստս ծառոց. Երկիր յԱստուծոյ. Մի երդնուցուս սուտ. Զինուորք մեր մարտեան քաջութեամբ. Մատեաւ առ նա եւ աղաչէր զնա. Իբրեւ լուաւ զձայն նորա, փախեաւ. Երկեան ասել նմա զայս. Ընդէ՞ր երկնչիք ի նոցանէ. Փախերուք յանգգամաց. Երդուիր ինձ չմեղանչել նմա. Լեր հաւատարիմ ի բանս քո. Քաջ լերուք. Չիք աստ տեղի վասն իմ. Մի լինիր հեղգ. Իբրեւ զարթեան, տեսին զնա առ իւրեանս. Քաղցեայ եւ ոչ ետուք ինձ ուտել. Մանկունք հնազանդ լիցին ծնողաց իւրեանց. Պատրաստ լերուք առ վաղիւն. Եթէ իցէ անդ բարեկամ ոք. Զի՞ ցանուս. Զար ինչ ոչ գործեցի. Իցէ՞ աստ մեզ տեղի բաւական. Այր ոմն է աստ. Ոչ գոյր նոցա տեղի.

## 45. Հրահանգ

Տգիտութիւն քոյր է ամբարտաւանութեան. Դատարկութիւն մայր է ամենայն չարեաց. Ստէպ ըն-

Թերցուածք անդեղայ են ձանձրութեան. Գինի կաթըն է ձերոց. Առիւծ արձակ է այր բռնաւոր. Նշան անմեղութեան է շուշան. Ահագին է ցասումն առիւծու. Ո՞ւր իցէ հայր քո. Հայր իմ ի տան է. Եղեւ անդ աւուրս բազումս. Կին մի էր ի քաղաքին. Գազանք գոն յանտառի անդ. Ի պարտիզի անդ են եղբարք ձեր. Ի լինել իմում կամ մինչ էի ի բանտին. Չէր նա ընդ մեզ. Մահ է ի կաթսայի անդ. Ամբոխ բազում էր ի սրահին. Մայր իմ ի սենեկի իւրում է. Ամենեքին աստ են. Էին երկոքին ի միասին. Են աստ սուսերք երկու. Որդի նորա երէց էր յագարակին. Էր անդ այր մի. Սպասաւորք բազումք են ի տան հօր իմոյ. Դուք ի ծովու էք, մեք ի ցամաքի. Ի սրահի աստ են օտարականքն. Առ մեզ է հիւրն. Հարսանիք են ի տան աստ. Չիք պտուղ ի թզենւոջն. Արծաթ քո յարկեղ իմում է. Գերեզման նորա էր ի գաւթի եկեղեցւոյն. Երկիրն ի խաղաղութեան էր. Ծառն կենաց էր ի մէջ դրախտին. Սպասաւորք մեր ի դաշտի անդ են. Ի չինի անդ են քորք ձեր. Ո՞ւր իցէ մայր քո. Մայր իմ էր յեկեղեցւոջ. Էր անդ երամակ մի խոզից. Երկուք ի սպասաւորաց նորա են ի քաղաքի, երեքն՝ ի չինի. Աստ է մին ի նոցանէ:

## 46. Հրահանգ

Են իմ եղբարք երկու. Էին նորա ոչխարք եւ արջառք. Դուստր մի միամօր էր նորա. Է իմ մատեան մի. Պարտէզ մի փոքրիկ է եղբօր իմոյ. Է մեր տուն մի գեղեցիկ. Ապարանք մեծամեծք են նոցա. Զինուորք բազումք են թագաւորին այնորիկ. Չիք պաշար զօրաց նորա. Ուստր մի եւ դուստր մի են եղ-

բօր իմոյ. Իցէ՞ քոյ արծաթ բազում, բարեկամք բազումք են իմ. Իցե՞ն նոցա ծառայք եւ աղախնայք. Տուն մի մեծ է հօր իմոյ. Էր նորա շուն մի փոքրիկ. Չիք իմ տեղի. Ոչ գոն նոցա ծառայք եւ աղախնայք. Եղեւ նորա պատերազմ ընդ Եգիպտացիս. Աչք են նոցա եւ ոչ տեսանեն. ականջք են եւ ոչ լսեն. Բարեկամի իմոյ է շուն մի փոքր որ հաւատարիմ է յոյժ. Են մեր մատեանք բազումք. Է իմ այլ կամ միւս եւս տուն որ գեղեցիկ է յոյժ. Բարեկամք բազումք են մեր, երջանիկ եմք յոյժ. Ոչ գոն բարեկամք չարաց, եւ թշուառ են նոքա. Եղեւ նորա որդի մի. Չեղեւ նորա որդեակ. Ստացուած բազում է հօր իմոյ. Գութ մեծ էր կնոջն առ որդեակս իւր.

## 47. Հրահանգ

Ուսանողը այս հրահանգին մէջ գրուած չէզոք բայերն անցողականի պիտի փոխեն. Եւ որովհետեւ անցողական բայերը չէզոքներուն կատարեալ եզ. Ա դէմքին վերջի ձայնաւորն ուցանեն ի փոխելով կը շինուին, հոս այն բայերուն կատար. եզ. Ա դէմքը միայն կը դնենք, վերջին ձայնաւորը նօտր գրով նշանակելով.

Հատի. Շրջեցայ. Դարձայ. Մատեայ. Հասի. Վերացայ. Թռեայ. Ծանեայ. Զբօսայ. Շիջայ. Յարեայ. Գնայի. Կեցի. Կայի. Լացի. Խոնարհեցայ. Անայ. Ծնայ. Մեղայ. Բուսայ. Զօրացայ. Գօսացայ. Դառնացայ. Ուռայ. Ամաչեցի. Լցի. Զարմացայ. Իմացայ. Զգացի. Վրիպեցայ. Հաւանեցայ. Հաճեցայ. Յուսացայ. Մոռացայ. Մոլորեցայ. Բարձրացայ. Թուլացայ. Խստացայ. Սովորեցայ. Ժա-

ռանգեցի· Զովացայ· Ցրտացայ· Ուծացայ· Ջեռայ· Մեծացայ· Զարթեայ· Ագայ· Հնազանդեցայ· Դադարեցայ· Ապրեցայ· Տրտմեցայ։

## 48. Հրահանգ

Եղբայր քո ոչ հատուցանէ զպարտս իւր· Իբրեւ հատուցաւ մանուկն ի ստենէ· Կալեալ զձեռանէ նորա յարոյց· Աշակերտք նորա զարթուցին զնա· Ագուցի նմա զհանդերձս իւր· Ննջեցոյց զմանուկն ի վերոյ ծնգաց իւրոց· Զարմացուցանէր զբազումս· Դարձո զմանուկդ առ մայր իւր· Մատուցաւ առ նա պարտապան մի· Շիջուցին զհուրն· Ո՞ շիջոյց զճրագըն· Շրջեցոյց զնա ընդ ամենայն քաղաքն· Հնազանդեցոյց զամենայն ազգս· Դադարեցուցաք զնոսա անդէն զաւուրս երկուս· Ապրեցո զիս ի վտանգէս· Մի տրտմեցուցաներ զնա· Աշխատեցոյց զնոսա չարաչար· Նախ զնոսա անցոյց ըստ գետն, ապա անց եւ ինքն· Չտամ նմա խօսել· Ոչ տան մեզ ոգի առնուլ· Չետ նմա խօսել հակառակ մեզ· Ինքն ոչ գիտէ դպրութիւն, այլոց տայ գրել· Ետուն նմա ըմպել գինի· Տաց պատուհասել զձեզ· Ետ աքսորել զնա ի կղզի մի· Ոչ տամք ձեզ անցանել ընդ երկիր մեր· Ետ զենուլ ոչխարս երկուս· Եթէ տայցես ինձ տեսանել զորդիս իմ· Չտայ նոցա ճիկ հանել· Ետ տանել զնա ի տուն իւր· Հատո ինձ զպարտս քո· Զօրացո զիս զայս նուագ եւս· Դուստրն Փարաւոնի անոյց զՄովսէս· Մեծացոյց Աստուած զԱբրահամ·

## 49. Հրահանգ

Եղբայր իմ մեծատուն է իբրեւ զհայր քո, այլ չէ մեծատուն քան զիս· Տուն հօրեղբօր ձերոյ ընդար-

ձակ է իբրեւ զմերն· Մեծ է պարտէզս, այլ չէ գեղեցիկ քան զիմն· Առիւծ ոչ է անագորոյն քան զվագըր· Կամիմ քակել զտուն իմ, եւ ես գեղեցիկ շինել· Մանուկս այս զգօն եւ հանդարտ է քան զդուստըր քո· Ծովք խորագոյն եւ ընդարձակագոյն են քան զծովակս· Արդար էք դուք քան զիս· Անիրաւ եմ ես, դու անիրաւ ես քան զիս, եղբայր քո ամենեւին իսկ անիրաւ է· Մեծ ես դու քան զեղբայր իմ· այլ չես զգօնագոյն քան զնա· Ծառայք մեր երջանիկ են քան զձերն· Բժիշկ իմ ճարտար է քան զքոյն· Այրս այս մեծատուն է յոյժ· Ունի տունս աւելի քան զերեսուն· Դու զբազում խիք զբաղեալ ես, այլ եղբայր իմ զբաղեալ է քան զքեզ· Դու զբօնուս սակաւ, ես սակաւ քան զքեզ· իսկ քոյր մեր սակաւ եւս քան զմեզ· Օդ թեթեւ է քան զջուր· Որդի իմ իմաստուն է քան զքեզ· Լեառնս այս բարձր է քան զամենայն լերինս· Լաւ իցէ մեռանել յաշխարհի քան լինել փառանուն· Լաւ է շուն կենդանի քան զառիւծ մեռեալ· Հզօր են թագաւորք, այլ Աստուած հզօրագոյն է քան զնոսա· Զգօն է եղբայր քո, այլ եղբայր իմ զգօնագոյն եւս է քան զնա· Պարկեշտ է քոյր ձեր, այլ աղջկունք դպրոցի մերոյ պարկեշտագոյն են քան զնոսա· Մանկունքս այսոքիկ հանճարեղ են քան զհայր իւրեանց· Հողմ եւ ջուր բուռն եւ ուժգին են քան զամենայն ինչ· Չիք գազան ահագին քան զառիւծ· Լոյս արեգական պայծառ է քան զլոյս լուսնի· Հոգի առաւել է քան զմարմին· Փոքր է լուսին քան զայլ աստեղս· Են աստեղք որ մեծ են քան զարեգակն· Գինի հին պատուական է քան զնորն· Լեառն Նպատ չէ ինչ բարձր քան զԱ-

բարառ։ Սեաւ Ծով ամբոխի յաճախ քան զՄիջերկրականն։ Այրս այս ճանապարհորդէ առէպ քան զմեզ։ Լերինքս այսոքիկ բարձր են յոյժ։ Սաստիկ է յոյժ բռնութիւն ջրոյ։ Դժուարին է յոյժ յաղթել նմա։ Կարի հեռի էր ի մէնջ ցամաքն։ Անհնարին բանիբուն է այրն։

## 50. Հրահանգ

Տարան զնոսա մղոնս երկուս։ Ետուն նոցա ցորեան քոռս հինգ։ Բարձրացուցին զորմն կանգունս եօթն։ Զամս ութ աշխատ եղէ վասն սորա։ Աշտարակն հեռի է ի մէնջ քարընկէցս երկուս։ Եղբայր իմ եկեաց ամս երեսուն։ Զամս տասն բնակեցաւ առ եղբօր իւրում։ Գնացաք մղոնս ութ։ Վաճառեցաք իւղ լտերս հարիւր։ Ուսուցանէր զնոսա զաւուրս երկոտասան։ Տառապեցան աւուրս բազումս։ Զօր մի ողջոյն ոչ եկեր եւ ոչ արբ։ Գործեսջիր զաւուրս վեց կամ զվեց օր։ Կացաք առ նոսա զաւուրս երկուս։ Արարին հարսանիս զաւուրս եօթն։ Արք երկու եկին առ մեզ։ Յետ երկուց աւուրց մեռաւ որդի նորա։ Շահեցայ քանքարս երկուս։ արք վեց աշխատեցան զաւուրս տասն։ Սպասեցաք նոցա զաւուրս չորս։ Երկոտասան ամիսք են ի տարւոջ։ աւուրք երեսուն կամ երեսուն եւ մի յամսեան։ ժամք քսան եւ չորք յաւուր, եւ րոպէք վաթսունք ի ժամու։ Ամիսք երկու են յորմէ հետէ մեռաւ եղբայր իմ։ Նստայ անդ ժամ մի։ Զամենայն գիշերս աշխատ եղաք։ Ընդէր կայք զօրն ողջոյն դատարկ։ Զայն օր արարին օթեւանս առ նմա։ Տուր ինձ բաժակ մի ջուր։ Կացաք կամ եղաք անդ աւուրս բազումս։ Յետ

գնալոյ ընդ նոսա զաւուրս երկուս՝ հասաք ի գիւղ մի. Կացի նօթի ժամս տասն ։

## 51. Հրահանգ

Զօքան զերից աւուրց ճանապարհ. Երթայք զճանապարհ ձեր. Երթիցուք ճանապարհ հասարակաց. Զոգաւ զճանապարհ հեռի. Մի երթար ճանապարհ ընդ նոսա. Ոչ կամէին երթալ զերկայն ճանապարհն. Պնդեցան արքն զկնի նոցա զճանապարհ լերինն. Զո՞ր ճանապարհ երթիցուք. Երթիցուք զուղղորդն. Առաքեաց զնոսա զերկայն ճանապարհն. Ինքն չոքաւ զկարճն. Իբրեւ եկին զաւուր միոյ ճանապարհ. Հեռացաք ի քաղաքէն երկուց աւուրց ճանապարհ. Խօսեցաւ ընդ նոսա զայս օրինակ. Ամենեքին զնոյն գոյն եւ զնոյն ձեւ հանդերձս զգենուն. Եկն այր հանդերձ եղբարբ իւրով. Եկն ի Հայս կանամբ եւ մանկտւով հանդերձ. Ցո՞յր ձեռն շինեցաւ եկեղեցիս. Ի ձեռն ճարտարապետաց Իտալացւոց. Մեծամեծս վճարէ Աստուած ի ձեռն տկարաց եւ անուազգաց ։

## 52. Հրահանգ

Արարի զնա ինձ բարեկամ. Արարին զմեզ դաստիարակս որդւոց իւրեանց. Եդ կամ կացոյց զնոսա մատակարարս ի վերայ տան իւրոյ. Եգիտ զդրունս բանտին փակեալս. Ո՞չ ապաքէն տեսուչս կարգեաց զձեզ Թագաւորն. Գտի զնոսա արդարս. Զի՞նչ կոչեցից զձեզ. Եդ նոցա անուանս որդիս որոտման. Դատարկանձունս ուսուցէք զմանկտիդ. Ուսուցէք զկանայս ձեր տնարարս, զդստերս ձեր ժիրս եւ զգաստս. Լերինքս եղիցին ի դաշտս. Լիջիր ինձ յորդի,

եւ ես եղէց քեզ ի հայր. Մի լիցի անապատ երկիրդ չէն. Ընտրեցի ինձ զնոսա խորհրդականս եւ խրատտուս. Ազգք մեծամեծք քակտեցան եւ եղեն յոչինչ. Պտուղքս լիցին ձեզ ի կերակուր ։

## 53. Հրահանգ

*Սորվող աշակերտը.* Աշակերտն որ ուսանի, որ ուսանէր, որ ուսաւ, որ ուսցի, որ ուսանիցի, որ ուսանելոց է կամ իցէ ։

*Կռուող զինուորը.* Զինուորն որ մարտնչի, որ մարտնչէր, որ մարտեաւ, որ մարտիցէ, որ մարտնչիցի, որ մարտնչելոց է կամ իցէ ։

*Գտած մարգարիտը.* Մարգարիտն զոր գտանես, զոր գտանէիր, զոր գտեր, զոր գտցես, զոր գտանիցես, զոր գտանելոց ես կամ իցես ։

*Տեսած գիրքս.* Մատեանն զոր տեսանեմ, զոր տեսանէի, զոր տեսի, զոր տեսից, զոր տեսանիցեմ, զոր տեսանելոց եմ կամ իցեմ ։

*Մեր բնակած քաղաքը.* Քաղաքն յորում բնակիմք, յորում բնակէաք, յորում բնակեցաք, յորում բնակեսցուք, յորում բնակիցեմք, յորում բնակելոց եմք կամ իցեմք ։

*Մեր անցած լեռները.* Լերինքն ընդ որս անցանեմք, ընդ որս անցանէաք, ընդ որս անցաք, ընդ որս անցցուք, ընդ որս անցանիցեմք, ընդ որս անցանելոց եմք կամ իցեմք ։

*Անոնց մեկնած տեղը.* Տեղին ուստի մեկնին, ուստի մեկնէին, ուստի մեկնեցան, ուստի մեկնեսցին, ուստի մեկնիցին, ուստի մեկնելոց են կամ իցեն ։

*Մեր անցած կամուրջը.* Կամուրջն ընդ որ անցա-

նեմք, ըստ որ անցանէաք, ըստ որ անցաք, ըստ որ անցցուք, ըստ որ անցանիցեմք, ըստ որ անցանելոց եմք կամ իցեմք ։

Այսպէս միացած օրինակները ։

## 54. Հրամանք

Խոսողը. Որ խօսին, որ խօսէին, որ խօսեցան, որ խօսեսցին, որ խօսիցին, որ խօսելոցն է կամ իցէ.

Ուզողները. Որ կամին, որ կամէին, որ կամեցանն, որ կամեսցինն, որ կամիցինն, որ կամելոցն են կամ իցեն.

Տեսածս. Զոր տեսանեմ, զոր տեսանէի, զոր տեսի, զոր տեսից, զոր տեսանիցեմ, զոր տեսանելոց եմ կամ իցեմ.

Առածը. Զոր առնու, զոր առնոյր, զոր առ, զոր առցէ, զոր առնուցու, զոր առնելոց է կամ իցէ.

Խօսածդ. Զոր խօսիս, զոր խօսէիր, զոր խօսեցար, զոր խօսեսցիս, զոր խօսիցիս, զոր խօսելոց ես կամ իցես.

Մեր տեսածները. Զորս տեսանեմք, զորս տեսանէաք, զորս տեսաք, զորս տեսցուք, զորս տեսանիցեմք, զորս տեսանելոց եմք կամ իցեմք ։

Ձեր փնտռածը. Զոր խնդրէք, զոր խնդրէիք, զոր խնդրեցէք, զոր խնդրեսջիք, զոր խնդրիցէք, զոր խնդրելոց էք կամ իցէք.

Անոնց փախածը. Զոր ցանկան, զոր ցանկային, զոր ցանկացան, զոր ցանկասցին, զոր ցանկանայցեն, զոր ցանկանալոց են կամ իցեն ։

Այսպէս միացած օրինակները ։

Պէտք է գիտնալ որ այս դէպքին մէջ բայերուն վը-

բայ շատ անգամ ս, դ, և գիրերն ալ կրնան դրուիլ, այսպէս. Զոր տեսանեմս կամ զոր տեսանեմն. Զոր խօսեցարդ կամ զոր խօսեցարն. Զոր ցանկանն, զոր ցանկացանն, եւայլն. Տես Քերակ. էջ 167.

## 55. Հրահանգ

Աստ է այրն որ սպան զեղբայր քո. Տեսի զկինն որ խօսէր ընդ քեզ. Ոչ իմացան զբանն զոր նոքա ասէին. Գիտիցէ՞ք զորսն որ խռովեն զքաղաքն. Ո՞ւր իցեն արքն որ եկին այսր. Ընթերցա՞յք զմատեանն զոր առաքեաց հայր իմ. Չեմ ինչ տեղեակ որոց դուդ պատմես. Գեղեցիկ են ծաղիկքդ զորս մատուցանես ինձ. Քաղցր են յոյժ պտուղքն զորս հասուցանեն ծառքդ. Ոչ եւս դառնայ ժամանակն որ անց. Չիք որ գիտիցէ զխորհուրդս նորա. Բազում են որք ճանաչեն զքեզ. Բարեկամք մեր են արքն յորոց զընծայսդ ընկալարուք. Ուստի՞ լուար զայդ ամենայն զոր գրեցեր. Ընթերցայ զբազումս ի գրոց անտի զոր դու յօրինեցեր. Որդիք ազնուականաց էին մանկտին որ հեղձան ի ծովու. Մի է ի սպասաւորաց թագաւորին պատանին որ եբեր զթուղթն. Նշան մեծ են յաղթութեան դափնիքն որով պսակեալ են զինուորքդ. Կատարեցի զհրամանսն զոր ետուր. Անպարտ էին արքն որ սպանան. Կէսք յաստեղաց որ երեւին ի գիշերի՝ անշարժք են, եւ այլքն՝ գնայունք. Աստ է այրն զոր տեսաք. Տեսի զընծայսն զորս ընկալայք. Ընտիր է յոյժ մատեանն զոր յօրինեցեր. Եկն առ իս սպասաւորն զոր առաքեալ էր նա. Չիցե՞ս տեղեակ հրդեհին որ պատահեցաւ յայսմ գիշերի. Եթէ ճշմարիտ է գոյժն զոր տաս, արդարեւ տրտմել պարտ

է․ Եթէ արդար են բանքս զոր ասեմ, ընդէ՞ր բարկանաս ։

## 56․ Հրահանգ

Բարեկամ ձեր է որ արարն զայս Որ զկին ետես՝ աստ է․ Որ մատնեաց զքեզ՝ որդի քո է․ Որ խօսեցանն ընդ մեզ՝ վկայեցին․ Որ տեսինն եւ լուան՝ երանելիք են․ Որ ոչն գործիցէ՝ կերիցէ մի՛ Որք կերանն՝ էին արք հինգ․ Որ ընթեռնուն՝ ի միտ առցէ․ Որ առաքեաց զիս՝ պատուէր ետ ինձ․ Որ գրեցինն զմատեանս՝ ճանաչեն զձեզ․ Զարմացան որ անդն էին․ Որք մտանէինն եւ ելանէին՝ տեսանէին․ Պարտ է պատուհասել զորս ոչն գործեն․ Կալայք զորս անդն գտան․ Ընդ որում խօսիմս՝ քոյր ձեր է․ Զոր տեսանեսդ՝ եղբայր իմ է․ Որում խնդրէ ի քէն՝ տուր․ Տեսի զոր արարն զայս․ Զորս միանգամ կալանն՝ ընդ սուր հանին․ Տաց քեզ զոր ետուրն ցիս․ Զոր լուաքն՝ պատմեսցուք քեզ․ Ընթերցայ զոր գրեալն էր․ Զոր առաքեալն էիր՝ ընկալայ․ Ճշմարիտ է զոր ասեսդ․ Ոչինչ գիտեմ յորոց ասէքդ․ Սուտ է ընդ որ պարծիդ․ Զոր առնելոցն իցես՝ արա վաղվաղակի․ Տուր ինձ զոր խնդրեմն․ Ընկալայ զոր յղեցերդ․ Ոչինչ կորուսի յորոց ետուրն ցիս․ Գիտեմ յորմէ կասկածեսդ․ Ոչինչ պատահեցաւ յորոց երկնչէաքս․ Իմ է զոր առերդ․ Զի՞նչ էին որ կորեանն կամ կորուսեալքն ։

## 57․ Հրահանգ

Ուր իցենն ոչ գիտեմք․ Չասաց մեզ յո երթալն կամէր․ Եկից ուր դուք բնակես․ Ցոյց ինձ ուստի առերն զայդ․ Ուստի գամն ոչ գիտէք․ Յո առաքե-

ցաւն չէ յայտ. Գիտեմ ուր զտունն շինեաց. Մինչ առ մեզն էր ողջ էր. Ունկն դնէի նմա մինչ խօսէրն. Բովանդակեցէք զգործդ մինչդեռ աւուր կայ. Մինչ աստ եմ կամիմ տեսանել զնա. Խօսէի՝ յորժամ առ ձեզն էի. Այս ամենայն կատարեցաւ մինչ ի շինին էիր. Մինչդեռ մանուկն էի պատմէր ինձ մայր իմ. Երիցս ետու գրել յորժամ հիւանդն էի. Լուար զբարբառ նորա որպէս եսս. Զայդ ամենայն գիտեն նոքա որպէս եւ մեքս. Արարից որպէս երէկն. Գրեա որպէս միշտն. Լուիցուք որպէս հանապազն. Մի գտցուք անհնազանդք որպէս նոքայն. Զոքաք որպէս սովորն էաք. Որպէս եւ յառաջն ասէի :

## 58. Հրահանգ

Աղեքսանդր մեծ, արքայ Մակեդոնացւոց, նուաճեաց զտէրութիւնն Պարսից. Այս եղեւ առ Դարեհիւ Կոդոմանոսիւ, արքայիւ Պարսից. Յիսուս խաչեցաւ հրամանաւ Պիղատոսի Պոնտացւոյ, դատաւորի Հռոմայեցւոց. Աստուած հրամայեաց Աբրահամու զոհել զորդի իւր միամօր զԻսահակ. Դարձն Հայոց ի քրիստոնէութիւն եղեւ ի ձեռն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. Հռիփսիմեանք, կուսանք Հռոմայեցիք, հրամանաւ Տրդատայ սպանան ի մայրաքաղաքին Հայոց ի Վաղարշապատ. Աբրահամ ասաց ցծառայ իւր ցԵղիազար. Յակոբ եկն յԵգիպտոս առ որդի իւր Յովսէփ. Կայէն նախանձեցաւ ընդ եղբօր իւր ընդ Աբէլ, եւ սպան զնա. Քաղաքք նշանաւորք Հայոց էին առ եզերբ գետոյն Երասխայ կամ Երասխ գետոյ. Երանելիքն Սահակ եւ Մեսրոպ Թարգմանեցին

զգիրս հանդերձ աշակերտօք իւրեանց Եզնկաւ, Արձանիւ, Յովսեփաւ, Յովհաննու եւ Կորեամբ. Լուր, որդեակ, խրատու հօր քո. Զո՞ խնդրես, կին դու. Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց. Զի՞ տանջես զիս, այր դու. Ո՞ ած զքեզ այսր, գեղեցիկդ Արփադնէ. Առ զդէն քո, քաջդ Վահան. Արի, կաց, մանուկ դու. Քեզ ասեմ, աղջիկ դու. Զի՞ ննջես, զարթիր, ով վատ. Տեարք, զինչ կամի՞ք զի արարից. Գիտեմ զքեզ, Սուրբդ Աստուծոյ. Շնորհակալ եմ զքէն, քաջդ Փիլիպս. Թագաւորդ Իսրայելի, էջ ի խաչէդ. Ի բաց կացէք յինէն, մշակքդ անիրաւութեան. Յամօթ լեր, թշնամիդ խաղաղութեան. Մեծ են վարձք քո, հայրդ աղքատաց:

## 59. Հրահանգ

Հասեալ զինուորացն ի վերայ՝ կապեցին զնա. Ելեալ նորա ի լեառնն՝ նստաւ. Պատմեալ նոցա զբանս իմ պատգամաւորին՝ եկին անդրէն առ իս. Ածեալ զնա յարտեւան լերինն՝ կամէին արկանել ի վայր. Մտեալ ի ներքս զայրն օտարական՝ փակեցին զդուռնըն. Իջեալ յելուզակացն ի լեռնէ անտի՝ բնակեցան ի դաշտին. Իջեալ յերկնից հրեշտակ Աստուծոյ՝ նըստէր ի վերայ գերեզմանին. Ելեալ կանանցն վաղվաղակի ի գերեզմանէ անտի՝ փութային անկանել ի շէնն. Մատուցեալ եղբայր քո խօսեցաւ ընդ նոսա. Տեսեալ զայս մանչին զղջացաւ. Առեալ նոցա զարծաթն՝ ետուն սպասաւորացն. Մատուցեալ ծառայքըն երկիր պագանէին նմա. Զայս ասացեալ նորա՝ ննջեաց. Խոնարհեցուցեալ զգլուխ իւր աւանդեաց զհոգին. Կալեալ զձեռանէ նորա հան արտաքս. Մըտ-

եալ ոստիկանացն ի ներքս՝ խնդրէին զնա. Զարթուցեալ Մեսրոպայ ի քնոյ՝ ստեղծ զնշանագիրս մեր. Ելեալ նորա ի քաղաքէ անտի եկն առ մեզ. Տեսեալ Յովսեփայ զեղբարս իւր՝ ծանեաւ զնոսա. Հատեալ զգլուխ նորա բերին առ թագաւորն. Կալեալ զձեռանէ իմմէ տարաւ ի ներքս. Լուեալ Ադամայ զձայն գնալոյ նորա՝ թաքեաւ. Լուեալ մօրն զբօթ մահուան որդւոյն՝ սկսաւ լալ. Մտեալ ի մահիճս իւր ննջէր. Կոչեալ զեղբարս ձեր առաքեցի ըզնոսա. Եկեալ զինուորացն կամէին ունել զմեզ. Ելեալ Սողոմոնի յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ՝ հնազանդեցոյց իւր զամենայն ազգս. Մատուցեալ առ նա ծառայք նորա՝ աղաչէին. Առեալ զնա մեկուսի՝ խօսէր ընդ նմա. Թողեալ զմեզ չոգան ի տուն իւրեանց. Նստեալ յաթոռ՝ դատէր զժողովուրդն. Կացեալ մեր անդ զաւուրս բազումս՝ սպասէաք գալստեան նորա. Անցեալ ընդ պատուհանն եմուտ ի ներքս տեսանել զնա. Կացեալ առաջի տաճարին՝ խօսէր ընդ եղբօր ձերում. Խարոյկ արկեալ նստան եւ ջեռնուին։

## 60. Հրահանգ

Լուեալ է ձեր վասն նոցա. Բազում անգամ տեսեալ է իմ զնա. Ընթերցեալ էր նոցա զթուղթս մեր. Չիցէ՞ ընթերցեալ ձեր. Չիք մեր ընթերցեալ այնպիսի ինչ. Բազում ինչ լուեալ է իմ զնմանէ. Բազում չարիս գործեալ էր նա. Զայս առեալ է մեր պարգեւ ի թագաւորէն. Եթէ հաւատարիմ լեալ էր ձեր առ թագաւորն. Լուեալ է ձեր զառաջին գնացս իմ. Տեղեկացեալ էր նորա ճանապարհին. Ոչ ճաշակեալ է

մեր եւ ոչ արբեալ· Եթէ պահեալ էր մեր զպատուիրանս նորա· Այն ինչ դարձեալ էր նոցա ի գերութենէ· Զգեցեալ էր նոցա մյգս· Զատամ թոյլ անցանել քեզ աստի· Այս է հրաման թագաւորին, մեկնել ձեզ փաղփաղակի ի քաղաքէ աստի· Պատմի հասանել նոցա ի դաշտ մի եւ շինել անդ քաղաք· Պատուէր ետու սպասաւորացն գալ այսր· Աղաչէին զնա մի մտանել անձամբ ի կռիւն· Ասեն լինել քեզ թըշնամի կայսեր· Ըղձանան լինել քեզ նոցա զօրավար։

## 61, Հրահանգ

Առաքեալ դահիճ՝ ետ գլխատել զնա· Եկեալ ի տուն պատմեաց մեզ զեղեալսն· Թողեալ զմեզ անդ՝ մեկնեցան· Ընկալեալ զնոսա ի տուն իւր ետ նոցա կերակուր· Վաճառեալ զամենայն ինչս իւր չոքաւ ի տար աշխարհ· Հարցեալ մեր զնոսա, ոչ կամեցան տալ մեզ պատասխանի· Գտեալ ձեր զնա, ազդ արասջիք մեզ· Հասեալ մեր անդր, ոչ գտաք զնա անդէն· Ի դառնալ ձերում յերկիր ձեր, տարայք եւ զիս ընդ ձեզ· Ի տեղալ անձրեւաց՝ յորդէ գետն· Լուեալ մեր զայս՝ զարմացաք· Ի շրջել մերում ընդ քաղաքն՝ չէր այրն ընդ մեզ· Ի լինել մերում ի ներքս՝ պահապանք կային առաջի դրանն· Ի խօսել նորա այսպէս սաստիւ՝ պատգամաւորն զարմացեալ հայէր ի նա· Նորա փաղփաղակի յառաջ մատուցեալ՝ ձգէ զձեռըն իւր առ իս· Ի ջանալ մերում հեռանալ անտի՝ հողմ ուժգին մղեաց զնաւ մեր ի նաւահանգիստ անդըր· Ցասել նորա զբանս զայսոսիկ՝ բացան աչք մեր յանկարծ· Հրաման տամ ձեզ մեկնել աստի· Ետուն նմա խորհուրդ չկալ անդէն· Ընտրէին մանաւանդ

մեռանել քան մոռանել ի քաղաքն · Ըղձանայաք առաւօտուն կամ այգուն լինելոյ · Ասէին որոտումն լինել · Ոչ կամին բնակել նմա ընդ նոսա · Ասա ցեղբայր քո հատուցանել զպարտս իւր · Էր մէգ թանձր մինչեւ ոչ տեսանել զմիմեանս · Հեռացան յոյժ մինչեւ ըստ ակն անկանել նոցա · Շարժումն մեծ եղեւ ի ծովուն մինչեւ ծածկել նաւին յալեաց · Գան հարին զնա յանխնայ մինչեւ չմնալոյ ի նմա շունչ · Բազումք գային առ նոսա մինչեւ չժամանել նոցա ուտել հաց · Հիւանդացեալ կոչեաց բժիշկ · Յանձն արարեալ ըղմեզ առնն՝ մեկնեցաւ · Առեալ նորա կերակուր, զօրացեալ կազդուրեցաւ · Տեսեալ զի ոչ կարեն նուաճել զնա, խորհեցան ունել զնա նենգաւ · Ի կռուել նոցա ընդ միմեանս, այլ ոք առ զ՚ին եւ գնաց · Հատն մանանխոյ աճեցեալ լինի ծառ, մինչեւ գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նորա ։

## ·1 · Հրահանգ

Նոր է տունն · Հին էր եկեղեցին · Թեթեւ է փայտ քան զերկաթ · Բարկ է քացախ · Կծու է աղ, այլ պահէ ի նեխութենէ · Ազնուագոյն է ոսկի քան զամենայն մետաղս · Պատուական է յոյժ ադամանդ, այլ չէ ինչ օգտակար եւ պիտանի քան զերկաթ · Անօսր է կտաւ քան զկերպաս · Անապակ է գինիս · Ջրարբի է հովիտդ, եւ վասն այնորիկ յուռթի է · Ծանր են անձրեւ եւ կարկուտ · Թեթեւ է շոգի · Գնայուն եւ շարժուն են մարդիկ եւ անասունք · Զգայուն, իմաստուն եւ խօսուն է մարդ · Ջերմ է ձի · Երկչոտ է եղբայր քո · Խիստ ես դու · Վկայ են նոքա · Ականատես եմք մեք · Ականջալուր են նոքա ·

Եղբայր ձեր գործէ ի տան. Մանկունքս այսոքիկ պատառեցին զհանդերձս իւրեանց. Ընկղմեցին զնաւն ի ծով անդր. Ծովակուր եղեն արքն. Գետամոյն եղեւ կառավարն.

## 2. Հրահանգ

Բարեկամ իմ ետես զհայր ձեր. Զինուորքն կոչեցին զզօրավար իւրեանց. Կին մի էր ի քաղաքի անդ. Կինս այս ոչ սիրէ զդուստր իւր. Հայրս այս անխծանէ զորդիս իւր. Աստեղք են յերկինս. Օձք գոն ի ջրհորս. Են վիշապք ի լերինս. Կէտք մեծամեծք են ի ծովու. Լերինք բարձունք են ի վերայ երկրի. Անտառք մեծամեծք են ի լերինս. Ի քաղաքի անդ է գերեզման նորա. Բարեկամք մեր են ի տան աստ. Ի գերեզմանի աստ են ոսկերք նոցա. Յապարանս անդ են սպասաւորքն. Հիւրք են ի սրահին. Ժանտահոտութիւն է ի սենեկիս. Գոյ հուր ի կրականի աստ. Ցորեան բազում է ի շտեմարանի ձերում. Վարժ է կառավարն. Հմուտ եւ փորձ է վարդապետըն. Կիրթ են աշակերտքն. Արագընթաց են եղջերու եւ նապաստակ. Խակ է մանուկն. Հասուն է պատանին. Ձկունք են ի ծովու. Բիծք գոն յարեգական. Մարդիկ բազում են յաշխարհի. Էր անդ ամբոխ բազում. Կապեալք բազումք էին ի բանտի անդ. Կամիմ տեսանել զեղբայր քո. Նիստ ի տան քում. Մեր է տունս. Սիրելիք մեր էք դուք. Բարեկամք մեր են եղբարք ձեր.

## 3. Հրահանգ

Ծանօթք մեր են ծառայք նոցա. Վարդապետ իմ է այրն. Խրատեցին զնա յոյժ. Գրեցէք զբանս զայ-

սոսիկ ի մատեանս ձեր· Փակեցին զդուռնն· Պատժեցաք զոմանս ի նոցանէ· Ոչ ոք կարէ անցանել ընդ այս· Ամենեքին բնակեն աստ· Եղբայր էք դուք կնոջ մեծատան· Իջանէին ի լեռնէ անտի· Ոչ ետես զերեսս մեր· Հանէք զմանուկդ արտաքս· Գեղեցիկ է յոյժ գիւղ ձեր· Աշխատութեամբ մեծաւ արարաք զպարտէզս· Յոյժ աշխատ արարի զձեզ· Ներեսջիր ինձ· Պատգամաւորք պատմեցին նոցա զբանս իմ· Հան նոցա ի վեր զբանն· Ես հանգուցից զձեզ· Չէր անդ հայր նոցա· Բարեկամ մեր են ընկերք նոցա· Ի փողոցի անդ են քարինքն· Ի հրապարակի անդ են զինուորքն· Ի նաւահանգստի անդ են նաւքն· Ի նաւի անդ են նաւաստիքն· Ի քրձի անդ էին ամանք նոցա· Արծաթ նորա ի ծոցի իւրում է· Ի ձեռին նորա է սուր մեր· Ոմանք ի նոցանէ են ի նաւի անդ· Այլք ի բարեկամաց ձերոց են ի քաղաքի անդ· Ամենեքին են ի սրահի անդ· Ի շտեմարանի անդ է ցորեան մեր· Իւրաքանչիւր ոք ի տան իւրում է· Չիք ոք ի տան· Բազումք ի ձէնջ աղքատք են· Սակաւք ի նոցանէ են աստ· Հինգն ի նոցանէ իմաստունք են· Մին ի ձէնջ սատանայ է· Անդ էր մի ոմն ի բարեկամաց ձերոց· Մի ոմն ի մէնջ չէր անդ· Ոչ ոք էր անդ ի մէնջ· Եղբայր մի է իմ· Որդի մի է նորա· Պարտէզ մի է եղբօր իմոյ· Բարեկամք բազումք են ձեր· Եղբարք եօթն են մեր· Էր նորա պարտէզ մի գեղեցիկ· Մատեանք բազումք են ձեր· Արծաթ բազում է հօր իմոյ· Եղեն նորա արջառք եւ ոչխարք բազումք· Ջրհոր մի էր Իսահակայ· Է իմ որդի մի· Տուն մի մեծ է նորա· Քաղաք մի փոքր է իմ· Են մեր տունք մեծամեծք· Ունին ստացուածս

բազում. Լուարուք զբանս իմ. Իջանէր ի լեռնէ ան-տի. Բնակեցաւ ի քաղաքի աստ. Երթիցուք ի տուն անդր. Ի պարտիզի անդ էր գերեզման նոր. Ծառն կենաց էր ի մէջ դրախտին. Եկեաց ամս տասն. Սպասեցաք ձեզ ժամս ութ. Նոքա յաշխարհէ աստի են. Դուք չէք յաշխարհէ աստի. Իբրեւ լուան զայս ի թագաւորէն. Լուաւ զձայն գնալոյ նորա. Մու-ծէք զայրդ ի տուն այսր. Տարան զնա յերկիր օ-տար. Կերայք ի հացէ անտի :

## 4. Հրահանգ

Տեսեալ զեղբայր ձեր՝ աստի ցնա. Լուեալ զձայն նորա կոչեցի զնա. Առեալ զգոյժ մահուան նորա սկսաւ լալ. Տարան զնա մղոնս երկուս. Ետուն նո-ցա ցորեան քոռս հինգ. Բարձրացուցին զորմն կան-գունս երկուս. Առ զշէնս զինուորացն. Քակեցին զյարկ տանն. Անդ էին եղբարք նորա. Սպան զդուս-տըր ծառայի իւրոյ. Բացին զդրունս սենեկին. Ցե-լաւ վարագոյր տաճարին. Լուայ զձայն եղբօր իմոյ. Քո են ամենայն ինչք մեր. Իմ է աշտանակդ. Գե-ղեցիկ է պարտէզն. Լի են ամանք նոցա. Բարձր են տունք մեր. Հանի զնա ի գլուխ լերինն. Ունէր զի-նի բազում ի մարանի իւրում. Զամս ութ աշխատ եղէ ուսանել զայս. Երկայնութիւն դաշտին էր մղո-նըս երկոտասան. Էին առիւծք ի գբի անդ. Հզօր է թագաւորն. Բանսարկու է այրն. Ի խօսել իւրում ասէր. Տեղայր ոսկի ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան. Քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ համբարքն չեն. Ո՞ւր իցեն մատեանք իմ. Ո՞ւր եդիք զնոսա :

## 5. Հրահանգ

Ետու զնոսա եղբօր ձերում. Ո՞ յօրինեաց զմատեանդ. Առն ուրումն գիտնոյ յօրինեալ է զնոսա. Առէք այսր ջուր սափորս հինգ. Բազում ինչ ունիմ տալ ձեզ. Են իմ որդիք երկու. Դստերք երեք էին նորա. Էր նոցա մեծութիւն բազում. Ձիք իմ զօրութիւն համբերելոյ. Մտեալ ի ներքս բազմեցաւ. Առեալ զնա ի գիրկս իւր՝ օրհնեաց. Գնացաք զճանապարհ երկուց աւուրց. Երթայաք զտիւ եւ զգիշեր. Առեալ տարայք զարդ ի տունս իւրեանց. Անցեալ բարեկամաց նորա ընդ դուռնս ընդ այս՝ եկին առ մեզ. Լուեալ զպատմութիւնս զայս՝ զարմանայր. Ետուն մեզ համբաւ ծառայք ձեր յառաջ քան զաւուրըս երկուս. Բարեկամք մեր են ընկերք նոցա. Որդի իմ ես դու. Բարեկամք ձեր եմք մեք. Եղբարք մեր պատմեցին զձէնջ. Եկաք առ ձեզ նոքօք հանդերձ. Զոքան նոքա ընդ եղբօր ձերում ի տուն մեր. Զաւուրս երիս ճանապարհորդեալ հասաք անդր. Առ սէր ձեր յանձն առնում զաշխատութիւնս զայս. Զցայգ եւ զցերեկ աշխատէաք վասն ձեր։

## 6. Հրահանգ

Տուր ինձ հրաման երթալ տեսանել զհայր իմ. Պատուէր տուր նմա չնեղել զիս. Առ ահի նորա լռեցաք. Ճանաչեմ զորդի առնն այնորիկ, այլ զձեզ ոչ ճանաչեմ. Մուծէք զնոսա ի խորան անդր. Ընդէ՞ր կայք զօրն ողջոյն դատարկ. Զիարդ մտէք այսր, պատմեցէք մեզ. Ոչ ոք կարէ անցանել ընդ այս ճանապարհ. Որդի է նա առն բարւոյ. Դուստր էր սա

կնոջ մեծատան. Ծառայք եմք արքայից արքայի. Տարայք զգերիսդ ի դղեակդ, մի ածէք զնոսա ի քաղաքս. Զամս չորս բնակեցաւ առ եղբօր իւրում, եւ ոչ ետես զերեսս մեր. Տարագիր եղեւ ի հայրենեաց իւրոց. Եկի ի գիւղ ձեր, գեղեցիկ է նա յոյժ. Զանձրացեալ յերկայնութենէ բանից՝ նիրհեաց. Ի բանից անտի նորա գիտացի եթէ եղբայր նորա ես. Դիմէր բազմութիւնն յեկեղեցին. Տեսին զնա ի տաճարի անդ ընդ բարեկամս իւր. Մեծ է երկիր. Խոր է ծով. Բարձր են երկինք. Լուսնի չիք լոյս առանձինն. Զամս վաթսուն եկեաց նա, եւ թագաւորեաց զաւուրս քառասուն. Մտէք ի տուն իմ. Նստէր ընդ հովանեաւ կնձնւոյն. Ընդ ձեռամբ իմով է: Ունիք բազումս ընդ իշխանութեամբ ձերով. Որդիք երկու են եղբօր իմոյ. Էին նորա ստացուածք տասն. Է նոցա արծաթ բազում. Չիք իմ արծաթ, այլ զոր ունիմն տաց:

## 7. Հրահանգ

Եկն Մարիամ ի գերեզման անդր. Երթայք, ասացէք ցբարեկամս ձեր զի երթիցեն ի հրապարակ անդր. Ժողովեցան նոքա անդր, եւ սպասէին գալըստեան նորա. Դարձոյց զարծաթն ի սեղանաւոր անդր. Առեալ նորա զարծաթն՝ աւէ. Առեալ ջուր լուաց զձեռս իւր. Եկին ի տեղին որ աւերակն կոչէր. Որդի իմ ես դու սիրելի. Հայր քո եմ ես. Անդ էր թագաւորն ի տօնին. Ի հարսանիս անդ էին աշակերտքն. Եղեւ խաւար զինն ժամու. Գնացաք մղոնս ութ. Էր սով զայնու ժամանակաւ. Զհասարակ գիշերաւ յարձակեցան ի վերայ նոցա. Յարուցեալ

գիշերայն երթային. Բերին խուղ լոհերս հարիւր. Կարեմ քակել զտաճարս, եւ զերիս աւուրս շինել զնա. Գամք յերկրէ անտի. Եկին ի քաղաքս. Աղքատ ոմն էր ի քաղաքին. Տեսեալ զնա կոչեաց, եւ նստոյց առ իւր. Կալեալ զմեզ ածէր. Բացեալ զպատուհանն հայէր. Արձակեաց զնա ի բանտէն. Եդ զնոսա ի դիպահոջ. Մուծին զեղբարս ձեր յեկեղեցի անդր. Քարոզէր յեկեղեցւոջ անդ :

## 8. Հրահանգ

Կապեալք բազումք էին ի բանտին. Ընկէց զնա ի ջուրն. Լուեալ զձայն նորա ուրախ լինէր. Յակոբ զամս ինն ծառայեաց Լաբանու վասն Ռաքելայ. Զօքաք ժամս չորս հետի. Եղեւ սով զամս եօթն. Զամս քառասուն շինեցաւ տաճարն Երուսաղեմի. Ետ ինձ արծաթ քանքարս հինգ. Բերին ջուր սափորս եօթն. Քաղեցաք ծաղիկս փունջս տասն. Մեր է տունս այս. Սիրելիք մեր էք դուք. Զաւուրս եօթն աշխատ լեալ՝ հանին զնա արտաքս. Յետ գնալոյ մղոնս ութ՝ հասաք ի քաղաք մի մեծ. Ի մտանել մեր ի ներքս ընդ դուռն քաղաքին՝ տեսաք այր հինգ. Զիք մեր ընթերցեալ զգիրն. Է իմ քաղաք մի փոքր. Եկ եւ բնակեաց անդ. Հեղեղք բազումք իջանեն ի լեռնէ անտի. Անցեալ ընդ պատուհանն՝ եմուտ ի ներքս. Եկին տեսանել զմեզ, ինքն եւ որդիք նորա. Եթէ իմ չէր եկեալ. Փորձեցի զձեզ զաւուրս բազումս. Պատմեցաք ձեզ զգործս մեր, այլ դուք ոչ հաւատացէք մեզ. Որդի էր նա առն մեծատան :

## 9. Հրահանգ

Տարան զնա առ թագաւորն. Եկաց առ եղբօր իւրում զաւուրս բազումս. Մատնեաց զնոսա դահճաց. Ճաշեցին ընդ վրանաւ նորա. Չոգաք զճանապարհ երկուց աւուրց. Լուարուք զբանս իմ. Ուստերք նորա եւ դստերք եկին առ մեզ. Յետ սակաւ միոյ տեսի զնոսա. Աղաչանք մեր չեղեն նոցա ընդունելի. Պարտ է թաքուցանել զխորհուրդս թագաւորի. Պատմեցից ձեզ զոր արարն Աստուած. Հաւատամ յԱստուած եւ ի զօրութիւն նորա. Այն ինչ եդեալ էր նորա զոտս ի ցամաքի. Արարեալ է Աստուծոյ զաշխարհս. Մի հոգայք վասն վաղուին. Պատմեցին մեզ զնոցանէ. Խնդրէին ինչ զի չարախօսեսցեն զնմանէ. Հանի զնա արտաքոյ քաղաքին. Ածին զնոսա յատեան. Բազումք ելին ի քաղաքէ անտի. Տարայք զմանկտիդ ի տուն անդր. Բնակէր ի քաղաքի անդ. Լուարուք բանից արանց իմաստնոց. Արքս այսոքիկ զինուորք են թագաւորի քաջի. Լցէք զտեղիս արամբք չարագործօք. Ելեալ արտաքս խնդրեցէք զնոսա. Ժողովեցին զցորեանն յամանս իւրեանց. Տեսեալ զամբոխն նստաւ. Յելանել նորա արտաքս՝ ամբոխն մտանէր ի ներքս. Մուծէք զնոսա յեկեղեցի այդր։

## 10. Հրահանգ

Օդ է շուրջ զերկրաւ. Խռնեցաւ ժողովուրդն զնովաւ. Շինեցին պատնէշս շուրջ զքաղաքաւն. Ասացից ձեզ ինչ զնմանէ. Ամբաստանեն զեղբօրէ ձերմէ. Բարեկամք ձեր տրտնջեն զինէն. Զինուորքն

մտին ընդ դուռն պարտիզին. Սփռեցաւ ամբոխն ընդ երեսս դաշտին. Ժամս տասն եկաց անսուաղ. Յետ գնալոյ մղոնս երկոտասան հասաք ի քաղաքն. Տես-եալ զմեզ փախեան. Փախուցեալ անկան ի բերդն. Առ-եալ զնա մեկուսի խօսէր ընդ նմա. Ոչ գիտէի թէ զինչ իցէ. Ոչ կարացին իմանալ զբանս մեր. Թողեալ զմեզ գնացին ի տունս իւրեանց. Երկոտասան եղ-բարք եմք. Ծառայք Աստուծոյ են արքդ. Են իմ եղբարք բազումք. Տունք երկու են ձեր. Են նորա ծառայք քան. Են մեր մառեանք. Մի մտանէք ի տուն անդր. Ծնաք ի քաղաքի աստ. Հեռի է ի տեղ-ւոջէ աստի Մուծէք զնոսա ընդ տաճարս. Երթի-ցուք առ բարեկամ իմ:

## 11. Հրահանգ

Եմուտ ի տուն եղբօր իւրոյ. Բարեկամք նորա ե-կին առ նա. Ի գրել նորա զթուղթն կոչեցին զնա ծառայք նորա. Նստեալ յաթոռ դատէր զժողո-վուրդն. Իբրեւ բժշկեաց զհիւանդն, առաքեաց զնա ի տուն իւր. Ասեն ցնա բարեկամք նորա. Կամէ՞ր գալ ընդ մեզ. Կացեալ անդ զաւուրս բազումս սպա-սէաք զալստեան նորա. Էր նա ի բանտին, եւ աղա-չէր զեղբարսն ազատել զնա. Յետ հանելոյ զնա ի լեառնն՝ պատմեցին նմա զեղեալսն. Առաքեցի առ ձեզ զայրն տալ ձեզ համբաւ զինէն. Եթէ սիրէք զայրդ, մի չարչարէք զնոսա. Իբրեւ տարան զնա մղոնս երկուս, վաստակեցան յոյժ. Անցեալ ընդ պա-տուհանն եմուտ ի ներքս տեսանել զնա. Տարածե-ցաւ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն. Յետ գնա-լոյ ընդ նոսա զաւուրս երկուս հասաք ի գիւղ մի.

Կացեալ առաջի տաճարին խօսէի ընդ եղբօր ձերում. Բարեկամք ձեր են որդիք իմ. Չեմ ես օտար ։

## 12. Հրահանգ

Տեսեալ է իմ զնոսա. Ընթերցեալ է քո զգիրսն. Արարեալ է Աստուծոյ զաշխարհս. Եթէ եկեալ էր նոցա այսր. Լուեալ է քո զինէն. Ընկալեալ է մեր թուղթս երկուս ի նոցանէ. Չիք իմ տեսեալ զայրն. Չիք նորա տացեալ այսպիսի ինչ. Չիք մեր սպանեալ զօձ. Եթէ չէր նորա եկեալ. Ելեալ ի քաղաքէ անտի եկն առ մեզ Եղբայր քո եւ քոյր եկին առ մեզ. Եկայք ի հարսանիս իմ. Առաքեաց մշակս յայգի իւր. Ուսուցանէր զնոսա զաւուրս երկոտասան. Նոյ եւ որդիք նորա մտին ի տապանն. Կարող է զհոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի. Սպանին զծերս եւ զերիտասարդս. Եղեն նորա ուստերք եւ դստերք. Որդիք մեր են նոքա. Իմ են մանկունքս. Իբրեւ տեսին զնա, ժողովեցան առ նմա. Հաւ ժողովէ զձագս իւր ընդ թեւովք իւրովք. Մտին նոքա ի սրահ քահանայապետին. Բազումք իբրեւ լուան, հաւատացին նմա. Ած այսր զորդի քո. Ոչ ոք էր անդ. Ոչինչ լուաք. Հեռացան ի տեղւոջէ անտի. Մատեան առ մեզ. Եղբարքն Յովսեփու իջին յԵգիպտոս գնել ցորեան. Տեսեալ Յովսեփայ զեղբարս իւր՝ ծանեաւ զնոսա. Եղեւ առատութիւն յԵգիպտոս զամս եօթն. Որդի նորա երէց սպանաւ. Կրտսերն ասէ ցհայր իւր. Չեմ արժանի լինել որդի քո ։

## 13. Հրահանգ

Եղբարք իմ երկնչին ի քէն. Ո՞չ երկնչիս դու յԱս-

տուծոյ Աղաչէին զնա երթալ ընդ նոսա· Արասցուք երիս տաղաւարս· Հատեալ զգլուխ նորա բերին առ Թագաւորն· Իբրեւ ետես Թագաւորն, զարմացաւ յոյժ· Ոչ անսայր բանից նորա· Յակոբ Թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց· Լսելոց էք համբաւս պատերազմի· Առանձնացեալ յանկեան տուրեք՝ նստէր· Օգնական իմ է Տէր· Ունիմ զինուորս ընդ ձեռամբ իմով· Տառապեցան աւուրս բազումս· Զիք մեր երկիւղ ի նոցանէ· Վարժեցաւ նա յամենայն ուսմունս Յունաց· Արծաթ բազում պիտոյ է մեզ· Եկին ընդ մեզ յապարանս նորա· Աղաչէին զնա երթալ ի սահմանաց իւրեանց· Զիք մեր ուսեալ զգիրս· Զիք իմ տեսեալ զայրն· Եթէ իմ չէր տացեալ զբանս զայսոսիկ· Հեռացաւ ի նոցանէ քարընկէց մի· Զաւուրս քառասուն ոչ եկեր եւ ոչ արբ· Զամս տասն անկեալ դնէր յանկողնի կամ ի մահիճս· Անկան ի բերդն· Եղեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Աստուծոյ· Ես նմա դահեկանս տասն· Որդի հնազանդ ուրախ առնէ զհայր իւր· Խրատէր զնա անսալ բանից իւրոց· Ցրուեցաւ ամբոխն ընդ դաշտն· Անցաք ընդ լերինս եւ ընդ ձորս։

## 14. Հրահանգ

Եկաց ի բանտին աւուրս եօթն· Ոգիք իբրեւ ութ ապրեցան ի ջրհեղեղին· Ապրեցո զիս, Տէր, ի մահուանէ· Ծանեան զնա արք տեղւոյն· Եմուտ ի բնակութիւնս ազգաց վայրենեաց· Երթայր առ գետովն· Առ սէր քո արարի զայս· Ետ սպանանել զնա առ ատելութեան· Հիւանդացաւ առ տրտմութեանն· Զբարեկամս իւրեանց կամին մատնել ի ձեռս թշնամ-

եաց․ Ոմանք ի նոցանէ եկին առ մեզ․ Բազումք խնդասցեն ի ծննդեան նորա․ Ի մտանել նորա ի ներքս՝ ամենեքին յոտն կացին․ Անկեալ առ ոտս նորա աղաչէր․ Ի հասանել նորա ի քաղաքն՝ բարեկամք նորա ելին ընդ առաջ նորա․ Իբրեւ զայս ասաց, լռեցին ամենեքեան․ Օգնեա մեզ զի կորնչիմք ահաւասիկ․ Ամենայն ինչ քո է․ Այս ամենայն իմ է․ Երկինք աթոռ իմ են․ Որդիք իմ էք դուք․ Բարեկամք բազումք են մեր․ Սա խնդութեանն երթեալ վաճառեաց զամենայն ինչս իւր․ Դու ես զօրութիւն իմ․ Պարծանք մեր էք դուք․ Աստ են եղբարք իմ եւ քորք․ Մի գործեսցեն ծառայք քո եւ աղախնայք եւ մի անասունք քո․ Տեսցեն զգործս ձեր բարիս․ Խօսեցաւ բանս քաղցունս․ Որդի էր կնոջ բարեբարոյի․ Հանդիպեցաք առն անզգամի եւ լեզուանւոյ․ Մի ուտեր հաց ընդ այս նենգաւորս․ Ուրախ լեր ընդ բարեկամս քո․ Ձկնորսքն ձգէին զուռկանն․ Բազում ինչ պատմեն զմէնջ․ Իմ չէր երբէք երթեալ ի տուն նորա, այլ նա գայր յաճախ ի տուն իմ․ Անցեալ զօրուն ըստ գետն՝ առ զքաղաքն․ Շինեալ քաղաքս բնակեցան ի նոսա․ Աբրահամ եղեւ մեծատուն յոյժ ի ծերութեան իւրում․ Եղեւ նորա որդի մի Իսահակ անուն, որոյ վառեցին աչք ի ծերութեան իւրում․ Առեալ Հայկայ զորդիս եւ զթոռունս իւր եկն ի Հայս, կռուեցաւ ընդ Բելայ եւ յաղթեաց նմա։

## 15․ Հրահանգ

Հիւանդ է այրս․ Աղքատ է բարեկամ քո․ Որդի իմ է մանուկս․ Թագաւոր ձեր է այրս․ Բարեկամք մեր են սոքա․ Արքս այսորիկ ոչ են ազգականք ձեր․

Ծերունիս այս դատաւոր է քաղաքիս այսորիկ. Զինուորք թագաւորի մերոյ են դոքա. Դուստր քո է աղջիկս. Չեմք թշնամիք ձեր. Հայր իմ իշխան էր քաղաքին այնորիկ. Արքս այսոքիկ երկոքին են զօրավարք Յունաց. Կալաք զորս անդն էին. Արգելուին զորս միանգամ մտանէինն. Կոչեցաք զորս տեսէինն եւ լուան. Տեսի զոր արարին զայս. Սպանին զոր մատնեացն զձեզ. Ճանաչէ՞ս զոր խօսէրն ընդ մեզ. Փոքր է քաղաքս, այլ գեղեցիկ է յոյժ. Չէ ինչ մեծ պարտէզդ, այլ ծառք բազումք են ի նմա. Հին է հանդերձ մեր, այլ օդք ոտից մերոց չեն հինք. Բարձր են լերինքս, այլ առողջ է օդ երկրիս. Յստակ են ջուրք գետոյն. Իցէ՞ խոր գետն. Եղեւ կռիւ ի քաղաքին, եւ վիրաւորք բազումք եղեն. Եղէ ի տան նորա զաւուրս բազումս, այլ եղբայր քո չէր ընդ իս. Մեք զոհ եմք զձէնջ, իցէ՞ք եւ դուք զոհ զմէնջ. Այրն զոր տեսեր չէ արժանի գովութեան. Կինն այն այրի՝ աղքատ էր եւ կարօտ աւուրն պարենի. Եղբայր իմ է մանուկդ. Դուստր միամօր է աղջիկդ մօր աղքատի. Որդիք իմ են մանկունքդ. Քաջ լերուք, ո արք. Որդեակ, ուրախ լեր ընդ իս. Ո՞ղջ իցես, եղբայր. Ուլ մի ոչ ետուր ինձ զի ուրախ լինէի ընդ բարեկամս իմ. Սուրբ եղիցի անուն քո. Եղիցուք ձեզ ի ծառայս. Եղիցին տունք ձեր աւերակ. Ուրախ լինէր հանապազ. Արծաթ քո եղիցի քեզ. Լինիցի՞ ինձ որդի. Եմ ես ի մէջ ձերում իբրեւ սպասաւոր. Մեծն ի ձէնջ եղիցի իբրեւ զկրտսերն. Ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին. Մի լինիր ամբարտաւան. Լուռ լերուք.

## 16. Հրահանգ

Հայր իմ գնեաց պարտէզ։ Գնեցաք մատեանս։ Քոյր քո գնեաց զմատեանն փոքր։ Մատեանն զոր գնեցեր՝ ընտիր է։ Տունն զոր գնելոց է եղբայր քո՝ գեղեցիկ, սակայն փոքր է։ Գնեցի եւ ես տուն որ մեծ է յոյժ։ Գրեցե՞ր զթուղթն։ Վաճառեցի զձին զոր հօր քո պարգեւեալ էր ինձ։ Վաճառեցե՞ր եւ դու զքոյն։ Իշխանն վաճառէ զկառս եւ զերիվարս իւր։ Հօրեղբայր իմ գնեաց խոյր մի գեղեցիկ վասն որդւոյ իւրոյ կրտսերոյ։ Մանուկս այս գրեաց թուղթ երկայն առ մայր իւր։ Հայր մեր գնեաց զպարտէզս եւ զայգիս ի հօրաքեռէ քումմէ։ Հարսանիք էին առն ուրումն։ Կոչեաց զամենայն բարեկամս իւր։ Կոչէ կինն զդրացիս իւր։ Հովիւք արածեն զոչխարս։ Այր խիստ ես դու։ Հնձես զոր ոչ սերմանեցեր։ Արձակեցէք զդուստ զի գնասցեն իւրեանց կերակուրս։ Շիջանին լապտերք մեր։ Վաճառեցէք մեզ յիւղոյ ձերմէ։ Երթայք առ վաճառականս եւ գնեսջիք ձեզ։ Զի՞նչ կամիք տալ ինձ։ Ես ածից զնա առ ձեզ։ Մի մխեր զձեռն քո ի սկաւառակն։ Ժողովեցին զընտիր ընտիրսն յամանս։ Օտար էի եւ ժողովեցէք զիս։ Պատառեաց քահանայապետն զհանդերձս իւր։ Կինս սիրէ զմանկունս իւր։ Սիրեմ զեղբարս իմ եւ զքոյրս։ Սիրեմ եւ զբարեկամս իմ եւ զվարդապետս։ Ոռոգեցե՞ր զծաղիկս քո։ Ոռոգեցի զիմն եւ զքոյս։ Եւ քոյր իմ ոռոգեաց զիւրսն։ Եղբարք քո գնեցին շունս երկուս որ գեղեցիկ են յոյժ։ Են կերակուրք եւ ըմպելիք որ եթէ շատ ուտիցեն եւ ըմպիցեն՝ ցաւս գործեն։ Արաստոյն ազգ ինչ է վիմի յորում ոչ գործէ

երկաթ. Մշակ նոքա են որ գործեն զերկիր. Վարդապետք պատժեն զմանկունս ծոյլս, եւ գովեն զժիրան ։

## 17. Հրահանգ

Տեսե՞ր զայրն առ որ առաքեցի զքեզ. Ոչ տեսի զայրն, այլ վաղիւ տեսից զնա. Գտեր արդեօք զոր խնդրէիրն. Ոչ գտի զոր խնդրէի, գտի զոր ոչն խնդրէի. Գտեալ զնա եհարց ցնա. Մի մտանիցես ի ներքս. Եմուտ ի պարտէզն. Ամենեքին նիրհեցին եւ ի քուն մտին. Եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն. Որ առն զարծաթն՝ չոքաւ, փորեաց զերկիր եւ թաքոյց զարծաթն. Մուտ ի տուն այդր եւ տես. Հանէք զծառայդ անպիտան արտաքս. Կալան զնա զի սպանցեն. Իբրեւ կատարեաց զբանս իւր, ել ի լեառնն. Միւսանգամ եկեալ եգիտ զնոսա ի քուն. Մի ումն յայնցանէ որ ընդ նմա էին՝ ձգեալ զձեռն իւր հան զսուրն, եւ եհար զծառայն. Յայնժամ թքին ընդ երեսս նորա. Ո՞վ իցէ որ եհարն զքեզ. Իբրեւ ել արտաքս, այլ կին ետես զնա. Տեսե՞ր զեղբարս իմ եւ զքորս.—Տեսաք զսպասաւորս ձեր եւ զաղախնայս որ շրջէին ի պարտիզին ընդ հովանեաւ ծառոց. Ճանապարհորդք մեր հասին. Բանս այս եհաս յունկն թագաւորին. Եթէ տօթ ոչ ջեռուցանէ զանդաստանս, պտուղք ոչ հասանեն. Սպասաւորն հան ի վեր զբանն. Կարէք ի գլուխ հանել զգործդ. Ածին զնա առաջի թագաւորին. Իբրեւ ոչ կարաց ածել զնա ի հաւան, անէծ զնա. Եղբայր քո զի՞նչ ածէ զմտաւ. Ածէ զմտաւ երթալ ի Յոյնս. Գտաք զմատեանդ ի վերայ սեղանոյն. Արկեալ էր

նոցա ուռկանս ի ծով. Արկին ջուր ի թակոյկս. Արկին զնովաւ քղամիդ կարմիր. Արկ զձորձս իւր. Ած զսուր քո ընդ մէջ. Բազում ինչ ի կարասեաց նաւին ընկեցին ի ծով. Զոր ունէին արկ ի կիր.

## 18. Հրահանգ

Ահա երկուս քանքարս շահեցայ. Բազում ինչ շահեցաւ. Կամի՞ս լսել զոր ասելոցն եմ. Ոչ կամեցաւ երթալ յագարակ նորա. Խօսեցի զոր արարն դա. Տրտմեալ յոյժ լուռ եղեն. Խօսեցարուք ի հրապարակս. Մի խօսիր ընդ իս ի ծածուկ. Եթէ ամենեքին գայթակղեսցին, ես ոչ գայթակղեցայց. Ուր իցեն քորք ձեր. Քորք մեր ի Հռոմ են. Ո՞ւր են եղբարք ձեր. Մեկնեցան նոքա երթալ յԱթէնս. Ստէպ խորհեալ ոչինչ կարաց վճարել. Եկեալ ի Պարսից բնակեցաւ ի Հայս. Այսպիսի ինչ ոչ երեւեցաւ ի Հընդիկս. Ընդէ՞ր տառապիս. Ո՞վ է որ ալէն զքեզ. Վարդապետն պարսաւէ զՏիգրան, ասէ եթէ ոչ աշխատի նա, հանապազ կագի ընդ ընկերս իւր. Որպիսի՞ թուի քեզ գինիդ. Թուի ինձ եթէ ընտիր է յոյժ. Լացցեն մանկունքս, իբրեւ մեկնեսցի մայր նոցա. Եթէ ոչ կատարեսցես, ամբաստան եղէց զքէն առ հայր քո. Եթէ ոչ հնազանդեսջիք Աստուծոյ, լինիցիք թշուառք. Հնազանդեաք ծնողաց մերոց, եւ անսայաք վարդապետաց մերոց. Մանկունք մտաւարժք հնազանդին միշտ ուսուցաց իւրեանց. Հայեցաւ յարսն որ նստէին. Հան նախ զգերանն յականէ քումմէ, եւ ապա հայեսջիր հանել զշիւղն յականէ եղբօր քո. Արմատք խոտոց ցամաքին ի տօթոյ. Գօսացաւ բազուկ նորա. Զօրացաւ լեզու իմ.

Պապակիմ ի ծարաւոյ. Պապակեալ էաք առ ի չգոյէ ջրոյ. Պարտ է ողորմել աղքատաց. Ողորմեցաւ նմա Աստուած. Որ ողորմին՝ գտցէ ողորմութիւն. Ո՞վ մերձեցաւ ի հանդերձս իմ. Բարկացեալ ոչ կամէր մտանել ի ներքս. Համարին զնոսա իւրեանց բարեկամս. Համարեցաւ թէ մեռեալ իցէ. Նստեալ համարէր զարծաթն զոր շահեցաւ. Ոչ մեկնեցայց ի քէն, թէպէտ մեռանել հասանիցէ ինձ:

## 19. Հրահանգ

Եթէ ոչ վաստակեսցիս, եթէ ցանգ խաղայցես, հանապազ աղքատ լինիցիս. Բորք իմ անսային միշտ վարդապետաց իւրեանց, բազումս աշխատ լինէին, եւ խաղային սակաւ. Եթէ ոչ անսայցես Աստուծոյ, ծնողաց քոց եւ վարդապետաց, ոչ լինիցիս երբէք երջանիկ. Լայ մանուկս. չիք նորա հաց. Եբաց Նոյ զպատուհան տապանին. Կացաք առ նմա աւուրս եօթն. Լուացի զձորձս իմ. Փութայր երթալ յԵրուսաղէմ. Զի՞ հեգգաս, որդի. Փութա, ել յԵրուսաղէմ. Որ եկեալն էին հարկանել զնա՝ ի բաց կացին ի նմանէ. Իբրեւ լուան զայս, ուրախ եղեն յոյժ. Արտասուօք իւրովք թանայր զոտս նորա. Իբրեւ սթափեցաւ ի գինւոյն, յայնժամ զգաց. Տակաւին ո՞չ իմանայք. Ելաց դառնապէս. Լուա զերեսս քո. Լուացին զձորձս իւրեանց:

## 20. Հրահանգ

Մոռացան առնուլ հաց. Խոստանայք եւ ոչ կատարէք. Իմացա՞յք զայս ամենայն. Նոքա ոչ իմացան. Ընթացաւ ի գերեզման անդր. Վազեաց ընդ խրամն.

Յոտն եկաց եւ վազվազէր · Իբրեւ լուաւ զգանէն , դիմեաց արտաքս · Մերկացաւ զպատմուճանն զոր զգեցեալ էր · Հիւանդացեալ առնն մերձ էր ի մեռանել · Մերկացարուք զհանդերձս ձեր , եւ զգեցարուք քուրձս · Զօրացաւ յանկողնի իւրում · Ողբացարուք եւ սգացէք · Հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչեւ ցաւուրս երիս · Գուցէ եկեալ աշակերտաց նորա, գիշերի գողանայցեն զնա · Վերացաւ ի նոցանէ ամպն · Որ միանգամ լսէինն՝ զարմանային ընդ բանս նորա · Գթացեալ ձգեաց զձեռն իւր եւ մերձեցաւ ի նա · Մի մերձենար յիս · Ոչ ուրուք ի ձէնջ արծաթոյ կամ հանդերձի ցանկացայ · Եւ նոքա դարձան ի տեղիս իւրեանց · Ստացաւ ագարակ · Բազում գնոց ստացայ զվինուորութիւնս · Երուանդ , ե՞րբ լուացիր · Լուացայց ընդ հուպ · Եթէ վշտանայցէ մի անդամն , վշտանան ամենայն անդամքն ընդ նմա · Գայցեն Հռոմք եւ բառնայցեն զազգ մեր · Բացան աչք նորա եւ տեսանէր · Եթէ իմացեալ էր մեր վաղ , առնէաք դարմանս · Լուաց զձեռս իւր · Որ ոչն ջանայցէ՝ չառնի երբէք մեծատուն · Մինչչեւ արարեալ էր Աստուծոյ զաշխարհս · Չեւ էր ծագեալ արեգական · Մինչչեւ տեսեալ նոցա զմիմեանս ։

## 21 , Հրահանգ

Ո՞ւր իցէ եղբայր քո · Երկու ամիսք են յորմէհետէ մեռաւ եղբայր իմ · Մեռանիմ առ անձուկ տեսանելոյ զքեզ · Առ աչին աղակեցին · Գիտէր զի առ նախանձու մատնեցին զնա · Առ ցաւոյն սաստկութեան պատառէր զհանդերձս իւր · Առ փութոյ ապրեցուցանելոյ զանձինս՝ թողին զաւարն · Առ տառապանս մեր

մեռանիմք· Մեռցին մանկունքդ խոլոյ· Նուաղեալ էաք ի ծարաւոյ· Թալանայր ի ծաղրէն· Հայր իմ մեռաւ երէկ ի մէջ բազկաց իմոց· Իցէ՞ մեռեալ հայր քո· Մայր իմ մեռանելոց է ընդ հուպ· Ցանկամ տեսանել զորդեակն իմ, մինչչեւ մեռեալ իցեմ· Մինչչեւ մեռեալ քո՝ մեռայց ես· Ցո՞ ընթանաս այդպէս արագ· Երթամ ածել բժիշկ· Հայր իմ մերձ է ի մեռանել· Ե՞րբ ծնեալ իցէ քո· Ծնայ յամին հազարերորդի ութհարիւրորդի տասներորդի· Եթէ ծնեալ էր իմ ամաւ միով յառաջ, լինէի ի տիս քո· Հօրեղբայր իմ ծնաւ յետ մեռանելոյ հօր իւրոյ· Քոյր իմ կրտսեր ծնաւ յամսեանն Մարտի· Յաւուրս յայսմիկ ծնցի նմա որդի· Իբրեւ առ նա սկիզբն խօսելոյ, լռեցին ամենեքեան· Սկսայց պատմել քեզ զոր արարըն նա ինձ· Նիստ, եթէ հաճոյ իցէ քեզ· Նստայց, ուր եւ գտից տեղի· Նստայ անդ ժամ մի· Ասա ցնա զի նստցի· Նստարուք աստէն մինչեւ ես գամ· Նստցուք առ քեզ· Եթէ նստիցի, ոչ եւս յառնիցէ· Ընդէ՞ր ոչ նստիս· Զի՛ք տեղի նստելոյ· Տուր տեղի զի նստցի Տէրդ· Ո՞ւր նստեալ էր քո յեկեղեցւոջն· Էի նստեալ առ մօրաքեռ քում· Տեարք, զի կայք յոտս, նստարուք արդ ։

## 22. Հրահանգ

Անկեալ առ ոտս նորա աղաչէր· Անկեալ զպարանոցաւ նորա համբուրէր զնա· Անկեալ ի ծով հեղձաւ· Անկեալ ի վերայ նոցա կոտորեցին զնոսա· Զգոյշ լեր չանկանել· Եթէ անկայց, յարեայց միւսանգամ· Մովսէս սնաւ ի տան Փարաւոնի· Սնեալ էր ի վայրս հովասունս Հայոց աշխարհին· Բերեալ մար-

մին նորա թաղեցաւ ի գերեզմանի հօր իւրոյ· Իր-բեւ ածաք առաջի թագաւորին, եհարց զմեզ· Կամէր երթալ, այլ արգելաք զնա· Թողեալ զնա փախեան· Ընդէր չտայք թոյլ երթալ անդ ի տեղի իւր· Կալայ զքեզ եւ ոչ թողից· Մի հեղուր արիւն անպարտ· Թափեաց նաւն զբեռինս իւր· Թողեալ զնա մեկնեցաւ· Զենում ոչխարս եւ արջառս· Փչեալ մարթեցին զնոսա կենդանւոյն· Ընկեցին ի ծով զամենայն գործիս եւ զկարասի նաւին· Ընկեցեալ զհանդերձս իւր փախչէր· Լցէք զկաժակդ գինւով· Մի ուրեք երթայցէք, մինչեւ լցցին ամանք ձեր· Ունիմ ինչ ասել ցքեզ· Զի՞նչ կամիցիս ասել ցիս· Չասեմ ինչ· Ասա միայն· Ապա ասացից քեզ· Մի ինչ ասիցես հօր իմում յորոց քեզն պատմեցի· Մի ասեր նմա եթէ անկեալ դնիմ յանկողնի· Զի՞նչ ասաց նա առ քեզ· Ո՞չ ասացի ձեզ· Տակաւին ոչ ասացեր ինձ· Կամի՞ս զի ասացից քեզ· Չէ պարտ մարդոյ ասել զամենայն ինչ զոր լսէ· Ասաց նա զայս ինձ յունկանէ· Զինչ իցէ զոր ասացն քեզ· Զճշմարիտն եւեթ ասացի ցնա· Թող զոր կամին՝ ասասցէ· Զղջամ զի ասացի զայս· Մտադիր ասէի, եթէ զխոացեալ էր իմ· Եթէ այլազգ ինչ ասէի, խօսէի սուտ· Երէկ ասացի ցեղբայր քո գալ տեսանել զիս· Բազում անգամ ասէր եթէ ցաւ էր նմա ընդ մահ բարեկամի իւրոյ ·

## 23. Հրահանգ

Զինչ է զոր ընթեռնուդ· Ընթեռնում մատեան նոր· Զնոյն եւ մեք ընթեռնումք· Հայր իմ երբեմն ընթեռնոյր զմատենագիրս Յունաց· այժմ ոչ եւս ընթեռնու զնոսա· Ընթերցայ այսօր զպատմութիւն

Հերոդոտեայ. Հայր իմ երէկ ընթեռնոյր զԹուկիդի-դեայն. Ընթերցայց արդ մատեան մի գեղեցիկ զոր ուրումն փոխ տուեալ է ինձ. Յաճախագոյն եւս ընթեռնուք, եթէ էր մեր աւելի ժամ պարապոյ. Ապա ուրեմն սիրէք զընթերցուածս. Կամի՞ս զի ընթերցայց քեզ զթուղթս զայս. Ոչ ընթեռնուս բարւոք. Զիարդ պարտ իցէ ընթեռնուլ զայս բան. Ցանկայ գիտել ընթեռնուլ իբրեւ զքեզ. Յուշ լիցին քեզ զոր ընթերցարդ. Մանկունք իմ գրեթէ ոչ ընթեռնուն բնաւ. չախորժեն յընթերցուածոյ. Բազում անգամ յեղյեղում առ նոսա եթէ չէ պարտ ծուլալ յընթերցուածոյ, որ զսիրտ եւ զմիտս միանգամայն յարդարէ։

Դիր զաթոռդ ի տեղի իւր. Ո՞ւր եդիր զխոյր իմ. Եդի զնա ի վերայ սեղանոյն. Զհանդերձ իմ եդի այգուն յարկեղ. Եթէ դնէի զնա այլուրեք, չէր մարթ գտանել զնա յերեկոյին. Ո՞ւր կամիս զի եդից զձորձս քո. Դիր ուր եւ հաճոյ իցէ քեզ. Համարիցիս եթէ եդի՞ ի վերայ անկողնոյն. Եդ ի մօտ երթալ. Դիր զխոյր քո ի գլուխ քո. Դիցուք եթէ անդ իցէ. Դիցէ զնա ի սնարից իւրոց ի վերայ բարձի. Եդին զնա ի բանտի. Եդաւ ի նոր գերեզմանի, որ էր փորեալ ի վիմի։

## 24. Հրաման

Առից զդա վասն իմ. Ո՞րչափ ինչ կամիցիս առնուլ: Առից զկէսն. Եղբարք իմ առցեն զմնացորդն. Կամի՞ցիս զտեղի առնուլ. Առ զոր միանգամ կամիս. Զի՞նչ կամիս զի առից. Առցէ աղախինն զմանուկն ի գիրկս իւր. Առնուաք ի դիպակէ այտի, եթէ չէր եղբօր

իմոյ առեալ զամենայն. Առե՞ր ի միտ զայս ամենայն. Թուի ինձ եթէ ամենայն աշակերտք իմ չառին ի միտ զպատուէրս զայս. Առի զնա ի ձեռաց նոցա. Առեալ զնաւսն գնացին. Առէք ինձ այսր ձի. Վառէին մոմք երկու, մին ի սնարից եւ միւսն յանոտից նորա. Զի՞նչ առնես. Առնեմ զոր պատուիրեցերն ինձ. Առնեմք զոր առնելն պարտիմք. Զառնեն ինչ մանկունքդ. Ընդէր չառնեն ինչ. Քանզի եւ դուք եւս չառնէք ինչ. Զի՞նչ առնէիր ի մտանել իմում ի ներքս. Լուցանէի կրակ. Զի՞նչ առնէք յերեկոյին. Զոր դուքդ այգուն առնես՝ արարից ես զայն յերեկոյին. Արա զոր կամիսդ. Արասցուք միշտ զոր առնելն պարտիմք. Զառնէ ումեք չար. Եթէ էի մեծատուն իբրեւ զքեզ, բազում ինչ առնէի. Ոչ այլ ինչ առնեն արքս բայց ուտել եւ ըմպել. Արարի զնա ինձ բարեկամ. Դատաւորքն չարարին նմա իրաւունս. Մանուկս այս առնէ զկամս հօր իւրոյ:

## 25. Հրահանգ

Ճանաչեմ զքեզ արդ. Եւ դու զիս ճանաչես. Ոչ զոք ճանաչեմ աստ. Եղբայր քո ճանաչէ զիս քաջ. Զբազումս ճանաչեմ աստէն. Ծանօթք բազումք են մեր աստ. Ոչ ճանաչէի զքոյր քո. Հօրեղբայր քո ծանօթ է ինձ յոյժ. Ոչ եւս ծանիցէ զձեզ. Հարցէք ցնա եթէ ճանաչիցէ՞ զիս տակաւին. Կամին ճանաչել ինձ զայրն. Մինչչեւ ծանուցեալ իմ զնա՝ եկն առիս. Ետ նմա ծանօթս. Տեսի զքեզ ընդ միում ի ծանօթից քոց, ընդ որում չէ՞ի ես ծանօթ. Ծանեաւ զնա ի բարբառոյն. Ծանիր զյանցանս քո:

Յո՞ երթաս. Երթամ ի տուն. Եղբայր իմ երթայ

ի դպրոց· Յո՞ երթայիր ընդ առաւօտն, իբրեւ մտի ես ի ներքս· Երթայի ի պարտէզ մեր· Երթա՞յք անդէր ընդ առաւօտս· Երթայի մտադիր ճեմել, եթէ աստ էր եղբայր իմ· Եթէ հաճոյ իցէ քեզ, եկից եւ ես ընդ քեզ· Երթիցուք ի միասին· Մի գնար այնպէս արագ, երթիջիր մեղմով· Յո՞ երթան մանկտիդ· Երթան զճանապարհն ընդ որ մեքս· Ո՞ւր իցէ քոյր քո· Չոգաւ տեսանել զհայր իւր, վաղիւ դարձցի այսրէն· Ելցուք ընդ առաջ նորա· Կամիցի՞ս երթալ վաղիւ ի կոչունս· Հայր իմ չտայ թոյլ երթալ ինձ անդր· Ընդ հուպ երթայց անդր· Կաց վայր մի զի երթիցուք ի միասին· Պարտ է ինձ երթալ· Ոչ կամին երթալ· Զիմէ՞ իմեքէ երթան արքդ· Երթան զջրոյ·

## 26. Հրահանգ

Յո՞ տանիք զմանուկդ· Տանիմք զնա ի դպրոց· Կամիցի՞ք տանել զնա ի տուն· Տանիմք զքորս մեր ի թէատրոն· Յո՞ կամիս զի տարայց զքեզ· Տար զիս ի պարտէզ ձեր· Մտադիր տարայց զձեզ անդր· Տանէի զքեզ, եթէ էր իմ ժամ պարապոյ· Կարի իմն յամեսցուք, եթէ տարցուք զձեզ անդր· Ե՞րբ գայցես տանել զեղբայր քո անդր· Յո՞ տարայք զմատեան իմ· Ոչ գիտեմ յո տարայս· Ոչ տեսաք զտանել նորա· Տար զպատանիդ առ հազարապետն· Պատուէր ետ սպասաւորացն տանել զնա ի ներքս ի սրահն· Կերիցուք սակաւ ինչ ի մրգոց աստի· Ոչ ուտեմ այժըմ, զի չեմ նօթի· Էր երբեմն զի ուտէաք բազում ինչ, այժմ սակաւ ինչ ուտեմք· Իբրեւ կերաւ ի հացէ անտի, եւ արբ ի գինւոյն, ոգի առեալ կամ կազդուրեալ սկսաւ խօսել· Ընդէ՞ր ոչ ուտէք, տեարք,

եւ ոչ ըմպէք· Կերայք եւ արբէք· Ոչ կերան ինչ եւ ոչ արբին· Ո՞վ է որոյ իցէ ոչխար եւ ոչ ըմպիցէ ի կաթանէ նորա, եւ ոչ ի մսոյ նորա կերիցէ· Են անասունք որոց ոչ ուտի միսն, այլ եթէ սիրա ուրուք առնույր եւ ուտէր ի մսոյ նոցա, չառնէր ինչ նմա վնաս· Յամենայն ծառոց որ են ի դրախտիդ՝ կերայք, այլ ի ծառոյ աստի մի ուտիցէք· Զեցէ՞ ինչ տաս յըմպել· Աւասիկ գինի, արբէք, եթէ հաճոյ է ձեզ· Բնաւ ոչ ըմպեմ գինի· Ջուր եւեթ ըմպեմք· Սրբցուք յարեւ թագաւորին· Երէկ արբի բաժակ մի գինի, այլ ոչ արբից այսօր· Սրբցուք ի միասին· Դու կերար շատ, եւ նա կարի արբ· Շատ է զոր կերաքս· Գինին զոր երէկ արբաք՝ այնպէս ազնիւ էր մինչեւ իւրաքանչիւր ումեք ի մէնջ ըմպել մէն մի շիշ։

Ուստի՞ գայցես այդպէս անագան· Գամ ի ճեմելոյ· Ուստի՞ գայիր այգուն, յորժամ հանդիպեցայ քեզ· Գայի յամբարանոցէ անտի· Երէկ կարի անագան եկի, այլ զայս առաւօտ եկի վաղ յոյժ· Եկեսցուք վաղ, եթէ լիցի ժամանակ· Կամի զի եկեսցուք յութերորդ ժամու· Եկայք ի դիպող ժամու, ունիմ ինչ ասել ձեզ· Գայցէ՞ ինչ ընդ հուպ· Եկայք, տեարք· Որդի քո եկն եւ խնդրէր զքեզ· Բարեկամ, եկ այսր

## 27. Հրահանգ

Զի՞նչ ունիս ի ձեռին· Ունիմ մատեան ի ձեռին· Կարծէի եթէ ունիցի զմատանին զոր կորոյս եղբայր իմ· Ահա աւասիկ դահեկան մի վասն աղքատին որ կայ առ դրան· Կալ բարւոք ի մտի զոր ուսարդ· Ո՞ ունիցի ի վարձու զտունդ· Հօրեղբայր իմ կալաւ զնա ի վարձու· Կալ ի վարձու մշակս երիս որ գործեսցեն

յայգւոջ խմում. Կալարուք զարսդ, եւ մի թողուք
զնոսա. Զի՞նչ է զոր ընկալարդ. Ընկալայ պարգեւ
ի թագաւորէն. Համարիցի՞ս եթէ եւ մեք առնու-
ցումք. Առջիք, եթէ լիցէք արժանի. Ոչ ոք ընկալցի
զձեզ ի տուն իւր. Մեծաւ պատուով ընկալան զմեզ
արքն. Տամ քեզ զմատեանս. Տուր զարծաթդ կնոջդ
աղքատի. Տուք սակաւ ինչ գինի հիւանդիս. Ետ
նմա մայր նորա միրգս. խնձոր եւ տանձ եւ նուռն.
Ասա ցպանդոկապետն տալ սմա պատառ մի միս,
բաժակ մի գինի եւ մանանխ եւ հաց. Տուաք դրա-
ցւոյ քում գրիչս վէց, քարտէս եւ մելան. Զայս
ամենայն տաց քեզ, եթէ զոր ասելոցն եմ առնիցես.
Ո՞ւմ տացուք զգիրդ. Տուք հօր ձերում. Եթէ տա-
ցես ողորմութիւն աղքատի, տուր ի ծածուկ. Ո՞ւր
են հանդերձք քո. Ետու որում ետուն զնոսա ինձ.
Գիտիցե՞ս երբ գայցէ հայր իմ: Ոչ գիտեմ. Ասա զի
գիտացից. Գիտասջիր զի ոչ երկնչիմք մեք ի սպառ-
նալեաց քոց. Կարո՞ղ ես առնել մեզ զայդ. Այո,
կարող եմ. Յո՞ երթաս. Ի հրապարակ. Կարիցեմք եւ
մեք գալ. Դուք ոչ կարէք գալ անդր. Ասաց եթէ
կարող եմ առնել, եւ ոչ կարաց առնել. Երէկ եւ
եռանդ ոչ կարացի ելանել յանկողնոյ, վաղիւ թե-
րեւս կարացից ելանել.

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՅՈՎՍԵՓԱՅ ԳԵՂԵՑԿԻ

---

## 1․

### ՅՈՎՍԷՓ ՎԱՃԱՌԱԿՈՒՐ ԼԻՆԻ ՅԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՑ

Յակոբ սիրէր զՅովսէփ առաւել քան զայլ որդիս իւր, զի ստացաւ զնա ի ծերութեան իւրում։ Արարեալ Յակոբայ պատմուճան ծաղկեայ նկարէն, ագոյց նմա․ այլ եղբարքն Յովսեփու ատէին զնա վասն առաւելն սիրելոյ զնա հօր նոցա, եւ վասն երկուց երազոցն զոր պատմեաց նոցա Յովսէփ։ «Թուէր ինձ», ասէր Յովսէփ յաւուր միում եղբարց իւրոց, «թուէր ինձ կապել որայ ընդ ձեզ յանդի․ եւ ահա որայն իմ կանգնէր, եւ որայք ձեր յարուցեալ երկիր պագանէին որային իմում։ Թուէր ինձ դարձեալ տեսանել զարեգակն եւ զլուսին եւ երկոտասան աստեղս զի երկիր պագանէին ինձ»։

Որդիքն Յակոբայ երթեալ էին ի տեղի մի որ կոչէր Սիւքէմ արածել զխաշինս իւրեանց։ Յովսէփ չէր ընդ նոսա, եւ հայր նորա առաքեաց զնա բերել համբաւ զնոցանէ։ Իբրեւ տեսին զնա եղբարքն ի հեռաստանէ, ասեն ցմիմեանս․ «Ահա երազատեսն մեր․ եկայք սպանցուք զնա, եւ ասասցուք եթէ գազանաբեկ լեալ կորեաւ։ Այլ մին յեղբարց անտի Ռուբէն որ կամէր ապրեցուցանել զնա, խրատ ետ

նոցա չսպանանել զպատանեակն. եւ նոքա արկին
զՅովսէփ ի գուբ մի անջրդի ։ Ապա զհետ երթեալ
խրատուն Յուդայի եղբօր իւրեանց, հանին զնա ի
գբոյն եւ վաճառեցին քսան դահեկանի Թանգարաց
Իսմայելացւոց որ տանէին ուղտիւք խունկս անու-
շունս յԵգիպտոս ։ Յետ այնորիկ առեալ զպատմու-
ճանն Յովսեփայ զծաղկեայ, եւ թաթաւեալ զնա
յարիւն ուլոյ՝ առաքեցին առ հայր իւրեանց որ ա-
սէ. «Պատմուճանս այս որդւոյ իմոյ Յովսեփայ է.
գազան չար եկեր զՅովսէփ»։ Հայրն ողորմելի մեր-
կացեալ զհանդերձս իւր զգեցաւ քուրձ, եւ առ սուգ
ի վրայ որդւոյ իւրոյ ժամանակս բազումս ։

## 2.

### ՅՈՎՍԷՓ Ի ՏԱՆ ՊԵՏԱՓՐԵԱՅ

Վաճառականացն Իսմայելացւոց ածեալ զՅովսէփ
յԵգիպտոս, վաճառեցին զնա Պետափրեայ, իշխանի
զօրաց արքային Փարաւոնի ։ Եւ եգիտ Յովսէփ շնոր-
հըս առաջի տեառն իւրոյ, որ կացոյց զնա հազարա-
պետ ի վերայ տան իւրոյ եւ ի վերայ ամենայն ընչից
իւրոց ։ Այլ զի էր այրն դիւրահաւան, անսացեալ
բանից կնոջ իւրոյ որ զրպարտէր զՅովսէփ՝ արկ զծա-
ռայն իւր հաւատարիմ ի բանտ ։

## 3.

### ԵՐԱԶՔ ՄԱՏՌՈՒԱԿԻՆ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Պաշտօնեայք երկու Փարաւոնի, մատռուակ նորա
եւ մատակարարն, էին ի բանտի անդ ուր Յովսէփն

էր։ Տեսեալ նոցա երկոցունց երազ ի միում գիշերի՝ աղաչեցին զՅովսէփ մեկնել նոցա զերազն։ «Տեսանէի», ասէր առաջինն, «որթ որ ունէր բարունակս երիս ծանրացեալս ողկուզիւք խաղողոյ, զոր առեալ իմ՝ ճմլէի ի բաժակին Փարաւոնի եւ մատուցանէի նմա»։ «Յետ երից աւուրց», ասէ ցնա Յովսէփ, «հաստատեսցիս ի պաշտաման քում, եւ յայնժամ յիշեա զիս, եւ աղաչեա զարքայ հանել զիս աստի, զի յանիրաւի կամ ի բանտի աստ»։ Մատակարարն եւս պատմեալ զերազ իւր ասէ. «Տանէի կողովս երիս ի գլուխ իմ, եւ ի կողովին որ ի վերոյ քան զայլսն էր՝ էին որպք չորս զորս ուտէին թռչունք երկնից»։ Ասէ ցնա Յովսէփ, «Յետ երից աւուրց Փարաւոն տացէ հատանել զգլուխ քո եւ կախեսցէ զմարմին քո զփայտէ, եւ եղիցիս դու անդ կեր թռչնոց երկնից»։ Եւ որպէս գուշակեաց Յովսէփ՝ այնպէս եղեւ. այլ մատռուակն հաստատեալ ի պաշտաման իւրում մոռացաւ զոր խոստացաւ։

---

## 4.

### ԵՐԱԶՆ ՓԱՐԱՒՈՆԻ. ԲԱՐՁՐԱՆԱԼՆ ՅՈՎՍԵՓԱՅ

Յետ երկուց ամաց ինքն Փարաւոն տեսանէ երկուս երազս։ Թուէր նմա կալ առ եզերբն Նեղոսի, ուստի ելանէին երինջք եօթն գէրք որ սկսանէին արածել ի խաղս անդ. ապա ելանէին ի գետոյ անտի այլ եւս երինջք եօթն վտիտք յոյժ որ կլանէին զառաջինսն։ Յերկրորդում երազին տեսանէր թագաւորն եօթն հասկս ատոքս, ելեալս ի միջէ ցօղնոյ. եւ այլ եւս

եօթն հասկս ոսինս ելեալս նոյնպէս ի միջի ցօղնոյ որ կլանէին զհասկսն ատուքա։ Զահի հարեալ թագաւորին ի զարթնուլն՝ հարցանէր զամենայն իղձս Եգիպտացւոց, այլ ի զուր։ Յայնժամ յիշեալ մատռուակին զՅովսէփ՝ խօսեցաւ վասն նորա առ Փարաւոն, որ անդէն տայր ածել զնա առաջի իւր, զի մեկնեսցէ զերազսն։ Լուեալ Յովսեփայ զերազսն Փարաւոնի՝ ասէ ցնա, «Եղիցին ամք եօթն առատութեան, եւ ապա եղիցի նուազութիւն ամս եօթն, որ իբրեւ թէ կլանիցեն զամսն զառաջինս առատութեան։ Թող ասէ, կացուսցէ արքայ ի վերայ ամենայն երկրին Եգիպտացւոց զայր մի իմաստուն որ զհնգերորդ մասն հընձոց ամացն առատութեան դիցէ ի պահեստի վասն ժամանակի սովոյն»։ Խրատս այս հաճոյ թուեցաւ Փարաւոնի եւ ամենայն աւագաց նորա։ «Ուր գըտից», ասէ Փարաւոն, «այր իմաստուն եւ հանճարեղ քան զնա»։ եւ ապա դարձեալ առ Յովսէփ ասէ, «Ահա կացուցի զքեզ այսօր ի վրայ ամենայն երկրիս Եգիպտացւոց»։ Ապա հանեալ զմատանին ի ձեռանէ իւրմէ՝ արկ զնա ի մատն Յովսեփայ, ագոյց նմա պատմուճան բեհեզեայ, արկ մանեակ ոսկի զպարանոցաւ նորա, եւ հանեալ զնա ի մին ի կառաց իւրոց, ետ կարդալ քարոզ եթէ, Ամենայն ժողովուրդքն կրկնեսցէ ծունր առաջի Յովսեփայ, եւ գիտասցէ եթէ կարգեցաւ նա իշխան ի վրայ ամենայն Եգիպտոսի։ Յետ այնորիկ ետ Փարաւոն Յովսեփայ որ էր ամաց երեսնից՝ կին զդուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի զԱսանէթ, յորմէ եղեն նմա որդիք երկու, Մանասէ եւ Եփրեմ։

## 5.

### ՅԱԿՈԲ ԱՌԱՔԷ ԶՈՐԴԻՍ ԻՒՐ ՅԵԳԻՊՏՈՍ

Որպէս ասացն Յովսէփ, եօթն ամքն առատութեան եկին, եւ յետ այնորիկ այլ եւս եօթն ամք նուազութեան ։ Յայնժամ եղեւ սով յամենայն երկրին Եգիպտացւոց եւ ընդ ամենայն աշխարհ. եւ յամենայն կողմանց գային յԵգիպտոս գնել ցորեան, զոր Յովսէփ համբարեալ պահէր ի շտեմարանս ։ Իմացեալ Յակոբայ եթէ գոյ ցորեան յԵգիպտոս՝ առաքեաց անդր զորդիս իւր որ էին թուով տասն, զի ունէր առ իւր զկրտսերն Բենիամին ։ Ծանեաւ Յովսէփ զեղբարս իւր առանց ծանօթս տալոյ նոցա. եւ պատճառեալ եթէ իցեն լրտեսք՝ ասէ ցնոսա. «Եկեալ էք դուք դիտել զել եւ զմուտ Եգիպտոսի» ։ «Ոչ, տէր», ասեն եղբարքն, «այլ եկաք մեք գնել ցորեան ։ Երկոտասան եղբարք եմք. որդիք առն միոյ որ բնակեալ է յերկրին Քանանացւոց ։ Կրտսերն ի մէնջ առ հօր մերում է, եւ մին չէ ի միջի» ։ Ասէ ցնոսա Յովսէփ, «Ոչ թողից զձեզ աստի մինչեւ եկեսցէ եղբայրն ձեր կրտսեր. առաքեցէք զմին ի ձէնջ ածել զնա այսր» ։ Զայս ասացեալ եդ զնոսա ի բանտի. ապա հանեալ զնոսա անտի յաւուրն երրորդի՝ ասէ, «Մին ի ձէնջ կացցէ աստ առ իս պատանդ, այլքն երթիցեն հանդերձ ցորենով, եւ ի դառնալ ձերում ածէք զեղբայրն ձեր զկրտսեր, զի գիտացից եթէ ճշմարիտ են բանքդ» ։ Նոքա ասէին ցմիմեանս. «Յիրաւի կրեմք զվիշտս զայս, զի մեղաք նմա, եւ ոչ ողորմեցաք նմա յորժամ աղաչէրն

զմեզ»· եւ ոչ գիտէին եթէ Յովսէփ իմանայր զբանըս նոցա, զի խօսէր ընդ նոսա թարգմանաւ։ Այլ Յովսէփ առանձնացեալ փոյր մի ելաց։ Ապա եկեալ միւսանգամ հրամայէր ծառայից իւրոց ունել զՇմաւոն, եւ լցեալ զքուրձս նոցա ցորենով, դնել զարծաթ իւրաքանչիւր ուրուք ի բերան քրձի իւրոյ։ Եւ ապա արձակեաց զնոսա։ Հասեալ նոցա յերկիրն Քանանու, պատմեցին հօր իւրեանց զամենայն որ դիպեցաւ նոցա· եւ ասէ ցնոսա Յակոբ· «Անորդի արարէք զիս· Շմաւոն դերի է· Յովսէփ չէ ի միջի· կամիք եւ զԲենիամին առնուլ յինէն· ոչ այդպէս· չառնում յանձն թողուլ երթալ նմա ընդ ձեզ։

---

## 6.

### ՈՐԴԻՔՆ ՅԱԿՈՎԲԱՅ ԴԱՌՆԱՆ ՅԵԳԻՊՏՈՍ

Ի սաստկանալ սովոյն ի վերայ ամենայն երկրի՝ ասէ Յակոբ ցորդիս իւր· «Երթայք անդրէն յԵգիպտոս»։ Յուդայ ասէ ցհայր իւր· «Եթէ կամիս երթալ մեզ, առաքեա ընդ մեզ զԲենիամին· ես եղէց երաշխաւոր մանկանն, յինէն խնդրեսջիր զնա»։ «Եթէ այնպէս իցէ», ասէ Յակոբ, «արարէք որպէս հաճոյն է ձեզ· այլ առէք զընտիր ընտիրս ի պտղոց երկրիս տալ ընծայս առն որ տիրէ· առէք եւ արծաթ կրկին քան զառաջինն, տարայք եւ զայն որ գտաւ ի քուրձս ձեր, գուցէ դաւ ինչ իցէ»։ Եւ եթող զնոսա երթալ, յանձն արարեալ զնոսա խնամոցն Աստուծոյ։ Լուր եղեւ Յովսեփայ եթէ եկին եղբարք իւր, եւ եթէ Բենիամին եւս է ընդ նոսա, հրաման ետ հա-

զարապետին իւրում պատրաստել ճաշ ։ Իբրեւ յանդիման եղեն նմա եղբարք իւր, մատուցին նմա զընծայս իւրեանց, եւ եդուն նմա ողջոյն խոնարհեալ մինչեւ ի գետին ։ Յովսէփ եւս ետ նոցա ողջոյն մեծաւ քաղցրութեամբ, եւ հարցանէր ցնոսա. «Հայր ձեր ծերունի զորմէ ասէիք թէ յերկրին Քանանացւոց է՝ ողջ իցէ» ։ Ապա հայեցեալ ի Բենիամին որ էր նորա եղբայր համամայր, ասէ. «Դա՞ իցէ եղբայր ձեր կրտսեր. Աստուած ողորմեսցի քեզ, որդեակ, եւ պահեսցէ զքեզ», եւ աճապարեաց ել արտաքս, զի փղձկէր սիրտ նորա, եւ ոչ եւս հանդուրժէր ունել զարտասուս իւր ։ Յետ լուանալոյ զերեսս իւր, եկն միւսանգամ՝ բուռն արարեալ անձին, եւ ի պատրաստ լինել ճաշոյն, նստաւ ընդ եղբարս իւր ի սեղան ։

---

## Դ.

### ՅՈՎՍԷՓ ՏԱՅ ԾԱՆՕԹՍ ԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՑ

Յետ ճաշոյն, պատուէր ետ Յովսէփ հազարապետին իւրում լնուլ զքուրձս հիւրացն ցորենով, դնել անդր եւ զարծաթն զոր բերեալ էր նոցա, եւ զբաժակ իւր եւս ի քրձին Բենիամինի ։ Այն ինչ ելեալ էր նոցա ըստ քաղաքն, եւ ահա հասեալ ի վերայ նոցա հազարապետին, արգելոյր զնոսա եւ խնդրէր ի նոցանէ զբաժակ տեառն իւրոյ ։ Բացան քուրձքն, եւ բաժակն գտաւ ի քրձին Բենիամինի ։ Յայնժամ զարմացեալ նոցա եւ զահի հարեալ, պատառեցին զհանդերձս իւրեանց եւ դարձան ի քաղաքն ։ Ասէ

ցնոսա Յովսէփ. «Զի՞ է զի գողացարուք զբաժակ իմ. ոչ գիտէք զի չիք ոք որ գիտիցէ հմայել իբրեւ զիս ։ Արդ նա որ գողացաւն զբաժակն՝ եղիցի ինձ ծառայ , եւ դուք երթայք խաղաղութեամբ առ հայր ձեր » ։ Յայնժամ պատասխանի տուեալ Յուդայի ասէ. «Ծառայ քո հայր մեր մեռանիցի , եթէ ոչ դարձուցից առ նա զպատանեակդ , զի իմ երաշխաւոր լեալ է կենօք չափ վասն դորա. ես եղեց ծառայ տեառնդ իմում , եւ երթիցէ պատանեակդ ընդ եղբարս իւր » ։ Յովսէփ ոչ կարացեալ այլ եւս ժոյժ ունել՝ ետ հանել արտաքս զամենայն Եգիպտացիսն , եւ յարտասուս հարեալ մեծաձայն՝ ասէ ցեղբարս իւր. «Ես եմ Յովսէփ. տակաւին ո՞ղջ իցէ հայր իմ» ։ Եւ զի պախեալ ընդարմացեալ էին նոքա յերկիւղէ , յաւել ասել ցնոսա քաղցրութեամբ , «Մատերուք առ իս , Ես եմ Յովսէփ , եղբայր ձեր , զոր դուք վաճառեցէք , այլ մի երկնչիք. Աստուած առաքեաց զիս յԵգիպտոս կերակրել զձեզ , երթայք առ հայր իմ, եւ պատմեցէք նմա զոր տեսէքդ , եւ փութասջիք գալ առ իս ։ Բնակեսջիք դուք ի Գեսեմ եւ ես կերակրեցից զձեզ , զի հինգ ամ եւս տեւեսցէ սովդ ։ Եւ անկեալ զպարանոցաւ Բենիամինի եղբօր իւրոյ համբուրեաց զնա լալով , համբուրեաց եւ զայլս եւս յեղբարց իւրոց մեծաւ խանդաղատանօք , եւ նոքա հաւատացին նմա ։

---

## 8.

### ՅԱԿՈԲ ԳԱՅ ԲՆԱԿԵԼ ՅԵԳԻՊՏՈՍ

Յովսէփ հրաման ետ տանել հանդերձս երկուս վառըն միոյ միոյ յեղբարց իւրոց. իսկ վասն Բենիամի-

նի տայր յօրինել հանդերձս հինգ, գեղեցիկս յոյժ, եւ ետ նմա դահեկանս արծաթոյ երեքհարիւր ։ Նոյնչափ դահեկան եւ այլ եւս բազում ինչ առաքեաց առ հայր իւր ։ Թագաւորն գլխովին ետ տանել կառս բերել զՅակոբ հանդերձ իւրովքն եւ ամենայն աղխիւն ։ Լուեալ Յակոբայ ի բերանոյ որդւոց իւրոց զամենայն անցս որ անցին, տեսեալ եւ զկառս թագաւորին եւ զընծայսն Յովսեփայ՝ գոչեաց. «Ոչ իմիք ցանկամ այսուհետեւ, զի որդի իմ Յովսէփ կենդանի է, երթայց տեսանել զնա մինչեւ մեռեալ իցեմ» ։ Եւ ել Յակոբ ի ճանապարհ հանդերձ ընտանեօք իւրովք եւ ամենայն կահիւ եւ կարասեօք երթալ յԵգիպտոս ։ Յովսէփ ել ընդ առաջ հօր իւրոյ, եւ անկեալ զպարանոցաւ նորա, թանայր զնա արտասուօք իւրովք ։ Ապա եհան զնա առաջի Փարաւոնի, որ եհարց ցՅակոբ թէ քանի ամաց իցէ. եւ նորա տուեալ պատասխանի ասէ. «Թիւք ամաց պանդխտութեան իմոյ ի վերայ երկրի՝ են հարիւր եւ երեսուն. սակաւ քան զթիւ ամաց հարց իմոց, եւ լի ցաւովք եւ հեծութեամբ» ։ Յովսէփի հրամանաւ Փարաւոնի ետ ի ժառանգութիւն հօր իւրոյ եւ եղբարց իւրոց զերկիրն Գեսեմ, պտղաբեր յոյժ յամենայն երկրին Եգիպտացւոց ։

---

## 9.

### ՅԱԿՈԲ ՕՐՀՆԷ ԶՈՐԴԻՍ ԻՒՐ ԵՒ ՄԵՌԱՆԻ

Յակոբ եկեաց այլեւս ամս եօթնեւտասն յԵգիպտոս ։ Յայնժամ տեսեալ նորա թէ մեռանելոց է՝

երդմնեցոյց զՅովսէփ թաղել զնա ի գերեզմանս հարց իւրոց · յետ այնորիկ օրհնեաց զերկոսին որդիսն Յովսեփայ , զԵփրեմ եւ զՄանասէ ։ Ապա կոչեալ զամենայն որդիս իւր զմահճօք իւրովք խօսեցաւ առ մէն մի ի նոցանէ եւ օրհնեաց զնոսա ։ Զռուբէն զորդի իւր յանդիմանեաց վասն ոճրոյն մեծի զոր նորա գործեալ էր · զՇմաւոն եւ զՂեւի վասն անօրէն վրիժուն զոր խնդրեալ էր նոցա ի Սիւքեմացւոց անտի ։ Իբրեւ եկն առ Յուդա , ասէ ցնա · Գովեալ լիցիս դու յեղբարց քոց , եւ ձեռն քո արկցէ ընդ լծով զթշնամիս քո ։ Դադարեալ Յակոբայ ի խօսելոյ , տարածեաց զոտս իւր ի մահիճս իւր եւ մեռաւ ։ Տեսեալ Յովսեփայ եթէ վախճանեցաւ հայր իւր , անկաւ ի վերայ նորա եւ համբուրեաց զնա արտասուօք ։ Ապա հրաման տուեալ դիապատկաց եգիպտացւոց պատել զմարմին նորա ըստ սովորութեան երկրին՝ տարաւ զնա անձամբ եղբարբք իւրովք հանդերձ յերկիրն Քանանու , եւ եդ զնա մեծաւ շքով ի շիրմին որ կոչէր այր Մակփելայ, մօտ ի Քեբրոն ։

---

## 10.

### ՄԱՀ ՅՈՎՍԵՓԱՅ

Յետ մահուանն Յակոբայ երկուցեալ եղբարցն Յովսեփու թէ գուցէ յուշ լիցին նմա չարիքն զոր արարեալ էր նոցա նմա , աղաչեցին զնա ներել նոցա , եւ նա հանդարտեցոյց զնոսա քաղցրութեամբ եւ սիրով ։ Էր նա յայնժամ ամաց իբրեւ յիսուն եւ վեցից , եւ

եկեաց այլ եւս ամս յիսուն եւ չորս՝ սիրելի եւ մեծարոյ լեալ միշտ յաչս Եգիպտացւոց որոց լեալ էր նա փրկիչ ։ Յառաջ քան զմեռանել իւր ասէ Յովսէփ ցեղբարս իւր. «Այց արարեալ ձեզ Աստուծոյ յաւուր միում՝ հանցէ զձեզ աստի տանել յերկիրն զոր ետ նա հարց մերոց ։ Երդուարուք ինձ տանել յայնժամ զոսկերս իմ ընդ ձեզ » եւ նոքա երդուան նմա ։ Վախճանեալ Յովսեփայ հարիւր եւ տասնամենի՝ պատեցաւ մարմին նորա եւ եդաւ ի դագաղս մինչեւ ցելս որդւոցն Իսրայելի յԵգիպտոսէ երթալ յերկիրն Քանանացւոց ։

# ԱՅԼԵՒԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

## 1

### ՇՆԻԿՆ

Մանուկ մի գնայր յաւուր միում շրջել առ եզերբ առուի միոջ, եւ հանդիպէր անդ մանկանց ոմանց չարաց որ հեղձուցանել կամէին շուն մի փոքրիկ ի ջուրս անդ առուին ։ Գթայր մանուկն յանասնիկն հէք, գնէր զնա եւ ածէր ընդ իւր յիւր տուն ։ Վաղվաղակի ընդելանէր շնիկն ընդ իւրում բարերարին այնպէս, մինչեւ շրջել զկնի նորա յո եւ երթայր նա, խաղալ ընդ նմա եւ անկանել ընդ անձն ։ Ի գիշերի միում իբրեւ մանուկն կամէր մտանել յանկողին, շունն սկիզբն առնոյր հաչել, եւ չտայր նմա ի քուն

լինել․ Կամեցեալ գիտել պատանւոյն թէ զինչ էր վասն որոյ հաչէրն շունն, առ ճրագ, եւ իբրեւ յածէր այսր անդր տեսանել ինչ, յանկարծ ետես ընդ մահճօքն այր մի ի կերպարանս ահաւորս, եւ գիտաց եթէ գող էր նա ։ Ի բառնալ պատանւոյն ճիչ առ ահին, ամենեքին որ ի տանն էին՝ գային խռնէին զնովաւ․ եւ կալեալ զգողն մատնէին դատաւորին ։ Ի լինել հարցափորձի, խոստովան լինէր այրն եթէ ի մտի եդեալ էր սպանանել մի ըստ միոջէ զամենեսին որ ի տանն էին, սկիզբն արարեալ ի պատանւոյն, եւ ապա յաւարի առնուլ զտունն ։

Յայնժամ գոհացաւ մանուկն զԱստուծոյ զի այնպէս յաջողութեամբ փրկեաց զնա, եւ ասէ․ Ո՜ երբէք ածէր զմտաւ եթէ կորիւն մի շան զորոյ ես զկեանսն փրկեցի, փրկելոց էր զիմ կեանս ։

---

## 2

### ԴՐԱՑԻՔ ԱԶՆՈՒԱԳՈՅՆՔ

Ջրաղացի ուրուք էր մանուկ մի փոքր, որ ի խաղալ իւրում մօտ յափունս առուի, անկանէր ի ջուրսըն։ Ատաղձագործ ոմն որ յայնկոյս առուին բնակէր․ ետես զոր ինչ եղեւն, եւ իսկեւիսկ արկեալ զանձն ի ջուր անդր, հան ողջ զմանուկն եւ ած կացոյց առաջի հօրն ։

Իբրեւ ամ մի ի վերայ անցանէր, յանկարծ ի մէջ գիշերի պատահէր հրդեհ ի տան ատաղձագործին ։ Ճարակէր բոցն զտունն, եւ ապա ուրեմն իմացեալ ատաղձագործին, հազիւ զերծուցանէր զանձն եւ զկին իւր եւ զորդիս ։ Սակայն առ փութի զերծա-

նելոյ, մռանային առնուլ զկրտսերագոյնն ի ման-կանց որ էր դուստր իբրեւ ամաց երկուց ։

Աղաղակ մանկանն լսելի լինէր ի միջոյ հրոյն բոր-բոքելոյ, հայր եւ մայր նորա լային դառնապէս, այլ չէր ոք որ իշխէր մտանել եւ փրկել զմանուկն ։ Յայն-ժամ աճապարեալ գայ մլաղացն, եւ սրացեալ ի հըր-դեհ անդր, առնու ածէ զմանուկն անապական, եւ տուեալ զնա ցծնողսն ասէ. Օրհնեալ եղիցի տէր որ ետ ինձ ժամ դիպող առ հատուցանել զերախտիսն զոր ինձ արարէք. դու զիմ ուստր հաներ ի ջրոյ, եւ ես, օգնականութեամբն Աստուծոյ, զերծուցի զքո դուստր ի հրոյ ։

Իբրեւ հասանէին մանկունքն երկոքին յարբունս, որ հանաւն ի ջրոյ՝ առնէր կին զնա որ ի հրոյն հան-եալ էր ։

---

## 3

### ՎԱՐԴԵՆԻ

Կնոջ ուրումն աղքատի էր դուստր մի որ տնկեաց տունկ մի մատաղ վարդենւոյ յանօթ խեցեղէն եւ եդ առաջի պատուհանի խցկանն յորում բնակէր ։ Էին աւուրք գարնայնոյ, եւ տունկն լի էր բոլորիք վարդից ։ Ի ջեր ժամանակս Թողոյր աղջիկն զվար-դենին արտաքոյ պատուհանին, եւ ընդ երեկս, իբ-րեւ արեւն ի մուտս լինէր, առնոյր ի ներքս ։

Դէպ եղեւ զի յերեկոյի միում չարար ինչ փոյթ դնել զտունկն ի պահեստի, որպէս եւ սովորն էր. քանզի ասէր եթէ Չէ ինչ պէտոյ, զի օդն էր ջերմ եւ քաղցր ։ Այլ իբրեւ եղ ընդ առաւօտն, ետես

զվարդենին ցամաքեալ ի սառամանեաց։ Հայր, իբրեւ հայէր ի տունկն եւ ասէր առ տրտմութեանն. «Մի միայն անմտութիւն ահա եղծ զարդիւնս այնչափ վաստակոց իմոց»։ Յայնժամ ետ պատասխանի մայրն եւ ասէ. «Պատահարդ այդ փոքր, որ քեզ այնչափ վիշտս գործէ՝ մարթի քեզ մեծի իրիք երանութեան պատճառք լինել։ Ուսիր աստուստ զի զոր ինչ սառնամանիքն՝ արարին վարդենւոյդ որ ի ծաղկի էր, ապականութիւն բարոյից զնոյն արասցէ անմեղութեան. եւ զի առ ի պահել զանձն սուրբ յախտից, յաճախ իմն փութոյ պէտք են եւ հանապազորդ զգուշութեան։

---

## 4

### ՊԱՏԵԱՆՔ ՈՂԿՈՒԶՈՅ

Տէր կոմսն Ա. սիրէր յոյժ զճշմարտութիւն եւ զարդարութիւն։ Արք ոմանք չարք զայրացեալ էին ընդ նա վասն այսորիկ, մինչեւ երդնուլ ի միասին եւ ի խնդիր լինել կորուսանել զնա։ Արդարեւ իսկ ետուն արծաթ բազում առն ումեմն չարագործի որ խոստացաւ սպանանել զնա ի վաղիւ անդր գիշերայն։

Կոմսն ազնուական չունէր բնաւ ակն վտանգին որ ի վերայ կայր։ Քեռորդիք նորա, մանկունք սիրունք, եկին առ նա ընդ երեկս։ Ուրախ լեալ կոմսին ընդ գալուստ նոցա, հանէր միրգս՝ խնձոր եւ տանձ եւ ընկոյզ։ Իբրեւ մեկնեցան մանկունքն, կամեցաւ կոմսըն ի քուն լինել, եւ յանձն լեալ ի պաշտպանութիւնն Աստուծոյ, անկասկած ի քուն լինէր։

Սակայն զհասարակ գիշերաւ չարագործն որ գաղտ մտեալ էր յապարանս անդր՝ սպրդէր մեղմով ի սեն-

եալ կոմսին , մինչ սա քաջ ի քուն էր· եւ լապտեր մի փոքր վառէր առ անկողնոյն ։ Մերկացեալ չարագործին զդաշոյնն , եւ ամբարձեալ զբազուկն մերձենայր առ նա ։ Այլ յանկարծ լսելի լինէր ի սենեկի անդ դղրդիւն այնպէս սաստիկ , մինչեւ զարթնուլ կոմսին ի քնոյ ։ Իբրեւ յարեաւ եւ ետես զայրն դաշոյն ի ձեռին , աճապարեաց առ զզէնսն որ կախեալ կային զորմովն ի սնարից անկողնոյն , եւ սպառնայր հարկանել զայրն ։ Զահի հարեալ առնն՝ ընկենոյր զդաշոյնն եւ խնդրէր շնորհս ։ Յետոյ ապա բռնադատեալ մտանել ի բանտ՝ ի վեր հանէր զորս թելադիրն լեալ էին նմա ։

Զմտաւ ածէր կոմսն թէ զինչ էր որ զդղրդիւնն զայն գործեաց , եւ զարթոյց զնա ի քնոյ ։ Իբրեւ յածէր զաչս իւր շուրջանակի՝ ետես զի ընկեցեալ էր մանկանցն ի գետին կեղեւ ընկուզոյ յորոյ վերայ կոխեալ էր չարագործն ։ Զարմացաւ կոմսն եւ ասէ· Խնամովքն Աստուծոյ կեղեւ մի ընկուզոյ ապրեցոյց զիս , եւ զանզգամն մատնեաց սրոյ արդարութեան ։

---

## 5

### ԷՇՔ ՍԱՒՈՒՂԱՑ

Արք երեք յԱմստերտամ քաղաքէ յուղի անկեալ ի միասին երթային ի գիւղ ուրեք վասն իրիք գործոյ ։ Զճանապարհայն տեսանեն շինական մի զի գայր առ նոսա շտապաւ , եւ յերեսացն տեսլենէ թուէր իմն տխմար եւ պանդոյր քան զամենայն մարդիկ ։ Ասեն արքն երեքին ցմիմեանս , «Եկայք ծաղր արասցուք զդովաւ» . Զայս ասեն , եւ հեռացեալ կան ի

վերայ ճանապարհին բացագոյն ի միմեանց իբրեւ քարընկէց մի ։ Իբրեւ մերձենայ շինականն առ առաջինն՝ լսէ ի նմանէ զայս բան․ «Ողջ լեր, հայր Աբրահամ» ։ Առ այս բան շինականն տայ նմա ողջոյն նշանացի գլխովն, եւ ասէ «Ողջ լեր» ։ Սակաւ ինչ հեռագոյն անտի տեսանէ զմիւս եւս ընկեր առաջնոյն, որ ասէ ցնա․ «Ողջ լեր, հայր Իսահակ» ։ Սմա եւս զնոյն պատասխանի առնէ շինականն ։ Անտի ապա յառաջ մատուցեալ գտանէ զերրորդն որ ասէ ցնա․ «Ողջոյն քեզ, հայր Յակոբ» ։ Յայնժամ ի վերայ հասեալ շինականին խորհրդոյ արանցն ասէ ցնա․ «Ծարիք, տեարք, չեմ ես Աբրահամ, ոչ Իսահակ եւ ոչ Յակոբ, այլ Սաւուղ եմ որդի Կիսեայ, եւ ելեալ եմ ի խնդրել զէշս հօր իմոյ․ այլ բարէ, մերքն մատակք էին, զոր եսն գտանեմ՝ արուք են ։

---

## 6

### ՅՈՎՍԷՓ ԿԱՅՍՐ

Յովսէփ Բ․ Կայսր Գերմանացւոց յառաջնում ճանապարհորդութեանն զոր արար յանծանօթս՝ հասեալ ի կայան մի սուրհանդակաց չգտանէր ձի յասպատանին ի փոխել զերիվարսն ։ Սուրհանդակապետն ասէ ցայրն անծանօթ սպասել սակաւիկ մի՝ խոստովան լեալ եթէ յուղարկեաց զնժոյգսն բերել զազգականս եւ զբարեկամս իւր հրաւիրեալս ի կնիք որդւոյն ։ Զբանիւք անկեալ Կայսեր ընդ առնն եւ գտեալ զնա ողջամիտ եւ հայրենասէր՝ յայտ արար նմա եթէ ցանկայ լինել կնքահայր մանկանն ։ Սուրհանդակապետն զարմանայր ընդ առաջարկութիւնն,

բայց եւ այնպէս նախամեծար արարեալ զայրն անծանօթ քան զիւր հօրեղբօր ուստր որ հողագործ էր՝ հաւանեալ առ յանձն ։ Ցերթալ նոցա յեկեղեցին, սկիզբն լինէր պաշտամանն ։ Ասէ Երէցն կնքատու ցկայսրն ․ « Զինչ անուն է քո » ․ եւ նա ասէ « Յովսէփ » ։ «Եւ զինչ աւելի անուն է քո» , կրկնէ Երէցն ։ «Զինչ պիտոյ իցէ քեզ այդ ․ ինձ թուի թէ Յովսէփն անուն միայն շատ իցէ » ։ «Ոչ , Տէր» , ասէ Երէցն ․ «կամիմք գիտել եւ զանուն յորջորջանաց ազգատոհմին քո» ։ Եթէ այնպէս իցէ» , ասէ յայնժամ Կայսրն, «Անուն յորջորջանաց իմոց է Յովսէփ Բ․ Կայսր Գերմանացւոց » ։

Երէցն եւ որ անդն կային յապուշ հարան եւ սուրհանդակապետն անկաւ առ ոտս Թագաւորին որ յարոյց զնա մարդասիրութեամբ , եւ մեծապարգեւ մեծարեալ զայրն , խոստացաւ չմոռանալ զյիշատակ իւրոյ սանուն ։

---

## Դ

## ՄԵԾՈՒԹԻՒՆ ԱՆՁԵԱՆ

Տարագիր լեալ Դիոնի ի Սիրակուսացւոց ապաշնորհաց՝ պատսպարան լինէր ի քաղաքն Մեգարացւոց ուր Պրէոդոտոս ոմն վարէր զիշխանութիւնն ։ Իբրեւ դէպ լինէր սմա յաւուր միում պահանջել իրաւունս վասն անիրաւութեան իւիք եղելոյ նմա յումեքէ , երթեալ յապարանս իշխանին խնդրէր յանդիման լինել նմա , այլ ոչ ումեք լինէր փոյթ դնել մեծարանս երեսաց առնն մեծի՝ ըստ արժանի անձին նորա մեծութեանն ։ Յետ հարուստ մի աւուրց սպասել նմա՝

տուաւ պատասխանի եթէ զբաղեալ Պրէաղոտայ ի գործս կարեւորս չկարէ առնել նմա ընդունելութիւն զայն օր։ Բարեկամք Դիոնի որ ընդ նմա էին՝ զչարչէին զի իբրեւ ընդ անարգի ումեք վարեցան ընդ առնն սքանչելւոյ, որ մինչդեռ յիշխանութեան էր՝ հանապազ մարդասիրութեամբ գնայր ընդ որս դիմէինն առ նա։ Այլ Դիոն առանց տրտնջելոյ ասէր ցնոսա հանդարտութեամբ. Բարեկամք, թերեւս եւ իմ զնոյն արարեալ իցէ, մինչդեռ իշխանն էի ի Սիրակուսա։ Յետ ժամանակաց այրս այս մեծ ազատէր զհայրենիսն ի Դիոնիսեայ բռնաւորէ որ հարստահարէր զերկիրն, եւ հաստատէր միւսանգամ զխաղաղութիւն եւ զարդարութիւն. այլ սպանաւ նա ի Կալլիպոսէ Աթենացւոյ որ հիւր եւ բարեկամ նորա էր։ Իսկ Դիոնեսիոս Բռնակալ, աքսորեալ ի Սիրակուսայ, եկն բնակեցաւ ի Կորնթոս ուր լեալ դաստիարակ՝ մեռանէր յաղքատութեան։

---

## 8

### ԳՈՂ ԵՒ ԽՈՁ

Արք երկու որ շրջեցուցանէին արջ մի՝ հասեալ յաւուր միում ընդ երեկս կարի անագան ի շէն ուրեմն, լուծան յիջեւանի ուրեք ուր կամէին ագանել զայն գիշեր։ Պանդոկապետն որոյ այն ինչ վաճառեալ էր զիւր խոզ պարարակ՝ փակեաց զարջն ի գոմ անդր ուր զխոճկորն կայէր յառաջագոյն։

Զմէջ գիշերաւ գող մի, որ չէր տեղեակ որում դիպեցաւն ցերեկ, սպրդեալ ի պանդոկի անդր կամէր տանել զխոզն պարարակ։ Մեղմով իմն բացեալ

զղուեն զումին մտանէ ի ներքս առ խարխափ ի մթան , եւ փոխանակ խոզին զոր գտանել կարծէր՝ բուեն հարկանէ զարջոյն , որոյ յոտն կացեալ ահագին իմն աղաղակաւ արկանէ զերկոսին թաթուլսն յայրն եւ այնպէս խիղդս արկեալ փակ ճոյժ լինի զնմանէ , մինչեւ չկարել առնն շարժել ։

Ահն եւ տագնապ եռուն նմա բառնալ զաղաղակ գուժի եւ լալոյ , մինչեւ յաղմկէ անտի նորա զարթնուլ ընդոստ ամենեցուն որ 'ի պանդոկին ննջէին . եւ հազիւ ուրեմն հասանէր նոցա թափել ի ճիրանանց գազանին զայրն յարիւն եւ յապաժոյժ համակեալ ։ Այլ այն ինչ զերծեալ նորա ի վտանգէ անտի , մատնէր ի ձեռս արդարութեան ։

9

ՊԱՇՏՕՆԵԱՅ ԱՆԿԵԱԼ ՅԻՇԽԱՆՈՒԹԵՆԷ

Ումն ի թագաւորաց Պարսից ցասուցեալ ընդ գըլխաւորն ի պաշտօնէից իւրոց՝ ընկենոյր զնա յիշխանութենէն եւ զայլ ոք փոխանակ նորա կացուցանէր ։ Սակայն շնորհս իմն առնելոյ վասն՝ թողոյր նմա ընտրել վայրս ինչ ուր բնակիցէ խաղաղութեամբ հանդերձ ընտանեօքն , եւ զամենայն ստացուածսն եւս շնորհէր նմա ։ Այլ պաշտօնեայն ասէ ցթագաւորն . «Զի՞ պիտոյ իցեն ինձ այսուհետեւ ինչքն զոր կամի արքայ շնորհել . աղաչեմ տուր հրաման առնուլ զամենայն յինէն . այլ հաճոյ թուեսցի տեառն իմում առնել զոր խնդրեմն ։ ցուցցի ինձ յիշխանութեան արքայի գիւղ մի կամ աւան անշէն եւ ամայի , զոր խնամեալ արարից շէն մարդաշատ ։ Յանժամ

հրաման տայր Թագաւորն հանել խուզակս ի խնդրել վայրս ինչ ըստ ցանկութեան պաշտօնէին. այլ որք առաքեցանն ի Թագաւորէն՝ եկեալ ետուն համբաւ թէ չիք յամենայն իշխանութեան արքայի գիւղ կամ աւան եւ կամ վայր ինչ բնակութեան որ իցէ ամայի կամ անմշակ ։ Յայնժամ ասէ Պաշտօնեայն ցԹագաւորն. Քաջ իսկ գիտէի, արքայ, թէ չիք բնաւ վայր աւեր եւ ամայի յամենայն երկրին զոր վարել յանձն լեալ էր ինձ. եւ ի խնդրել իմում տեղի ինչ այնպիսի՝ իմ խորհուրդ այն էր, տալ պատճառս զի անձամբ հասու լիցիս թէ զիարդ շէն եւ ծաղկաւէտ դարձուցանեմ այսրէն զերկիրս ի ձեռս քո ։ Իցիւ գտանէր Տէրդ իմ այլ պաշտօնեայ որում մարթ էր ապա տալ զնոյն վկայութիւն ։

---

## 10

### ՕՐԻՆԱԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Յետ պարտութեան Կարոլոսի ԺԲ.ի ի Պետրոսէ մեծէ առ Բուլդաւայ, զինականք երեք Սուետացիք ետուն զարմանալի ինչ օրինակ հայրենասիրութեան ։ Ընդ առնուլ նոցա համբաւ եթէ պարտեցաւ արքայ Սուետաց եւ է ի մեծի կարօտութեան՝ ժողովեալ զամենայն ինչ որ աւելորդ էր նոցա՝ կարասիս, հանդերձս, գարի, խոտ եւ անասունս, չոգան վաճառել զնոսա ի միում ի մօտաւոր քաղաքաց անտի, եւ մին ի նոցանէ առեալ զգինս վաճառոյն եւ հեծեալ ի ձի աճապարեալ հասանէր ի բանակ անդր Սուետաց ։ «Ո՞ւր իցէ արքայ», գոչէ նա ի հեռուստ առ պահապանսն. «մուծէք զիս առ նա, ունիմ

ինչ ասել ցնա» ։ Մի ոմն ի պաշտօնակալացն անսացեալ նմա, ածէ զնա առաջի Կարոլոսի ։ Ի մտանել շինականին առ թագաւորն՝ անդէն ի գունձս անկեալ հանէ ի ծոցոյ իւրմէ քսակս երկուս ոսկւոյ, եւ մատուցանէ արքայի՝ յայտ արարեալ նմա թէ զիարդ ածեալ էր նորա ի մի վայր զայն գումար հանդերձ երկոքումբք ընկերօքն ։ Ասի եթէ յարտասուս հարաւ Կարոլոս ընդ պատմութիւն առնն, եւ ասէ. «Ոչ ոք երբէք յազնուականաց իմոց եցոյց այսպիսի ինչ հանդէս հաւատարմութեան»։ Եւ խոստանայր շինականին ամբառնալ զնա յազնուականութեան աստիճան իբրեւ ի հատուցումն հայրենասիրութեան նորա. այլ ի չառնուլ նորա յանձն, եւ յընտրելն մանաւանդ կալ յիւրում աստիճանին ընդ վաղնջուց բարեկամս իւր, տայր թագաւորն գրել առաջի իւր հրովարտակ որով ի սպառ ապահարկ առնէր զբարեկիր շինականն եւ զերկոսին ընկերս նորա, եւ ի հանդէս իւրոյ շնորհակալութեան խլեալ թելս ինչ ի մօրուացն դնէր ընդ մոմով կնքոյն որով կնքէր զհրովարտակն ։

---

## 11

### ՓԱՐՈՍՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՅ

Աշտարակն Փարոսի որ շինեցաւ հրամանաւ Պտղոմեայ եղբայրասիրի՝ էր ի թիւ եօթանց հրաշակերտաց աշխարհի, եւ այլ եւս աշտարակք սմին նմանք որ յետոյ շինեցան յառաջնորդութիւն նաւավարաց՝ կալան զնոյն անուն ։ Էր նա շինուած մեծ չորեքանկիւնի ի սպիտակ կճէ բազմայարկ, եւ ունէր տանիս յորոյ վերայ վառէր զամենայն գիշեր լապտեր մեծ

*զոր մարթէր նաւավարաց բացուստ ի բաց տեսանել · Ճարտարապետն որ արկ զձեւ շինուածոյն եւ հան ի գլուխ զգործն՝ կոչէր Սոստրատոս ։ Ցանկացեալ սորա թողուլ զհամբաւ ճարտարութեան իւրոյ առյաւէտ, եւ ոչ իշխեալ ընդ անուամբ թագաւորին կցել զիւրն՝ խորհեցաւ այսպիսի ինչ հնարս ։ Ծեփեալ բոլոր զճակատ շինուածոյն՝ գրէր ի վերայ բանս գովութեան առ թագաւորն, եւ ի ներքոյ ծեփածոյն դրոշմէր ի վիմի միւս եւս գիր ։ Յետ իբր դարու միոյ ի թօթափել ծեփոյն՝ ջնջեալ անհետ լինէր որ ինչ զՊտղոմեայն գրեալ էր, եւ երեւէր միայն որ ի ներքոյն էր դրոշմեալ մեծամեծ նշանագրօք այսպէս · «Սոստրատոս Կնիդացի, առ դիսն կենարարս, յօգուտ նաւարկութեան» ։*

---

## 12

### ԴՐՕՇ

*ԴԵՐՁԱԿ ոմն անկեալ յախտ մահացու, տեսանէ զարմանալի ինչ յանուրջս ։ Թուէր իմն նմա կալ ի վերջնում ատենի, եւ հրեշտակն մահու կայր եւ պարզէր առաջի նորա դրօշ մի ահագին, կազմեալ ի կտորոց ազգի ազգի կերպասուց զոր նորա խաբեալ էր ընդ ժամանակս ժամանակս յիւրոց յաճախորդաց ։ Ի նմին ժամու թուի նմա մխել ի դժոխս · ընդ այս տեսիլ զարհուրեալ առնն՝ յառնէ ընդոստ ի քնոյն համակ ի քրտան ցուրտ ։*

*Զայս երազ համարեալ նորա իբրեւ ազդ իմն նմա յաստուածակոյս կողմանէ անտի՝ դնէ ուխտ չգողանալ այլեւս, եթէ ապաքինեսցի ի հիւանդութենէն ·*

Յետ սակաւ միոյ արդարեւ ողջանայ ի ցաւոցն, եւ զի չէր վստահ յիւր առաքինութիւն, պատուէր տայ միում ի գործաւորաց իւրոց յուշ առնել նմա զդրօշն, յորժամ եւ դէպ լիցի նմա հանդերձ ինչ հատանել։ Առ ժամանակ մի կացեալ առնն հաւատարմութեամբ յուխտին, յաւուր միում ի հատանել նորա հանդերձ մի ի կերպասէ իմեքէ մեծագնոյ՝ փորձեալ յոգւոյ անտի ագահութեան տեղի տալ ժլատութեան, եւ գողանալ մասն ինչ ի կտաւէն։ Ի զուր ազդ առնէ նմա այրն յուշարար, ածել զմտաւ զդրօշն։ «Կարի իմն ձանձրացուցաներ զլսելիս իմ դրօշիւդ, այր դու», ասէ ցնա դերձակն. «ի դրօշին զոր տեսի յերազի՝ չգոյր կերպաս այս գունակ»։

---

## 13

### ՎԱՐՍԱՎԻՐԱՅՔ

Վարսավիրայ ումն որոյ գործ էր վիրաւ զմօրուս եւ հերս փոքրել՝ առ յինքն կորզել յաճախորդս բազմամըս, ետ նկարել արտաքոյ խանութին իւրոյ ի վերայ որմոյն այր մի, որոյ անկեալ ի ծով մերձ էր ի հեղձնուլ. եւ այլ ոք գթացեալ ի նա՝ գայր ի լիւղ հանել զնա ի ջրոյն, այլ ի բուռն արկանել զհերացն որ չէին ճշմարիտ՝ զխակն եւեթ մնայր ի ձեռին. իսկ այրն զոր փրկելն կամէր՝ ընկղմեալ լինէր ծովամոյն։ Ի վերայ պատկերիս այսորիկ էր գրեալ մեծամեծ նշանագրօք այսպէս. «Վա՛յ որոց պխտակ են հերք»։ Սովին յայտ իմն առնել կամէր թէ սուտ վարսք վնասակարք են։

Այլ ումն վարսաւիրայ որոյ արուեստ էր յօրինել

վարսս սպիտակս՝ իբրեւ տեսանէր զի բազումք հաւանեալ յօրինակէ անտի արուեստակցին իւրոյ ի բաց կային յարկանելոյ վարսս սպիտակս ի կէր , հնարեցաւ այսպիսի ինչ առ առնուլ զառաջս վնասուն եղելոյ նմա . Տայր եւ սա նկարել նոյնպէս ի ճակատ խանթին իւրոյ զԱբիսողոմ կախեալ ի հերացն զծառոյ , եւ ի ներքոյ գրէր զայս օրինակ . « Եթէ սպիտակ էին հերքն » ։

Պատմութիւնն չասէ ինչ զելից այսր նորանշան միջսւթեան . այլ այժմու սովորութիւնս ցուցանէ թէ վարսք սպիտակք խափանեցան . այլ ապաքէն յարիցեն միւսանգամ ։ Պարտ է երկայնամիտ լինել . իբրեւ զսա բազում նշանս գործեաց նորաձեւութիւն ։

---

## 14

### ՀԱՆՃԱՐԵՂ ԽՐԱՏ

Իշխան ումն մանուկ մեծազօր՝ թագաւորէր ի հընդիկս , եւ զի էր ագգ եւ ամբարտաւան յոյժ , բազում վնասս գործէր անձին իւրում եւ հպատակաց՝ իւրոց ։ Ի զուր ազդ առնէին նմա բարեկամք նորա թէ քան զամենայն զօրութիւն մեծ այն է թագաւորի՝ շահել զսիրտս հպատակաց իւրոց ։ Բազումք որ զայս խրատ ետուն նմա՝ յաչաց ելին եւ անկան ընդ պատժովք ։ Այր ումն իմաստուն կամեցեալ հաւանեցուցանել զթագաւորն առանց գրգռելոյ զնա ի ցասումն՝ հնարեաց զխաղն ճատրակի , ուր թագաւորն, թէպէտ քան զայլ անձինս նշանաւոր , չէ իմիք ձեռնհաս առանց օգնութեան հպատակաց եւ զօրականին ։ Մանուկ արքայն , հանճարեղ ի բնէ , ի միտ առեալ

զզօրութիւն խրատուն փոխեաց զվարսն , եւ այնպէս առ զառաջս աղէտիցն որ մօտ առ դուրս հասեալ կային ։

Կամեցեալ երախտահատոյց լինել առնն որ գտակն լեալ էր խաղուն , եհարց նմա զինչ խնդրիցէ ընդ այնր ի վարձ. եւ նա խնդրեաց տալ նմա այնչափ հատս ցորենոյ որչափ էին խորշք ի ճատրակին, պայմանս եդեալ զի կրկնեսցի միշտ թիւ ցորենահատիցն յառաջնմէ խորշէ անտի մինչեւ ցվերջինն որ է վաթսներորդ եօթներորդ. Թագաւորն շնորհեաց նմա առժամայն զխնդիրն մինչչեւ քննեալ զնա. այլ ապա ի հաշիւ արկեալ գտանէր զի համօրէն հունձք մեծի աշխարհին Հնդկաց չէին բաւական ի կատարել զոր խոստացաւն ։ Աստի պատճառս առեալ իմաստնոյն եցոյց մանուկ թագաւորին թէ որչափ կարեւոր է առն թագաւորի կալ զգոյշ յորոց շուրջն են զնովաւ, եւ չտալ նոցա զեղծանել բարերարութեամբն զոր առնէ նոցա ։

---

## 15

### ԵՐԿՈՔԻՆ ԲԱՐԵԿԱՄՔ

Ի մէջ երկուց դասուց աշակերտաց մեծի դպրոցին որ ի Ուեստմինսդէր վարագոյր մի էր անջրպետ ։ Մին յաշակերտաց անտի փոքունց յաւուր միում պատառեաց զվարագոյրն յանդէտս. եւ զի էր մանուկն ի բնէ հեզ եւ երկչոտ , դողայր թէ գուցէ ընկալցի պատուհաս ի վերակացուէն որ էր այր խիստ ։ Մին յաշակերտակցաց անտի մանկանն , երիցագոյն քան զնա տիօք , հանդարտեցոյց զնա

խոստացեալ նմա յիւր վերայ առնուլ զյանցանսն , եւ անձամբ կրել զպատուհասն։

Յետ ոչ սակաւ ամսոց յարեաւ պատերազմ ընտանի յԱնգղիա , եւ երկոքին մանկունքս , լեալ հուժկու , գտանէին կուսակիցք մէն միում կողման . մին էր ի կուսէ ընկերահաշտից , եւ միւսն յարքունի թերէ ։ Յետ յաղթելոյ մերթ միոյ կողման մերթ միւսոյն , յաջողեալ ընկերահաշտիցն՝ ձերբակալս առնէին զամենայն պաշտօնակալս զվերինս զօրացն արքունի ։ Կարգէին վասն նոցա դատաւորք , եւ աշակերտն երկչոտ որ զհետ երթեալ էր դատաւորութեանն՝ լինէր մին ի դատաւորաց անտի ։ Լուեալ նորա ի մէջ անուանց այնոցիկ զորս ածէին՝ զանուն իւրոյ աշակերտակցին եւ բարեկամի զոր չէր նորա տեսեալ յորմէ հետէ ելեալ էր նոցա ի դպրոցէն , խանդաղատեցաւ ոգի նորա . հայեցաւ ի նա ուշի ուշով , թուեցաւ նմա թէ նա իցէ , եւ հարցեալ ցնա ինչ ինչ ստուգեաց թէ արդարեւ նա ինքն էր, եւ առանց ծանօթս տալոյ նմա՝ իսկ եւ իսկ անկանէր ի ճանապարհ երթալ ի Լոնտոն ։ Անդ ազդեցութեամբ եւ ջանիւք զոր արկ ի կիր առ որս անկ էր՝ յաջողեցաւ նմա ապրեցուցանել զիւր բարերարն ի պատուհասէն յորմէ ոչ այլ ոք յընկերաց անտի նորա կարաց զերծանել ։

---

## 16

### ԲԵԻՆԵԹ

Շինական ոմն համեստեալ զգրաստ իւր երթալ ի քաղաքն , տեսանէր զի մին ի բեռաց անտի ուտից երկփարին ալակասէր ․ եւ զի աճապարէր երթալ , առէ

ընդ միտս իւր. Զինչ վնաս ինձ կամ շահ եթէ բեւեռ մի յոտս երիւարին իցէ աւելի կամ պակաս։ Զայս ասացեալ անկաւ յուղի։ Զճանապարհայն երկաթ մի ոտից գրաստուն խախտեալ անկանէր. «Եթէ գոյր աստ ուրեք պայտառ, ասէ, մարթ էր տալ դնել ի տեղի իւր զերկաթն. այլ զի չիք ոք այնպիսի աստ, մարթ է ծիոյն միւս երիւքն հանել զճանապարհն ի գլուխ»։ Այլ քարինքն որ ի վերայ ճանապարհին՝ եղին վէրս ոտնասնոյն որ սկսանէր խուշտալ ի գնալն։ Իբրեւ այնպէս երթային կաղս ի կաղս յամրագնաց, գողք երկու ելին յանկարծ ըստ թաւուտն տեռազերծ առնել զայրն որ, առ կաղալ երիվարին ոչ կարացեալ խոյս տալ արագ, անկանէր ի բուռն աւազակացն, որոց հանեալ ի նմանէ զգրաստն հանդերձ պայուսակաւն եւ որ ինչ էրն ի նմա՝ թողուին զնա երթալ։ Ստիպեալ Նորա, թափուր յամենայնէ դառնալ ի տուն՝ ասէ ի միտս իւր տրտմեալ. «Զիարդ մարթէր ինձ ածել զմտաւ, եթէ առ ի չգոյէ բեւեռի միոջ. կորուսանելոց էի զգրաստ իմ։

---

## 17

Մի ոմն յաւագաց անտի Ռուսաց առեալ զիշխանութիւն միոյ ի գաւառաց տէրութեանն, ի շրջել իւրում այցելութեամբ ընդ գաւառն՝ հասեալ 'ի գիւղ մի տեսանէ այր մի ալեւոր որոյ նստեալ առ դրան խղկան միոջ որ սակաւ ինչ հեռի էր ի շինէն յարտասուս հարկանէր։ «Զի՞ է քեզ այր դու», ասէ ցնա աւագն, «վասն էր տրտմեալ ես եւ յարտասուս հար-

եալ» ։ «Տէր», ասէ ծերունին յոգւոց հանելով, «լամ զի հայր իմ գան հարեալ հան զիս արտաքս» ։ Զարմացաւ իշխանն ընդ այս բան եւ իջեալ վաղվաղակի ի ձիոյն մտանէ ի ներքս ։ Այն ինչ եղեալ նորա զոտս ի գաւիթ տանն, տեսանէ անդ միւս եւս ալեւոր հինաւուրց քան զառաջինն, որ եւ թուէր սրտմտեալ ։ «Ընդէր խռովեալ ես, ով դու», ասէ ցնա գաւառապետն ։ «Մի հարցանէր, տէր», ասէ ծերն. «որդին իմ որ կայ առ դրան, առ անհոգութեան ընկէց զհայր իմ ծերունի որոյ բեկեալ զողն նստեալ կայ» ։ Ընդ խաղ իմն համարեցաւ գաւառապետն զասացեալսն, այլ վաղվաղակի ծանեաւ թէ չէին ծաղու բանքն, քանզի մուծեալ ի սենեակ մի ետես անդ ի վերայ գահոյից մերձ ի կրակարանն միւս եւս այր անցեալ յոյժ զաւուրբք որոյ թիկունքն կորացեալ էին առ ծերութեանն, այլ էր նա տակաւին առոյգ եւ յուժի ։ Արդարեւ, ասէ ի միտս իւր գաւառապետն, ի տոհմէ նահապետաց է որեարս ։

---

## 18

### ՋՈՐԻ

Բժիշկ ոմն ելեալ ի ջորի իւր երթայր այց առնել հիւանդի որոյ էր խաղաւարտ ի կոկորդին ։ Հասեալ նորա ուր դէմն եղեալ էր, եւ իջեալ յերիւարէն, հանդիպէր անդ առաջի դրանն միում ի ծանօթից իւրոց ընդ որում սկիզբն առնոյր խօսել ։ Ցերկարել բանիցն թողոյր զսանձն, եւ ջորւոյն գտեալ բաց զդուռն տանն դիմէ ի ներքս ։ Խուց հիւանդին էր, ասէ պատմութիւնն, ի վերայ գաւթին եւ թողեալ

բաց կլոռվ չափ առ ի տալ մուտ օդոյն ի ներքս ։ Հայեցեալ գրաստուն այսր անդր, թերեւս ի գտանել ինչ ուտել, եւ տեսեալ զդուռնն բաց, սանձաւ թամբաւ մտանէ ի սենեակ անդր հիւանդին, որոյ լուեալ ոտնաձայն եւ համարեալ եթէ բժիշկն իցէ, առանց դառնալոյ յայսկոյս ձգէ ի նա զբազուկ իւր ի զննել ։ Տեսեալ ջորւոյն բազուկ մի կարկառեալ առաջի իւր առանց գիտելոյ զպատճառն, ատամամբքն ունի զդաստակէն ։ Զահի հարեալ հիւանդին դառնայ յայսկոյս, եւ տեսեալ զջորին, իջանէ ընդոստ յանկողնոյն հանել զգրաստն արտաքս. այլ ի սաստիկ ծաղուէն խաղաւարտն որ ի կոկորդին՝ պայթէր։ Մինչ այս մինչ այն հասեալ ի վերայ բժշկին կամէր խարազանաւ հարկանել զջորին. այլ հիւանդին ձայն բարձեալ ասէ. «Մի ինչ վնաս առներ անասնոյդ, տէր բժիշկ, զարմանալի իմն է պատահարս. ջորիդ այդ բուժեաց զախտն որում թերեւս չէր մարթ արուեստին առնել դարման ։ Այսուհետեւ եթէ դէպ լիցի անկանել ինձ յայսպիսի ինչ ախտ, առաքեա զջորիդ, եւ դու մի ինչ աշխատ լինիր գալ անձամբ առ իս ։

---

## 19

### ԳԱՆՁ ԹԱՂԵԱԼ

Պատմի եթէ հողագործ ոմն որ յարգէր յոյժ զաշխատութիւն, կամեցեալ մերձ ի մահ իւր ցուցանել որդւոյ իւրում արդեամբք թէ քանիօն օգտակար է է աշխատութիւն, կոչէ զնա առ իւր, եւ որպէս թէ գաղտնի ինչ յայտնիցէ նմա, ասէ. «Որդեակ, յանդի մերում զոր մշակեմք՝ կայ գանձ թաղեալ, այլ թէ

յորում վայրի իցէ՝ չգիտեմ» ։ Զայս ասացեալ խրատ տայր նմա առանց ումեք ի վեր հանելոյ , անձամբ անձին բրել զարտն ։ «Այսպէս արարեալ» , ասէր , «հաւաստեաւ գտցես զգանձն» ։ Մեռանի այրն , եւ որդին յուսով գտանելոյ զգանձն թաղեալ , առնու բահ եւ բրիչ , եւ աշխատեալ աւուրս բազումս բրէ զանդն ծագէ ի ծագ , եւ ոչ հանդիպեալ գանձուն մեկնի սրտառուչ եւ յուսաբեկ ։

Այլ երկիրն այսպէս վարեալ եւ ցանեալ տայ ի ժամանակի հնձոց արդիւնս առատ , զոր քաղեալ մանուկ հողագործին եւ համբարեալ ի շտեմարանս՝ մեծանայր յոյժ ։ Յայնժամ ի միտ առնոյր եթէ գանձըն զորմէ ասէր հայրն՝ աշխատութիւնն իսկ էր ։

[1]n.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0036085

A I 1995

ՑՈՒՑԱԿ ԳՐԵԱՆՑ

# ԳՐԱՏԱՆ ՓԱՐԻ

| | | |
|---|---|---|
| Բառգրքուկ .................... | 1 ֆրք. | 50 սնդ. |
| Գործնական Քերականութիւն ..... | 2 » | » |
| Դասարան մեծ *քառբոլիկ* .......... | 5 » | » |
| Դասարան փոքր .................. | » | 30 » |
| Դստերք Առաքինիք թղթակազմ ..... | » | 30 » |
| Եղիշէ ......................... | 2 » | 50 » |
| Եզնիկ ......................... | 1 » | 75 » |
| Զէյթունցիք եւ Լուսաւորչական Հայք | » | 50 » |
| Ընդունելութիւն Ընծայի (Կրկռիկ) .. | 2 » | » |
| Ընդարձակ Թուաբանութիւն Հատ. Ա. | 6 » | » |
| Ընդարձակ Թուաբանութիւն Հատ. Բ. | 6 » | » |
| Խնդիր միութեան հայոց .......... | 1 » | » |
| Հատընտիր Քաղուածք Հատ. Ա...... | 2 » | 50 » |
| Համառօտագոյն Բառարան ........ | 2 » | 50 » |
| Համառօտ Թուաբանութիւն ....... | 1 » | 25 » |
| Նեռն կամ Կատարած Աշխարհի ... | 2 » | » |
| Նարեկ մեծ ..................... | 2 » | 25 » |
| Նարեկ փոքր բազմապատկեր ...... | 3 » | » |
| Սաղմոս բազմապատկեր .......... | 1 » | 50 » |
| Սիլլիօ Բէլլիքօ .................. | 2 » | » |
| Տքնութիւնք Հայրենասիրի ......... | » | 30 » |
| …իկիքս եւ Պաւլինէ թղթակազմ... | 2 » | » |